Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման** (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh** (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

**Մեր տվյալները – Наши контакты - Our contacts**

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

8421
Շ-30

ԼԵՎՈՆ

# ՇԱՆԹ

# ԼԵՎՈՆ ՇԱՆԹ

# ԸՆՏԻՐ ԵՐԿԵՐ

«Հայաստան» հրատարակչություն
Երևան 1968

# Դ Ա Ր Ձ

վէպ

## ԴԱՐՁ

### Ա

Ցորեկվան տաքը դեռ կոտրված չէր բոլորովին ու ձին դժվար ու ծանր կբարձրանար։

Ճամփան պինդ փակած էր ձորի՝ ձախ պատին ու պատին հետ միասին ինքն իր կողին վրա կծռվէր չերքեզի սուրին պես. ու միևնույն ժամանակ քիչ-քիչ վեր կսողար, միշտ վեր, ձորի հատակեն դեպի Խծկոնքի վանքը։

Մինչ ձիավորը քրտինքը սրբելով՝ ճամփու յուրաքանչյուր կոր տալուն՝ ձիուն վրայեն դեպի առաջ կերկարեր կիսանդրին վանքին գմբեթները նշմարելու հույսով։

Քանի-քանիցս մեջ երիտասարդ մըն էր ան. ճերմակ տաքե պարզ հագուստ մը վրան. ճերմակ ալ քոլոզ մը գլխուն, որուն տակեն դուրս կցայտեին գանգուրի մոտեցող սև առատ մազերը. մորուքի տեղ փոքր շեկ փունջ մը ղանչին. խոր միջահասակ ու նիհար. ղուշ մը կենդանի, արտահայտիչ աչքերով, որոնք կսահեին հիմա ձորի երկու վայրի պատերն ի վեր, որոնց վրա երկինքի սաքկապույտ կտոր մը եկեր իր վրանն էր քաշեր։

Թեթև ոլոր մըն ալ և վերջապես դեմն էր վանքը. հինգ մանրանկար եկեղեցիներ, գրեթե իրարու կից, իրարու թևի տակ, իրենցմե ամենեն մեծի շուրջը խռնված. և ատոնց փոքր ու փոքրիկ գմբեթներու ամբողջ երամը՝ շրջապատող ծառերուն միջեն վիզերնին վեր երկնցուցած՝ հետաքրքիր նայվածքով եկվորը կդիտեին։

Կարծես լեռնական հսկա ուրուր մը իր ձագերուն հետ, որ ձորի ձախ կուրծքին, հոն, դուրս ցցված ժայռոտ հարթակին վրա դրեր էր իր ամեհի բույնը ծառերու տրցակին մեջ։

*Ու շիտակ այդ ամենի բույնը կմտնէր հիմա ձիավորը՝ փընտրող նայվածքն իր չորս դին հածելով։*

*Եկեղեցիներուն ոտքը հին ու ցած պատ մը կերկննար, որուն դռան առջևը հազիվ էր հասած ձին, երբ գզգզված մազերով, երկարահասակ, բոբիկ ու գլխաբաց պատանի մը սեմեն դուրս նետվեցավ։*

*— Բարև՛, հայր-սուրբը վա՞նքն է։*

*— Հրամանք եա։*

*Ու մոտեցավ առավ ձիուն սանձը։*

*Երիտասարդը ցատկեց թամբեն վար ու մտավ արագ բակը, որու մեկ կողմը խումբի ավագ եկեղեցին էր, մյուս կողմն ալ մեկերկու հինկեկ հողե սենյակներ։*

*Եվ ճիշտ այդ սենյակներեն մեկուն դուռն էր, որ ճռաց հանկարծ իր ռնիներուն վրա ու սեմի շրջանակին մեջ երևցավ պարթև հասակով թիկնեղ ծերուկ մը։ Երբեմն սև, իսկ հիմա դեղինի ու կանանչի տարբեր աստիճանի բոլոր բաղադրիչ երանգները ներկայացնող կապա մը վրան. և խոշոր, կոշտ, ռունավոր երեսսրբիչը ձեռքը, որով իր մինչև կուրծքը հասնող ալեխառն մորուքը կչորցներ։*

*Կեսօրվան քունեն նոր ելած ու դեռ բոլորովին չսթափած ուղեղով կլվացվեր մեքենաբար, երբ իր մենության վարժված ականջը դեռ հեռուեն սմբակներու տրոփը լսեց. և ուխտավորներու հաճելի գաղափարը իր գլուխը վերջնականապես թարմացուց։*

*Եվ հիմա գոհ ու բարյացակամ դեմքի արտահայտությունով մըն էր, որ իր խուցի սեմեն դուրս ելավ հյուրին դեմ, երբ իր անվան հարցվիլը լսեց։*

*— Աստված օգնական, հա՛յր-սուրբ։*

*— Աստված օրհնե՛, որդիս։*

*Երիտասարդը ծռեցավ համբուրեց ծերուկի աջը. ու գրպանեն մեծկակ նամակ մը հանելով տվավ անոր։*

*Նամակը ըստ երևույթին ախորժելի տպավորություն չըրավ վարդապետին վրա. աջ ու ձախ դարձուց անգամ մը, դրավ մոտակա քարին ու ծանր շարժումով մը հանեց ծոցեն մաշված ու աղտոտ պատյան մը, որուն մեջեն ահագին ապակիներով հին ձևի ակնոցը դուրս քաշեց, ծանր-բարակ սկսավ ականջներուն անցընել։*

*— Ո՞ւրկե կուգաս հրամանքդ.— հարցուց այդ բարդ ու դըժվար աշխատանքի միջոցին։*



*— Էջմիածնեն, հա՛յր-սուրբ. շատ բարևներ ունիմ ձեզի։*

*— Հը՛մ, շնորհակալ եմ. ղրկող, բերող ողջ ըլլան։*

*Ու դեմքը ավելի խոժոռեցավ. այդ նամակեն լավ հոտ չէր գար։*

*Վարժ ձեռքով գրված տողերը կարդալու քանի մը իզուր ջանքերե վերջը՝ նամակը մեկնեց երիտասարդին.*

*— Մեկ հրամանքդ կարդաս, տեսնենք ինչ է գրած. ես ծերացեր եմ, աչքերս աղեկ չեն ջոկեր։*

*Տղան կարդաց. ընդամենը չորս-հինգ տող էր ու թունդ պաշտոնական դարձվածքներով շարադրված։ Երեք վարդապետացուներ քանի մը օր Խծկոնք էին մնալու, և Մայր-Աթոռի վարչության անունով կհանձնարարվեր, որ հայր-սուրբը անոնց ամեն կերպ լավ հյուրասիրություն ցույց տա։*

*Ծերուկի դեմքը քիչ մը պարզվեցավ. չարիքը իր կարծածին չափ մեծ չէր։*

*— Ա՞տ է բոլորը.— հարցուց տարակուսանքով։*

*— Այո՛, հա՛յր-սուրբ։*

*— Տիրացուներեն մեկը դո՞ւն ես։*

*— Այո՛. վարդապետացուներեն մեկը ես եմ.— սրբագրեց տղան «տիրացու» բառեն շատ չախորժելով։*

*— Իսկ մյուս տիրացուները ինչո՞ւ ետ մնացին.— շարունակեց վարդապետը կրկին իր ոճովը։*

*— Անոնք քանի մը օր ավելի ուշ պիտի գան։ Խնդիրն այսպես է. անգամ մը Շիրակը միասին պտույտ տալ ու Անի երթալ էր միտքերնիս. անոնք որոշեցին Կողբի ու Երվանդակերտի վրայով Ախուրյանին վեր ելլել. բայց այդ կողմերը ես անգամ մը եղեր եմ. վճռեցինք, որ ես Ալեքսանդրապոլի վրայով հոս գամ ու սպասեմ. վերջը հոսկե միասին երթանք Անի ու Հառիճի վրայով անցնինք Ապարան։*

*— Բայց Շիրակը պտույտ տալու միտքերնիդ ի՞նչ է.— հարցուց վարդապետը կասկածամտությամբ։*

*— Ա՛յնպես, շրջիլ անգամ մը։*

*— Չէ՛. երևի Էջմիածնեն պաշտոն մը կունենաք. հե՞.— ժըպտեցավ ծերունը ձախ աչքը կծկելով։*

*— Ի՞նչ պաշտոն, հա՛յր-սուրբ, մենք դեռ միաբան ալ չենք. դեռ երկու ամիս վերջը պիտի ձեռնադրվինք։ Իսկ Շիրակը պատիլը, է՜, մեր հայրենիքի հին պատմական կեդրոններեն է. կուզենք ծանոթանանք։*

— Հապա՛, նշանավոր վանքեր կան. մեր վանքն ալ շատ հին է ու շատ հայտնի։ Որքա՞ն ժամանակ հոս մնալ է միտքերնիդ։

— Մինչև ընկերնիս գան ու հանգստանան քիչ մը, մինչև հոս շուրջը պտտինք, երեք տասը օր կանեն։

— Լա՛վ.— ըրավ վարդապետը կոտրած ձայնով մը։

Եվ ակնթարթ մը թավ, ճերմակ ունքերը խաղցնելեն վերջը ավելցուց.

— Միայն թե, որդի՛ս, այս տարվան արտերը այնքան ալ աղեկ չեն հոս. անասուններն ալ տկար մը ինկած են. կաթերնիս ալ քիչ է. ասիկա աչքի առաջ ունեցեք. թեև ինչպես Աստծու ավանդեն ինչ որ ունիմ, ձեզմե չեմ խնայեր։ Ես ալ կա, որ վզիս արդեն ամբողջ տուն մը հյուր ունիմ. անշուշտ իրենց ուտելիքը իրենք կեփեն, բայց վերջապես...

Եվ չգիտեր ինչպես վերջացնե իր կրած բեռի ծանրությունը հնար եղածին չափ խոշոր ցույց տալու համար. թեև այդ «իր վիզը» ունեցած տունեն ամենեն ավելի ուրախ էր. նախ վստահ էր վերջը մեծկակ դրամական նվեր մը ստանալու. այլև հաճախ կստանար անոնց խոհանոցեն բաղրի կերակուրներ։

— Ի՞նչ հյուրեր են.— հարցուց երիտասարդը։

— Ալեքսանդրապոլե՛ն. ուսումնակա՛ն մարդ է. ոտքի ցավ ունի, եկեր է ծծումբի ջուրը լողալու. սիրուն կնիկ մը ունի. շատ լավ մարդիկ են. շատ ալ երևելի. ըսգուն բերնին մեջ կդառնա, բոլոր օրենքներուն խորը տեղյակ։ Ան որ չըլլար վերի դաշտի արոտատեղին արդեն հիմա ձեռքես խլած կըլլային Սալոյի լամուկները. անցած աշնան էր. դատարանը վերջապես մեր վանքին վրա վավերացուց։ Զի՛, շատ հայտնի մարդ է. կարելի է լսած ըլլաս՝ Նիկողոս Քանյան։

— Քանյա՞ն. էջմիածին ընկեր մը ունիմ Ալեքսանդրապոլեն՝ Քանյան. կարելի է անոնցմե է. վերջը երթամ տեսնեմ։

— Գնա՛, գնա՛. ուսումնական մարդ է.— վրա տվավ ծերունին աշխույժ ու գոհ շեշտով մը։

Այս խոսքերուն հետ առաջնորդեց տղան իր խուցին կից ցած տնակ մը ու դուռը ետ հրեց։

Փոքրիկ հողահատակ սենյակ մըն էր, ուր փայտե երկար թախտեն ու փտփտած հասարակ սեղանե մը զատ ոչինչ չկար։



— Ահա՛ աս ալ քեզի ձեր սենյակը. ես հիմա կերթամ մնացած պետք եղած բաները կուղարկեմ։

Երիտասարդը առանց ոչինչ ըսելու հայացք մը ձգեց իր շուրջը այդ գոլ, հող հոտող ու քիչ մըն ալ փտփտած խրճիթին մեջ. և խոյն մոտեցավ սենյակի միակ պատուհանը բանալու, որու ապակիին կեսը թուղթ էր փակցված։

Հազիվ պատուհանը բացած՝ կանգ առավ հափշտակված։

Սենյակը նստած էր սեպ ու ամեհի ապառաժի շրթունքին ու շիտակ ձորի դատարկության վրա կնայեր։ Հանդիպակաց ձորափեն ժայռի ահագին բեկորներ իրենց խոռոչներեն դուրս կնետվեին հոխորտանքով՝ հարու տալու սպառնալիքով մը իրենց մամռոտ գլուխները քիչ մը վար հակած. մինչ այդ դատարկ սպառնալիքին արդեն շատոնց վարժված, նույն այդ ժայռերու ոտքին, ցիրցան ծառերու խումբ մը հանգիստ կօրորեին իրենց վերին հյուղերը՝ վերադարձող ամպերներու զովության մեջ խլրտուն։ Ախորժ լռություն մը վերն ու շուրջը, որուն մեջեն ավելի թունդ ու ավելի հստակ շեշտակով կըբոշվեր գետակի միապաղաղ ու ճոռոմ մենախոսությունը, որը երբեմն կուլեին ծառերը անդրեն՝ ավելի ձանձրույթեն, քան հեգնելու համար։

— Հավնեցա՞ր.— հարցուց վարդապետը ժպտուն։

— Հիանալի՛ է.— բացականչեց տղան աշխույժ և դառնալով իր հյուրընկալին։— Այսպե՛ս ձորերուն մեջ, գետին վրա, ժայռերուն դեմ, ջրերու օրորին տակ. չէ, աս ալ ուրիշ բան է, ամբողջովին բնության գիրկը, ճշմարիտ, հա՛յր-սուրբ, կնախանձիմ ձեր կյանքին։

— Հը՛մ.— ըրավ վարդապետը անտարբեր շեշտով մը։— Հիմա հանգստացիր քիչ մը, հոգնած կըլլաս. ես ալ անգամ մը ելլեմ վեր արտը. տեսնեմ շան գյուղացիք ի՞նչ բանի են. մարդ որ աչքը վրանին չպահե՝ վանքը կկողոպտեն ծույլ անպիտանները։

Եվ սեմեն ետ դառնալով՝ պոռաց.

— Գրիգո՛ր, տիրացուին բեռները ձիու վրայեն ներս բեր ու ձիուն առջևը դարման նետե։

Ու իր բարձրագոչ հրամանին արձագանքը ձորի պատերուն մեջ դեռ չկտրված՝ մտավ իր խուցը։

Ասով ալ վերջացավ «տիրացու»-ի պաշտոնական ընդունելությունը։

## Բ

Վանքէն դուրս, վանքէն քիչ մը աւելի բարձր և բուն երեւոյթին նոր շինված հյուրասենյակներեն երկու ամենալավերը հատկացված էր Քանյաններուն։

Անբիծ ճերմակ սփռոցով փոքր սեղանին մոտիկ դեմ-դեմի նստած էին պարոն Նիկողոսն ու տիկինը ու պարոնի մոտն ալ նորեկ վարդապետացուն։

Սամովարը ուրախ կշնչեր սեղանին մյուս անկյունը, ու շոգին բաժակներուն վրայեն թեթև-կոր գիծով մը դեպի բաց պատուհանը կծռեր։

Մութը սկսեր էր խտանալ, տիկինը լամպը վառեց։

Երեսունհինգի սահմաններուն վրա լայնաթիկունք, նիհար, երկար մարդ մըն էր պարոնը։ Առատ սև մորուքը՝ վար կախված երկար բեղերուն հետ միասին՝ դեմքին խիստ արտահայտություն մը կուտար, որուն տարօրինակ կերպով կհակասեին ժպտուն ու բարի աչքերը։

Հազիվ կես ժամ կար, որ ծանոթացեր էին իրարու, միայն պարոն Նիկողոսի վարմունքին ու ձայնին մեջ այնպես պարզ չեշտ մը կար, որ պաշտոնական հարաբերության անմիջական մահն էր։ Խոսեր էին վանքի կյանքի, գյուղի ու իր եղբոր գավկի մասին. վարդապետացուի անցյալեն, ներկայեն ու անոր ապագայի դիտավորություններեն։ Դուրս էր եկեր, որ պարոնը ծանոթ էր մեր արդի գրական-հասարակական կյանքին. եղած էր նաև շատ մը վանքեր ու անձամբ գործ էր ունեցած բազմաթիվ հոգևորականներու հետ. և ինչպես կերևար, այնքան ալ մեծ համակրանք չուներ դեպի այդ դասակարգը։

Խոսակցության տաք ատենն էր, որ դուրսեն կանացի սուր ձայն մը լսվեցավ. ծիգ երգող ձևով մը տիկնոջ անունը կկանչեր.

— Մա՜րի։

— Եկո՛ւր, եկո՛ւր, ո՞ւր մնացիր այսքան ուշ.— պոռաց տիկինը դեպի պատուհանը դառնալով։

Երգ մը մռլտալով ստվեր մը անցավ արագ պատուհանին առջևեն և ակնթարթ մը վերջը սենյակ մտավ գեղատի աղջիկ մը իր երգին հետ միասին. նկատեց անծանոթը ու կանգ առավ իսկույն՝ առնական կեցվածքով մը։



Միջահասակ, լեցուն, առույգ մարմին մը. չափազանց տիկնոջ նմանող կլոր դեմքով, միայն ավելի թարմ ու ավելի հստակ արտահայտությամբ. առանց գլխարկի ու մանչու պես մազերը կարճ կտրած. մութ գույնի շրջազգեստ մը վրան ու մեջքը լայն կաշի գոտի։

— Եկուր ծանոթացնեմ. մեր Կարոյի ընկերն է.— դարձավ Քանյան օրիորդին։

— Պարոն Սիրուքյան։ Քույրս՝ Շուշանիկ Մելինյան։

Աղջիկը համարձակ շարժումով մը ձեռքը մեկնեց.

— Կարոյի ընկե՞րը. ուրեմն դո՛ւք ալ այս տարվան ընթացավարտներեն եք։

— Այո՛, օրիորդ.— պատասխանեց սղան թեթև շփոթությամբ մը։

— Իմ երեսակույս՛, Շուշանի՛կ, երկու ամիսեն կուտակված պիտի ձեռնտուիք.— ըսեց Քանյան մեղմ ժպիտով մը։

— Կուտակվա՞ծ, ի՞նչ.— բռավ աղջիկը ու ձեռքի գրքերը պատուհանին մեջ դնելով՝ մտավ քովի սենյակը։

Բայց նույն վայրկյանին իսկ ներսը իր արմուկը լսվեցավ՝ մեկուն հետ կռիվներ. և իսկույն նա եկավ նորեն երկու տարեկանի մոտիկ երեխա մը գրկած, որ գրեթե մերկ էր։

— Այս կինը երեխան փչացնե պիտի, Մարի՛. անկանոն կըվարժեցներ. ա՛ն, դեռ մինչև հիմա պառկեցուցած չէ, իսկ երեկ հինգին բռնացուցեր էր տղեն. այդպես անկա՞րգ ու անշնորհք. խե՜ղճ թոշնիկս։

Իմ իրիկ չոյանք երեխայի մերկ ոտքերը ծեծելով՝ բանի մը ատեներն ու հայերեն փաղաքշական անուններ իրարու խառնելով, սեղմելով բռնոնցքերին գո՞ւն անվանելով շարունակ. ու ճչալի-ճչալի համբուրելով անոր թևերը, վիզը, անրակը՝ մտավ կրկին կից սենյակը։

Երեխայի մայրն ալ գնաց բռուքը տանելու. նախ ավելի սաստիկ իրարանցում մը բարձրացավ ներսը, բայց իսկույն բոլորովին լռեց։

— Իսկ մեր խոսքը ո՞ւր մնաց.— դարձավ Քանյան երիտասարդին։— Հա՛, ձեր նոր ուղղությամբ վարդապետներու մասին կըպատմեիք. ուրեմն կկարծեք, որ խնդիրը այդպես մեծ ծավա՞լ է առնելու։

— Շարժումը սկսված է. ես ու իմ ընկերներս քացասու-

թյուն չէինք, այլ ամբողջ խումբ մը, որ շատով կրկնապատիկ պիտի դառնար։

— Եվ ի՞նչ է այդ խումբին գծած նպատակը։

— Օժտել մեր հոգևորականությունը բարձր կրթության տեր անհատներով, նորոգել հայ եկեղեցին ու ծառայել հայ ժողովուրդին։

Քանյան մտածկոտ գլուխը կախեց։

Մինչ երիտասարդը տաքցած վրա տալով՝ հետզհետե ավելի հուզվելով.

— Ա՜խ, չգիտեք, պարո՛ն, թե ի՛նչ սարսափելի անպետք է դարձած մեր հոգևորականությունը ժողովուրդի դաստիարակման գործին համար։ Անտարբե՛ր, շահամո՛լ, եղակիա՛ն, տգե՛տ. ո՛չ մեկ գաղափարական ձգտում, ո՛չ անձնազոհություն, կամ գեթ մաքուր զգացում։ Եվ չե՞ք կրնար երևակայել, թե ինչ հաճույք է մտածելը, որ այդ փտած մարմինը պատռե՛լ պիտի, որ այդ ճահճացած կյանքին մեջ թարմ հոսանք, նոր ձգտումներ պիտի մտցնենք, որ պիտի կռվինք, մաքառինք ու հաղթենք, բայց պիտանի և օգտակար ըլլանք։

Քանյան հափշտակված կնայեր այդ ոգևորութենեն կայծկլտող աչքերուն։ Ու ակնթարթ մը լռութենե վերջը՝ ըսավ տեսակ մը վարանումով.

— Քանի ձեզի կլսեմ, այնքան ավելի ցավ կզգամ։ Ձեր այդ ազնիվ ոգևորության համար ավելի արժանի նպատակ մը կցանկայի, քան ձեր ընտրած հոգևորականությունը։

— Ինչպե՞ս թե.— հարցուց տղան բոլորովին ապշած։

Ու Քանյան շարունակեց՝ ինքն ալ տեսակ մը պաղած ու տխուր խոսվածքով.

— Հոգևորականության դարերը անցած են, բարեկա՛մս։ Եվ բնական մահվան դեմ բժշկություն չկա։ Կընդունիմ, որ այս կամ այն անհատը իր բնածին տաղանդով կամ իր բնավորության բարձրությամբ օգուտ կրնա տալ նաև իբրև հոգևորական, ինչպես նաև ուրիշ որևէ կոչման մեջ պիտի տար։ Բայց այդ միշտ ալ բացառիկ անհատական ուժերը ինչ ալ որ ըլլան, հոգևորականությունը իբրև ամբողջություն մը առած՝ ապրած է իր ժամանակը։ Անիկա հիմա հետադիմական գործոն մըն է իր էությամբը, որ ո՛չ նորել կարելի է, ո՛չ բարձրացնել։



— Ինչո՞ւ այդպես կկարծեք.— հարցուց երիտասարդը բողոքի շեշտով մը։

Այդ միջոցին՝ արդեն երրորդ անգամ՝ աղջիկը մտավ սենյակ և սամովարեն իրեն բաժակ մը թեյ լեցնելով՝ առանց անոնց խոսակցությանը ընդհատելու կոպտության տալու՝ դարձավ Քանյանին.

— Լսեցի՞ր, Կոլյա, Գալյանեն ծներ է։

— Մի՞թե. բացականչեց մարդը զարմացած։

— Մարին գնա բերի չուա՞վ. բիչ մը առաջ սայլապանը նամակ բերավ։ Եվ իմացեք նորեն մեռած։ Անկե ամիս ու կես առաջ, ես գնա նոր էի եկեր Ալեքսանդրապոլ, որ բիչ էր մնացեր նորեն պիտի վիժեր. արդեն ո՛չ ինքը խեղճ անի, ո՛չ մարդը. անոնք զավակ ունենալու չեն, զարմանք բան է, թող բանն ասոր ասպանեն։

— Խե՛ղճ կին, ատ ալ անոր բախտը.— բացականչեց տիկինը ցավակցաբար։

— Բա՛խտ, ի՞նչ բախտ, ըսե ապուշություն, ըսե տգիտություն.— պատասխանեց Շուշանիկ բարկացած ու նստավ իր թեյի բաժակին առջև։

Բացավ հետո բերած ատենեն ամսագրի մը համարը, դրավ սեղանին և սկսավ թերթել։

Վարդապետացուն տեսակ մը ամչցած ու անհարմար զգացումով կնայեր աղջկան։

«Սա ի՞նչ տեսակի մարդիկ են»։

— Ի՞նչ կըսեի.— դարձավ Քանյան երիտասարդին։— Հա՛, ըսել կուզեի, որ մեր ժամանակի ձգտումն է արթնցնել մարդկությունը հանդերձյալ կյանքի տափակ երևակայություններեն, բարձրացնել մարդու իր անձին վրա ունեցած ինքնավստահությունը՝ մեկդի նետելով բոլոր գերբնական հավատալիքները, չար ու բարի ոգիները, արքայությունները. գիտակցությո՛ւն ու հպարտությո՛ւն ներշնչել մարդուն իր ուժերուն ու կարողության վրա. հասկցնե՛լ, որ բնութենեն դուրս ոչինչ չկա, որ մարդն ու ընկերությունն ալ այդ բնության մեկ մասն է։ Եվ հառաջդիմություն, քաղաքակրթություն ըսվածն ալ ուրիշ բան չէ, եթե ոչ ուսումնասիրել ու իրեն օգտին ծառայեցնել բնությունը. բնությունը, որ մե՞ր մեջն է, բնությունը, որ մեր շո՛ւրջը։ Արդ, բարեկա՛մս, եթե ձեր նոր խումբի քարոզածքն ալ աս պիտի ըլլա, այլես ի՞նչ հոգևորական. իսկ եթե նորեն

*Հին աւանդական երգերը պիտի կրկնենք՝ այն ատեն դուք ալ խոչընդոտ մըն եք ժողովուրդի հասունացման։*

*Սիրաքյան գլուխը կախ՝ թեյի գդալին հետ կխաղար։ Տեսակ մը լարում դրոշմված էր իր դեմքին. ու գրավիչ, ազնվական բան մը կար գիմագծերու այդ կծկումին մեջ։*

*Օրիորդը գիրքը թողած, ճակտին տակեն աղուն կնայեր շեշտակի՝, նախ անգիտակից ու մեքենական էր նայվածքը, բայց շուտով սկսավ ուշադրությամբ դիտել այդ նիհար, դժգույն դեմքը ու հանկարծ խղճաց։*

*«Խե՛ղճ տղա», մտածեց ինքնիրեն ու նորեն կախեց գլուխը գրքին վրա։*

*— Կչափազանցեք.— բսավ վերջապես տղան՝ թեթև մը դեմքը դեպի խոսակիցը դարձնելով։— Նախ կմոռնաք մեր արդի պատմական պայմանները. բազմաթիվ հասարակական գործեր կան, որոնք սերտ կապված են հոգևորականության հետ. երկրորդ ալ դուք շատ անիրավ կվարվիք, երբ մտավոր զարգացման տեր ու որոշ ձգտումներով նոր հոգևորականները հիներուն հետ միասին մեկ ցրով լլել կուզեք։*

*— Ներեցե՛ք, երիտասա՛րդ բարեկամս, բայց եթե իմ անձնական զգացումս լսել կուզեք, ձեր այդ կրթված կրոնավորները իմ վրաս շատ ավելի անախորժ տպավորություն կընեն, քան գուցե հիները։ Կրոնավորությունը հավատքի ու միամիտ զգացումներու վրա միայն կրնա հիմնված ըլլալ. բարձր ուսումնականությունը մեջ եկածին պես կա՛մ կքայքայվի, կա՛մ դեպի ճիզվիտություն կտանի։ Ի դեպ, այդ ճիզվիտական գիծը արդեն սկսած է աչքի իյնալ ձեր կրթվածներուն մեջ. մեկ-երկուքը ես ալ կճանչնամ։*

*— Սակայն, Կոլյա, ի՛նչ քաղաքավարություն է ասիկա.— նկատեց տիկինը։— Պարոնը մեզի հյուր է եկեր, դուն նստեր ես գլխուն դայլի ավետարան կկարդաս։*

*— Ոչի՛նչ, տիկի՛ն. այդ բոլորը լսելը ինծի համար հետաքրքրիր է.— պատասխանեց վարդապետացուն՝ հնար եղածին չափ ինքզինքը անփույթ ցույց տալու ճիգով մը։*

*— Վաղը մեր վրա հովիվ պիտի դառնա. աղեկ է, որ այսօրվընե իր ոչխարներուն կարծիքը գիտնա.— ավելցուց պարոնը ծիծաղելով։*

*Ու կատակի շեշտով մը երիտասարդի ձեռքին զարկավ թեթև*



## Գ

*Վարդապետացուն լույսին հետ ելավ անկողնեն. իջավ դեպի ձորը, ուր գետակի քովեն ստորոտով նեղ արահետով սկսավ վեր քալել. ծա՛նր, հանդա՛րտ ու տեսակ մը ցրված։*

*Մտածումները իր գլխուն մեջ մարացեր էին, կանգ առած ջուրի պես. ու տարտամ տխրություն մը ծանրացեր էր իր հոգիին վրա. նախորդ գիշերվան տպավորության տակն էր միշտ։*

*Արդեն գիշերն ալ շա՛տ ուշ և շա՛տ անհանգիստ էր քնացեր. թեև իսկապես լուրջ ոչինչ մտածած չէր։ Քանյանի մեկ-երկու նախադասությունները կկրկնվեին շարունակ իր գանգին տակ և այն գաղափա՛րը, թե ինչպես մարդիկ չեին ուզեր հասկնալ իրենց նպատակներուն արժեքը, իրենց անձնազոհությունը. նույնիսկ այսպես կրթված մարդիկ։ Մանավանդ ալ Քանյանի վստահ ու վճռական խոսվածքը, անոր տեսակ մը ցաված շեշտը իր կոչման ու ապագայի վերաբերմամբ՝ կսեղմեր, կվրդովեր երիտասարդին սիրտը. մանավանդ կզգար, որ իսկապես անոր բսածներու մեկ մասին դեմ ինքը հազիվ առարկել կրնար. չէ՞ որ ինքն ալ երկար ժամանակ ատոնց նման հարցեր իր գլխուն մեջ շատ էր տվեր դեռ վարդապետանալու վերջնական խոսքը տալեն առաջ։*

*Գետակը ժայռերուն մեջ ջրվեժ մը կազմեր էր, որ ահագին շառաչով կխուժեր վար ու իր մեջքի ճերմակ ցողնույն բուռով փրփուր կցաներ շուրջը։*

*Տղան կեցավ ու պիշ նայվածքով սկսավ նայիլ. հանկարծ սթափեցավ. անդրադարձավ իր ցրված վիճակին վրա ու տեսակ մը գայրույթ զգաց իր այդ ընկճված տրամադրությանը։*

*«Բավակա՛ն է, որ ես իմ ըրածս գիտեմ,— մտածեց.— բավակա՛ն է, որ ինքս գնահատեմ իմ վարմունքս. ինծի ի՞նչ ուրիշներուն դատողությունները. արդեն ո՞ր գործի վերաբերմամբ ժամանակակիցներուն կարծիքը շիտակ է եղեր. արժե՞ գլուխ ցավցընել»։*

*Եվ մտածումները քշել ընդհատելով՝ վազեց ձորեն վեր, ելավ սարի նեղ ճամփան, որ ձորի լանջեն ժայռերու ու ծառերու մեջեն ետ դեպի վանք կտաներ։*

Արեւը արդէն եկեր էր ու ձորի աջ շրթունքէն ներս սահելով դիմացի չէչոտ ու խոժոռ ժայռերու ճակտին իր բարիլոյսի համբոյրը կուտար։

Տղան վանքին մօտեցեր էր բոլորովին, երբ իր դէմը քանի մը տասնեակ քայլ հեռու նշմարեց օրիորդ Մելինյանը։

Աղջիկը նստած էր խոշոր քարի մը վրայ՝ ոտքը ոտքին նետած, ճանապարհին գրեթէ կից. և իր քովի թեք ու քիչ մը աւելի բարձր ժայռին վրայ գիրք մը դրած կկարդար։ Այսինքն՝ գիրքը բաց էր իր առջեւ ու գիրք կարդացողի մը դիրքը ունէր ինք, բայց աչքերը գրքին վրայէն սահեր ինկեր էին վարը գետի փրփրուն եռմանը, ուրկէ ախորժ մխոր մը անոր մտածումները կօրորէր։

Միրաքյանի առաջին ըրածը ետ դառնալու շարժում մը եղաւ. դժկամութիւն մը կզգար այլեւս այդ մարդոց հանդիպելէն. ամէնքըն ալ կարեկցութեան ժպիտ մը ունէին կարծես իրենց շրթունքներուն ու տեսակ մը բարձրէն նայիլ մը։

— Ի՞նչ հիմար բան էր. ինքը եկեր էր այդ լեռներուն մէջ խօսքէ ու աղմուկէ կտրուած քանի մը օր առանձին բնութիւնը վայելելու. և ահա՛ այդ անմեղ հաճոյքն ալ չէին ուզեր իրեն տալ։

Բայց ետ դառնալը անհնարին էր. աղջիկը անշուշտ պիտի նկատեր. և վերջապես ուրիշ ճամփա ալ չկար. ձորի մէջէն նորէն երկար պտոյտ ընելը անիմաստ էր։

«Բարեւ մը կուտամ ու կանցնիմ», վճռեց ու քայլերը արագացուց։

— Բարե՛ւ ձեզ, օրիո՛րդ։

— Օ՛, բարե՛ւ, դո՞ւք էք, պարոն։ Ուրկէ՞ կուգաք այսպես կանուխ։

Ու ելաւ ոտքի։

— Ձորի մէջ փոքրիկ պտոյտ մը. հիանալի թարմ օդ է, կազդուրիչ ու առողջարար։

— Աշխարհքը շատ է փոխվել.— ժպտեցաւ աղջիկը երկու ձեռքը կարճ մազերուն մէջ խրելով։— Հիմա հոգեւորականները երեւի աւելի առողջապահութեան մասին կմտածեն, քան աշխարհականները։

— Ինչո՞ւ չէ.— պատասխանեց տղան չոր։

— Իսկ ես, տեսէ՛ք, նստեր կաշխատիմ. այսինքն՝ պէ՛տք է որ աշխատիմ.— աւելցուց դժգոհութեամբ։



— Այդչափ սախրողակա՞ն. կարդացածնիդ ի՞նչ է որ։

— Խնդրե՛մ, եթէ կհետաքրքրվիք։

Ու գիրքը տղուն մեկնեց։

Վարդապետյանց առաւ գիրքը ու բացաւ առաջին պատահած երեսը. ունելիի նման երկար ու կեռ գործիքի մը նկարն էր. բան չհասկցաւ ու նոր երես մը դարձուց. բայց հազիւ պատկերը նշմարեր էր, որ ամբողջ դէմքով կարմրեցաւ ու արագ թուղթը շուռ տուաւ։

Աղջիկը ձեռքերը մէջքին կեցեր էր անշարժ ու ժպտուն։

Երիտասարդը նայեցաւ գրքին ճակատը. «Ծննդաբերական օգնութիւն»։

— Դուք բժշկութիւն կուսանի՞ք.— հարցուց վերջապես։

— Դժբախտաբար ո՛չ.— եղաւ աղջկան հառաչի մը նմանող պատասխանը։— Մանկաբարձուհի եմ, այսինքն՝ կպատրաստվիմ քննութիւն տալու։

— Ո՞ւր։

— Թիֆլիս. Զարմանալի չէ՞, որ քսան-քսանմէկ տարեկան աղջիկ մը սիֆիլիսի նշաններով և չգիտեմ ինչերով իր ուղեղը կըզբաղեցնէ, այնպես չէ՞։ Դուք միշտ զբաղված էք բարոյական, հոգեբանական ու աստվածաբանական բարձր պրոբլեմներով. մի՛շտ վերեւը։ Մե՛նք, կտեսնե՛ք, համեստ ենք. մի՛շտ ցածը. հիվանդութիւններու, աղտոտութիւններու ու տառապանքներու մէջ։

Աղջիկը կոկեթնար իր արվեստովը։

— Հապա՛, վարդապետութեան չի նմանիր. քարոզ տալով ու աղօթք ընելով չի վերջանար. պէտք է աշխատիլ ու չարչարուիլ.— վերջացուց հանկարծ լուրջ ձայնով մը և բոլորովին անսպասելի կերպով ռուսերէն. կարծես դիմացինը բոլորովին շվարեցնելու համար։

Բայց տղան հանդարտ ու մաքուր զուտ ռուսական արտասանութեամբ պատասխանեց ինքն ալ ռուսերէն.

— Կզարմանամ, օրիո՛րդ. ի՞նչպես կրնաք այդպես արհամարհանքով խօսիլ ուրիշի մը գործի մասին, որ մանկաբարձուհիի մը համար միայն այնքան ծանօթ է, որքան վարդապետի մը համար «Ծննդաբերութեան օգնութիւնները»։

Այս համարձակ ու արդար բողոքը աղջկան վրա տարօրինակ տպաւորութիւն մը ըրաւ. և մանաւանդ այդ վարժ ռուսերէնը.

տղան հանկարծ կարծես ուրիշ գույն մը առավ իր այդ ռուսերենովը։

Ու ալ խոսակցությունը շարունակվեցավ ռուսերեն։

— Ձեր համեմատությունը շիտակ չէ,— պատասխանեց աղջիկը.— ես եկեղեցի ալ շատ եմ եղած, գոնե մանկության. և վերջապես դուրսն ալ հոգևորականներ միշտ կարելի է տեսնել ու անոնց մասին լսել։ Մինչդեռ դուք ոչ թե իմ արհեստիս, այլ նույնիսկ մարդու ու իր ֆիզիկական կազմի մասին շնորհքով տեղեկություն չեք կրնար ունենալ, երբ ամբողջ ձեր կրթությունը տարիներով վերացական խնդիրներու ու կրոնական դասերու շուրջն է դարձեր։

— Կտեսնե՞ք, օրիո՛րդ, ի՞նչ ըսել է առանց գործին ծանոթ ըլլալու խոսիլը։ Նախ դպրոցը կրոնի դասերը միայն քանի մը ժամ է. և որոնք, փակագծի մեջ ըսած, ինծի ո՛չ հետաքրքրած են, ո՛չ ալ մասնավորապես զբաղեցուցած, իսկ ընդհանրապես բնական գիտությունները ես միշտ սիրած եմ ու ձեր կարծածեն ալ քիչ մը ավելի ծանո՛թ. մասնավորապես կենդանաբանությունը և բիոլոժին։ Մի՛ կարծեք, թե միայն ձեզի են ծանոթ Դարվինի, Սպենսերի ու Հյուքսլեյի երկերը։

Աղջիկը սեղմված շրթունքներով ու աչքերը լայն բացած խոսակցին կնայեր բոլորովին զարմացած։ Հյուքսլեյեն միայն փոքր գրքույկ մը կարդացած էր. Սպենսերի մեկ աշխատության բովանդակությունը լոկ հայտնի էր իրեն ամսագրի մը գրախոսութենեն, իսկ Դարվինի անունը, թեև շատ լավ գիտեր, բայց բնավ ծանոթ չէր մոտեն։

Ու կարճ լռություն մը, որ ընդհատողը աղջիկը եղավ.

— Այն ատեն ես բոլորովին կզարմանամ. ուրեմն ինչպե՞ս կրնաք դուք այդ բոլորին հետ հաշտեցնել կրոնական մանր ու մեծ նախապաշարումները, սնոտիապաշտությունները, ծիսակատարությունները, պահքերը, դևերն ու սատանաները. ինչպե՞ս կրնաք հավատալ այդ բոլորին։

— Եվ ձեզի ո՞վ ըսավ, որ ես կհավատամ այդ ամենուն։

— Բայց չէ՞ որ վարդապետ դառնալ կուզեք, չէ՞ որ ամեն օր պիտի կրկնեք նույն աղոթքները, նույն արարողությունները, նույն հավատալիքները, և ալ ի՞նչ գիտնամ։



Տղան թեթև մը գլուխը կախեց. դիմացինը ամենեն հիվանդոտ տեղին վրա էր դրեր մատը։

Եվ պատասխանեց, կարծես տեսակ մը իր մտածումներուն մեջեն.

— Իրա՛վ է, ժամանակները իրենց հետ բերած են բավական բաներ, որոնք մեր արդի ըմբռնումներուն լավ չեն հարմարիր. պիտանին ու ավելորդը, գլխավորն ու երկրորդականը խառնված են սերտորեն կրոնական ըմբռնումներուն. այդ ամենը իրարմե զատել ու մաղել դեռ կարելի չէ. ժողովրդական մաքի հասունացում կպահանջե։ Այնպես որ գործի բարձր ու կարևոր մասերու սիրուն ստիպված ենք հարմարվելու այդ հինցած ու անախորժ կողմերուն։

— Բայց, պարո՛ն,— առարկեց աղջիկը,— ամեն օր և ահագին բազմություններու առաջ ու կատարյալ հանդիսավորությամբ ըսել խոսքեր ու աղոթքներ, որոնց չեք հավատար, կատարել ծեսեր ու արարողություններ, որոնց կարևորություն չեք տար՝ չէ՞ որ ատիկա կդառնա խաբեության պես բան մը։ Ազնիվ բան չէ ձեր ըսել ուզածը, սիրելի պարոն։

— Դժբախտաբար իմ կամքես կախված չէ ուզած մասերս ընտրել և չուզած մասերս անդին նետել. անբաժան ամբողջություն մըն է, կա՛մ պիտի հանձն առնես ամբողջը, կա՛մ հեռանաս։

— Հեռացե՛ք. դո՞րծ է պակաս. ինչո՞ւ անպայման հոգևորական։

— Որովհետև ամենեն շիտակ ու ամենեն հարմար ճամփան է մեր ժողովուրդին ծառայելու. ժողովուրդին մեջ խառնվելու, ապրելու, անոր վերքերը մոտեն շոշափելու և բուժելու համար։

— Ա՜յ, եթե ձեր միտքը ժողովրդի վերքերը շոշափելն ու բուժելն է, ես ձեզի ամենեն կարճ ճամփան ցույց տամ. ճամփա մը, որ գիտություններուն վրայեն կերթա, և ոչ թե ժողովուրդի նախապաշարումներուն կռթնելով։ Ըսեք, թե բնական գիտությունները մասնավորապես կսիրեք, վարժ ալ ռուսերեն կխոսիք ահա՛. գացե՛ք քանի մը տարի Ռուսաստան, սորվեցե՛ք բժշկություն, դարձե՛ք ձեր ժողովուրդին գիրկը և բժշկեցե՛ք ինչքան վերքեր որ կուզեք։

— Իմ խոսքս հիվանդի վերքերու մասին չէր,— նկատեց տղան միամտորեն ժպտելով։

ժպտեցավ և աղջիկը։

— Այդչափը կհասկնամ. բայց մի՞թե գե՞շ է ձեր բուն հիվանդություններուն հետ նաև մարմնական հիվանդություններ բժշկելը. վերջապես բոլոր բարոյական հիվանդությունները ֆիզիկական ու տնտեսական հիվանդություններու զուգահեռներն են միայն։ Եվ մի՛ մոռնաք, որ բժիշկը անխտիր ամեն տեղ հարգ ունի, մուտք ու դիրք. և մանավանդ բացարձակապես անկախ է թե՛ բարոյական և թե՛ դրամական տեսակետեն։

— Եթե այդչափ հափշտակված եք բժշկությամբ, ինչո՞ւ ինքներդ ուղղակի բժշկության չեք հետևիր. կարծեմ այդ ասպարեզը շատ ավելի լայն պիտի ըլլա, քան ձեր ընտրած մանկաբարձությունը.— հարցուց երիտասարդը դիտմամբ խոսքին ուղղությունը ծռելով։

— Ուրիշ են, պարո՛ն, իմ ընտանեկան պայմաններս. ինծմե փոքր չորս քույր ու եղբայր ունիմ. և երկու տարի կա՝ մեռավ հայրս. պետք է հնար եղածին չափ շուտով անկախ դառնամ մորս վրայեն բեռ մը պակսեցնելու համար. պետք է այդ փոքրիկները մեծցնել, կրթություն տալ. դյուրին բան չէ։ Ընդարձակ ծրագիրներու մասին մտածելու ո՛չ ժամանակ ունիմ, ո՛չ միջոց. թե չէ՝ այդ ծրագիրները ես ալ իմ ունեցած. իմ բախտս է. հայրս մեռնելու չէր։ Հապա՛, աշխարհի կյանքը վանքի չորս պատերուն չի նմանիր, հո՛ս ոչինչ չի կա պատրաստ ու ձրի. նույնիսկ ապրուստի տարրական պետքերուն համար պիտի կռվիս շարունակ՝ ծրագիրներ ու բաղձանքներ բոլորը մեկդի դնելով։

Տղան անթարթ խոսակցի շարժուն դիմագծերուն կնայեր, մինչդեռ տարօրինակ զգացում մը իր մեջն էր սպրդեր. կարծես սկսավ ամչնալ։

«Ահա՛ ուր է իսկական անձնազոհությունը», կմտածեր ակամա։

— Բայց ըսե՛ք, խնդրեմ, ի՞նչպես է, որ դուք այդպես մաքուր ռուսերեն կխոսիք. կրոնավորներու մեջ խիստ հազվագյուտ բան է ատիկա.— հարցուց հանկարծ աղջիկը իր հետաքրքրությունը այլևս զսպել չկարողանալով։

— Ես խրիմցի եմ, օրիո՛րդ. ատկե զատ դպրոցը ռուսերեն շատ եմ կարդացած. ռուսական գրականության գրեթե բոլոր հայտնի երկերը. և թարգմանություննե՛ր ինքնին հասկնալի է։



— Եվ բանաստեղծություննե՞ր, և ռոմա՞ն.— հարցուց աղջիկը իր կանացի փորփրող հետաքրքրությամբ։

— Այո՛. անոնք, որոնք գրական արժեք մը ունին։

— Կա՛մ վարդապետներու մասին ես չափազանց սխալ գաղափար ունիմ, կա՛մ դուք շատ տարօրինակ վարդապետացու եք.— պատասխանեց աղջիկը վարանոտ շեշտով մը։

— Չգիտեմ. ինչպես որ կուզեք։

Ու երիտասարդը գլխարկը ուղղեց ինքնաբերաբար, աղջիկը թարթ մը լռություն. վերջը ավելցուց.

— Բայց ներեցե՛ք. ձեր ընթերցումը խանգարեցի. ցտեսությո՛ւն։

— Ընդհակառա՛կը, ես շատ ուրախ եմ այդ խանգարումեն [illegible]։

Ու ձեռքը մեկնեց տղային. երիտասարդը թոթվեց ու դեպի վանք ուղղվեցավ։

## Դ

Մութը սկսեր էր իր կծիկը ձորին վրա փաթթելու, որ Սիրաքյան ամբողջ օրվան թափառելեն հոգնած՝ վերադարձավ էր ու շիտակ մտավ վանահոր սենյակը։

Նույն միջոցին անտեսանելի, երեսունը անց տգեղ ու խոշոր կին մը, ամուր ու փայտե կազմվածքով, մեկ ծունկի վրա գետինը չոքած՝ սամավարին չոր քաշելով էր զբաղված. իսկ վարդապետը անոր գլխուն վրա կանգնած՝ ձեռքը կնոջ թուշին բան մը ըսելու վրա էր, որ սենյակին դուռը հանկարծ ճռնչեց։

Հայր սուրբը խեղճուկ շփոթվեցավ, արագ դուրս քաշեց գրպանեն ահագին կապույտ թաշկինակը ու սկսավ պինդ-պինդ հազալ, որքան իր թոքերը կներեին։

— Աստված օգնական, հա՛յր-սուրբ.— բարևեց տղան ոչինչ չտեսնել ձևացնելով։

— Դո՞ւ ես, տիրացո՛ւ. ո՞ւր էիր, տեսնե՛նք, ամբողջ օրը։

— Հայր-սուրբ, այնպես հոգնած եմ ու անոթի։

— Նստե՛, տղա՛ս, հանգստացի՛ր։ Եղսո՛, շուտով մեզի մեյմեկ բաժակ թեյ տուր ու տիրացուին գնա քիչ մը մածուն ու ձու բեր։

Երկու ճաթռտած ու տարբեր ձևի բաժակներով թեյը արդեն

փայտէ անձակ սեղանին վրայ էր։ Վարդապետը նստեցաւ լայն թախտի ծայրին, իսկ վարդապետացուն դիմացը կոշտ ու խոշոր աթոռի մը։

Խօսքը սկիզբը Ածկոնքի մասին էր, վերջը դարձաւ Սիրաքյանի ու իր ընկերներուն վրայ։

— Իհարկէ՛, այդպես շա՛տ լաւ է՝ ուսում առած հոգևորականներ,— վրայ բերաւ վարդապետը թեյի բաժակը շրթունքներեն չհեռացնելով։— Բայց գիտե՞ս՝ միայն ուսումը բանի պետք չէ. քիչ մը խորամանկութիւն ունենալու է և մեծավորներուն կողքը մտնելու չհորհքը. թե չէ ոչինչ դուրս չի գար. տասը տարի սարկավագ կմնան. վերջն ալ երբ մազերդ ճերմկին՝ կշինեն վարդապետ ու կուղարկեն փլած վանք մը։

Վարդապետացուն ոչինչ չառարկեց։

— Ա՛յ, իմ ընկեր սարկավագները հիմա բոլորն ալ կա՛մ եպիսկոպոս են, կա՛մ առաջնորդ, մեկը նույնիսկ Սինոդի անդամ։ Ինչո՞ւ. կկարծես ես ամենեն վա՞տն էի մեջերնին. եթե գիտնաս՝ ի՞նչ գիտուն գլուխներ էին. մա՛նավանդ մեկը. և ճիշդ այդ մեկը հիմա N թեմի առաջնորդն է. որովհետև իր հաշիվը գիտցաւ մարդը. իսկույն մտաւ եպիսկոպոսի մը փեշերուն տակը. յուղոտ պաշտոններ ձեռք անցուց. առաջ մատակարար էր, ետքը չգիտեմ ինչ կապալի գործերն էր իր վրան, վերջերն ալ կարծեմ հաշվի մատյաններուն մեջ մատ ուներ. կարճ խօսքով՝ քիչ-քիչ յուղոտեցաւ. Ան անգամ մը որ առակը կա՝ ալ ամեն բան կա։ Հապա՛. միայն ես էի մեջերնին էշը. ո՞վ կըսեր ինծի ուրիշներու գործերուն խառնվիմ. շիտակ խոսողի գլուխը ծակ կըլլա. ինծի սկսան ետ-ետ ձգել. ես ավելի կատղեցա ու բերնիս կապը բոլորովին քակեցի. սկսա ամենքի երեսին ըսել ինչ որ ճշմարիտ էր. թե անառակ, գող, կաշառակեր, լիրբ մարդիկ էին. ետևեն ինկա, մեկ-երկուքի գողութիւնը բռնեցի. Աբրահամ եպիսկոպոսի սենյակեն աչքիկը դուրս քաշեցինք. ահագին խայտառակութիւն դուրս եկաւ. բայց այդ պատմութիւնը ինծի ալ սուղի նստեցաւ. «գիժ սարկավագը» բռնեցին, շուտով շինեցին վարդապետ ու ղրկեցին հոս, այս աշխարհքի անմարդ ծայրը, դե՜հ, նստե ու մեղքերդ քավե։ Հապա՛, տիրացո՛ւ ջան։

Երիտասարդը հետաքրքրութեամբ կլսեր, թեև ինքնին այդ պատմութիւնը իրեն համար ոչինչ նորութիւն չուներ։



— Որդի՛ս, ականջիդ օղ շինե,— կխրատեր վանահայրը,— եթե առաջ երթալ կուզես՝ մեծավորներուդ խունկ ծխե՛. մեյ մըն ալ նայե՛ ինչ ճամփով կուզե ըլլա՝ շուտով դրպաններդ յուղոտե. այս չոլերուն մեջ ճերմկած մորուքս քեզի խրատ։

— Հա՛յր-սուրբ, առաջ երթալու ավելի ազնիվ ճամփաներ ալ կան. անշուշտ խելացութիւն չէ մեծերու թշնամութիւնը ավելորդ տեղը գրգռելը. մենք նորերս կաշխատինք ավելի ազնիվ ըլլալու, ավելի գործունյա ու մաքուր. տասը-տասներկու տարիեն չէ՞ որ մեծավորները մենք ենք դառնալու։

— Կկարծե՞ս դուք եղածներեն աղեկ եք ըլլալու. երիտասարդութիւն է, որդի՛ս. ես ալ այդպես կմտածեի։ Վանքի կյանքը իր առանձին ճամփան ունի. ամենքն ալ անպատճառ այդ ճամփով պիտի երթան. ով այդ ճամփեն ծռիլ ուզե, անոր բոլորը միասին աքացի կուտան ու մեկ կողմ կնետեն։

— Չէ՛, հա՛յր-սուրբ, գիտե՞ք, ժամանակները սկսած են փոխվիլ. և հիմա կրթված կրոնավոր մը առանց այլասերութեան բանեց մեկդի նետելը դժվար խնդիր է։

— Երեք ամիսի չափ առաջ Էջմիածին էի, որ Սիմոն վարդապետը Խոր-Վիրապ աքսորեցին. ահա՞ քեզի ուսում առած վարդապետ։ Իսկ անցած օր լսեցի, որ Աշոտ եպիսկոպոսն ալ Քիշնև են ուղարկեր. ձեր ամենեն ուսումնականը։

Երիտասարդի մեջեն տարօրինակ զգացում մը անցաւ հանկարծ. ետ քաշվեցաւ սեղանեն ու մտասույզ կռթնեցաւ իր աթոռի խարխուլ թիկունքին։

Այդ Սիմոնն ու Աշոտը գործերե հեռացնելու համար ամեն ճիգ թափողը բնավ հին գլխու մարդիկը չէին եղած, այլ իրենք՝ այսինքն՝ կրթված նոր սերունդը, որոնց մեջ ինքն ալ շուտով մտնելու էր։ Եվ չէ՞ որ ինքն ալ ուրախացեր էր այն ժամանակ «իրեններու» հաջողութեանը. բայց ինչո՞ւ այդ հալածանքը։

Վարդապետացուի մտքին առջեւեն կարծես սկսաւ թանձր բան մը ետ-ետ քաշվիլ ու երիտասարդը սկսաւ անսովոր պայծառ գույնով մը եղելությունները տեսնել։ Նախ անձնական մեկ-երկու հաշիվներ կային, որուն ինքն ալ, իր ընկերներն ալ շատ աղեկ տեղյակ էին. երկրորդ, որ այդ մարդիկը իրենց շրջապատողներուն մեջեն կամքի ու խելքի ուժովը աչքի կիյնային և իրենց ազդեցիկ

գիրքին մէջ Հայաստան՝ մյուսներուն շատ ականջ կախելու տրամադիր չէին։

«Վանքի կյանքը իր ճամփան ունի. ամենքն ալ անպատճառ այդ ճամփեն պիտի երթան»։ Արդյոք ծերուկը իրավո՞ւնք ուներ։

Տղուն մտածումները ընդհատեց անտեսուհին, որ պղինձէ ամանով մը մածունք բերավ, աղջիկը դրավ։

Վանահայրը կշարունակեր դեռ իր պատմությունները. իր քաջագործություններեն, հայտնություններեն, այսինչ և այնինչ եպիսկոպոսի կյանքեն։

Սենյակը թաղված էր արդեն խավարի մեջ. բաց պատուհաններեն ախորժ ճռինչ մը կլսվեր հեռուեն ու գետակին խրախճանքը վարեն։

Երիտասարդը հազիվ էր իր ընթրիքեն ետ քաշված, որ վարդապետի ծառան, դպիրն ու ժամկոչը միանգամայն ներկայացնող տղան՝ մտավ վանքի բակը և, մոտենալով ցած պատուհանին, հայտնեց, որ «մեծ տղան» պարոնը կկանչեր։

Վարդապետացուն անսովոր հուզում մը ունեցավ. տարօրինակ խառնուրդ մը դժգոհության ու տարտամ հաճույքի մը. դժգոհություն՝ երեկ այդ մարդուն կրկին հանդիպելեն. բայց այդ ախորժի զգացումը ուրկէ՞ էր։

Երբ Քանյաններու սեմեն ներս մտավ, գտավ նորեն նույն մաքուր, ճերմակ փոքրիկ սեղանը սենյակին մեջտեղը, ու նույն ցոլցըլուն սամավարն ալ վրան, և ընտանիքն ալ սեղանին շուրջը։

— Բարև՛ ձեզի,— ըսավ տղան ընդհանուր կերպով՝ ձեռքը իր դեմը եղող պարոն Քանյանին մեկնելով։

— Մենք կարծեցինք, որ ինքներդ պիտի գաք. սակայն տեսնելով, որ շատ ուշացաք՝ ծառան ղրկեցինք.— բացատրեց Քանյան սիրալիր տոնով մը։

— Շատ շնորհակալ եմ։

Ու երկու կիներուն ձեռք տվավ։

— Նստեցե՛ք, խնդրե՛մ.— առաջարկեց տիկինը՝ մատնանիշ ընելով իր ամուսնու ու քրոջը մեջտեղի աթոռը։

— Նո՞ւ, ի՞նչ եզրակացության եկաք իմ այսօրվան առաջարկիս մասին.— հարցուց Շուշանիկ խնդալով։

— Ի՞նչ առաջարկ.— զարմացավ տղան բոլորովին շվարած։



— Ձեր մանկավարժության փոքրիկ փոփոխության մասին ինչ որ ըսի։

— Հա՛, այս առտու ամբողջ ժամ մը քենիս պրոպագանդ է ըրած հօգուտ բժշկության, ինչպես լսեցի.— ավելցուց պարոնը։

— Եվ այնպես հայտնեց, որ եթե հոգևորական չըլլայի արդեն՝ անշուշտ բժիշկ դառնալ պիտի ցանկայի.— իր կողմեն կատակել ուզեց Սիրաքյան։

— Թեյը կաթո՞վ կխմեք, թե...

— Շատ շնորհակալ եմ, տիկի՛ն. ես խմած եմ արդեն հայրսուրբի մոտ։

— Չէ՛ ի՞նչ.— բացականչեց Քանյան դժգոհ և իսկույն ավելցուց.— և գիտե՞ք ինչ. տիկինս կխնդրե, որ քանի հոս եք՝ ամեն իրիկուն մեզի գաք թեյի, առանց ձևականություններու. անշուշտ չեք մերժեր։

— Սրտանց շնորհակալ եմ. ճշմարիտ...

Ու չգիտեր ինչ ըսել։

Այս բոլորը տղուն վրա քաշող, փայփայող ազդեցություն մը կըներ. կզգար, որ իր մասին խոսք էր դարձած տան մեջ և որ անոնց վրա նպաստավոր տպավորություն ըրած էր։

— Ի՞նչ ըրիք, նայի՛նք, այսօր ամբողջ օրը։

— Շարունակ թափառեր եմ. ձորի մեջը, վրան, շուրջը, բոլորովին ուժասպառ էի, որ վերադարձա։

— Ես ձեզի տեսա հեռուեն.— մեջ նետվեցավ աղջիկը։— Կեսօրի մոտերն էր. վարը՝ գետի ափին էիք. դուք ժայռերուն մեջեն վեր կմագլցեիք։

— Այո՛, Ագարակ գյուղը գացի. անշուշտ եղած եք արդեն։

— Ա՛խ, ո՛չ.— տրտնջաց աղջիկը։— Դուք, տեսե՛ք, որ մըն է հոս եք, արդեն ահագին տեղ շրջեցաք. մենք երկու շաբաթեն ավելի է հոս եկեր ենք ու գետի վար ջաղացեն անդին անցած չենք դեռ, գետի վեր ալ մինչև ծծումբի բաղնիքը. քույրս երեխային թողնիլ չի կրնար. իսկ Կոլյային արգիլված է շատ քալելը, մանավանդ այս դժոխքի ճամփաներուն մեջ։

— Տրտունջդ ավելորդ է, ամբողջ օրը դուրսն ես.— նկատեց քույրը։

— Դո՞ւրսը, այո՛, տան չորս կողմը։ Եթե գիտնաք, պարոն Սիրաքյա՛ն, ինչպես նախանձեցա այսօր ձեզի. ձեր գլխուն, ազատ,

ժայռերուն մեջեն գավազաննիդ քարերուն զարնելով կբարձրանա-
յիք։ Վերեն տեսարանն ալ շատ սիրուն ըլլալու է ձորի բերնեն։

— Այո՛, հիանալի է. մանավանդ իրիկվան դեմ։

— Եթե այդչափ կցանկաս՝ ելիր անգամ մը պարոնի հետ միասին գնա՛.— նկատեց Քանյան։

Աղջիկը երիտասարդին նայեցավ։

Սիրաքյան չէր հասկնար, թե իրեն հետ ինչ կդառնար։ Նախ թեթև մը կարմրեցավ և վերջը իբրև քաղաքավարության պարտք համարեց կրկնելը.

— Եթե կցանկաք, օրիո՛րդ, խնդրեմ։

— Շնորհակալ եմ. օ՛, շատ գալան վարդապետացու եք։ Բայց մի՛ վախնաք, ես ձեզի շատ նեղություն չեմ պատճառեր. քալելու ալ վարժված եմ, շատ ալ քնքուշ չեմ։ Ուրեմն վաղը ճաշեն վերջը, այո՞։ Ճաշեն առաջ չեմ կրնար. թե՛ կարդալու գործ ունիմ և թե՛ տունը զբաղում։

— Ինչպես որ կկամենաք, օրիո՛րդ. ճաշեն վերջը կերթանք։

Խոսքը դարձավ պարոն Քանյանի զբաղումներուն վրա. ու դուրս ելավ, որ պարոնը իր այս պաշտոնե ազատ օրերեն օգտվելով այժմ ձեռնարկած է երկար ժամանակե ի վեր արդեն մտադըրված աշխատության. սկսած է թարգմանել ռուսաց օրինագրքի մասերը, որոնք անմիջապես կապ ունին ժողովուրդի առօրյա կյանքին հետ ու հանրամատչելի բացատրություններով տպագրության տալ կուզե։ Եվ սկսավ երկար-բարակ պարզել այդ տեսակ գործի մը անհրաժեշտ պահանջը. թե ինչ աստիճան անտեղյակ է ժողովուրդը տիրող օրենքներուն, թե նույնիսկ ժողովուրդի գլուխ կեցած մարդիկը որոշ ու հաստատ չգիտեն։ Եվ այս ամենը այնքան երկար ծամծմեց, որ Սիրաքյան սկսավ հոգնություն ու ձանձրույթ զգալ։ Այնպես որ իսկապես սրտանց ուրախացավ, երբ տիկինը առաջարկեց քիչ մը թուղթ խաղալ ժամանակ անցնելու համար։

Երկար ընտրութենե վերջը կանգ առին պրեֆերանսի վրա. տղան ո՛չ մեկ խաղ շնորհքով չգիտեր, օրիորդը նմանապես, բացի այս վերջին խաղեն։

— Սակայն, ճշմարիտ, ես պրեֆերանս ալ կարգին չգիտեմ. կձանձրանաք.— նկատեց երիտասարդը։

— Ոչի՛նչ, եկե՛ք. դուք խաղացեք երեքով. ես ալ կօգնեմ ձեզի.— վրա բերավ օրիորդ Շուշանիկ։



Այդպես ալ ըրին։

Երեքը տեղավորվեցան սեղանին երեք կողմը. աղջիկն ալ աթոռը քաշեց տղուն քովը մեկ ոտքը գետինը, մեկ ծունկը աթոռին՝ ամբողջ կուրծքովը ինկավ սեղանին վրա. ու դեպի տղու բռնած թուղթերը հակած՝ սկսավ ցույց տալ, թե ո՞րը խաղալու էր և ինչո՞ւ։

Սիրաքյան սկսավ տանիլ. թուղթերը անսովոր կերպով հաջող կուգային. Քանյան հետզհետե ավելի կզայրանար և ճիշտ ան էր, որ ամենեն ավելի զվարճություն կպատճառեր մյուսներուն։ Դժգոհութենե ու հաղթանակե ծնած սրախոսությունները իրարու կհաջորդեին ու երիտասարդը կշահեր շարունակ։ Երեք պարտի իրարու վրա։ Ուշ էր արդեն, որ վերջ տվին։

— Չէ՛. ձեզի հետ խաղալ կարելի չէ. բախտի սիրականն եք.— եզրակացուց Քանյան ձեռքի թուղթերը թափելով։

— Հապա՛, ի՞նչ գիտցար.— պատասխանեց Շուշիկ։— Երբ վարդապետ ու մանկաբարձուհի գլուխ-գլխի տան՝ ալ անոնց հաղթելը քիչ մը դժվար խնդիր է։

Ու առողջ ծիծաղ մը բարձրացավ։

Ջերմ զգացում մը երակներուն մեջ՝ տղան ուղղվեցավ դեպի իր խցիկը։ Այնպես ախորժելի էր այն պայծառ լուսավորված փոքրիկ սենյակը, քառակուսի ճերմակ սեղանը մեջտեղը. մեկ անկյունը լամպը. և իրենք չորսը սեղանին շուրջը. ինչպե՞ս զվա՛րթ ու ընտանի՛։

Անմիջապես հանվեցավ, սահեցավ անկողինը ու աչքերը պինդ գոցեց. բայց փոխանակ քնանալու՝ սկսավ այդ իրիկվան բոլոր մանր-մունր դեպքերը իր հիշողութենեն անցընել։ Կհիշեր ինչպես օրիորդը չէր թողներ կոզը իջնելու, ինչպես անգամ մը ուժով բռնեց իր ձեռքեն՝ արգիլելով կարմիր բացվիլ. ինչպես իր ուսին ծռած՝ թուղթերը կարգով շարելու կօգներ, պահանջելով, որ անպատճառ իր ուզած ձևովը կարգի բերվին՝ նման գույները իրարու քով ու կարմիրները սևերեն վեր և ինչպե՞ս հնչուն-հնչուն կծիծաղեր Քանյանի անզոր զայրույթին վրա։ Ու կարծես աչքերուն դեմն էր դեռ, ինչպես ոգևորված վեր ցատկեց աղջիկը աթոռեն ու սկսավ ուրախութենեն ծափ տալ, երբ երկրորդ պարտին ալ իրենք էին շահեր։

Բայց հանկարծ սթափեցավ ու մտաբերեց, որ քնանալու էր։

«Երեք թղթախաղը անվարժ ուղեղս գրգռեց». մտածեց տղան,

դարձավ կողքին վրա ու մտածումները մեկդի հրելով՝ փորձեց քնանալու։

Բայց իզուր էր այդ կռիվը. քունը գա՛լ չէր ուզեր, իսկ այդ պատկերները՝ երթա՛լ։

## Ե

Ձորի վերի անկյունը գետը կնեղնար։

Եվ մեկ եզերքեն մյուսը անցնելու համար ծառի երկայն բուն մը ձգեր էին ափե-ափ իբրև կամուրջ, որ անմիջապես կհաներ փայտորմով պատած ծծումբի փոքրիկ ավազանը։

Ծառի քարակույտեն վար ցատկոտող գետակը փայտորմին կռնակեն ոլոր կուտար, կսեղմվեր պահ մը ծառ-կամուրջին տակ, ու անմիջապես կշտապեր ցան-ցիր լերկ ժայռերուն մեջ իր փրփուրե բանվածքը նորեն փռելու։

— Օրիո՛րդ, զգո՛ւյշ,— ըսավ Սիրաքյանը,— կամուրջնիս քիչ մը նահապետական է։

— Ավելի՛ աղեկ,— բացականչեց աղջիկը, վազեց թափով բունին վրայեն ու բաղնիքին ոտքը կանգ առավ։

— Ուժերնիդ ժողվեցե՛ք, ալ բարձրանանք պիտի շարունակ,— նկատեց տղան՝ քարքարոտ ու բավական սեպ ելքը մատնանիշ ընելով։— Եվ դեռ ասիկա համեմատաբար հանգիստ մասն է։ Ձեզի առաջվընե ըսեմ, որ այս ճամփան մեր երեկվան Տիկոր իջնելը չի նմանիր. քիչ մը ոստոստեք պիտի քարե-քար։

— Դուք ձեր բարերովը ինծի չեք վախեցներ։ Մա՛րշ,— եղավ պատասխանը։

Ու քով-քովի սկսան բարձրանալ։

Կեսօրեն վերջն էր։ Քանի մը ժամ է՝ արևը պինդ մտեր էր ամպերու քարավանի մը ետևը և ոչ մեկ կերպ նորեն դուրս ելլելու տրամադրություն չէր ցույց տար։ Որով ախորժելի թարմություն մը կարծես դեռ կրցեր էր պահվտիլ մամոտ ժայռերուն մեջ։

Հսկա ու թզուկ ժայռերու ամբողջ ամբոխ մըն էր շուրջը, որոնք իրենց դիրքերուն մեջ անշարժ՝ իրարու ուսե ծամածուռ դեմքերով վար կնայեին լուռ, հո՛ն ձորին մեջի ալիքներուն կզվոտուքը դիտելու, որ ո՛չ վերջ ուներ, ո՛չ դադրում։



Եվ այդ խոնավ հով բազմության մեջեն ոտքի նեղ արահետը դժվարով իրեն ճամփա կբանար՝ շարունակ ծռվելով, կորվելով, կոր տալով ինքն իր վրա։

Այլևս զույգ երթալ հնար չէր։ Հարմար ելքը ընկերուհիին թողած՝ տղան մեկ մը ետ կմնար, մեկ մը քովի քարերուն վրայեն կցատկեր։

Սկիզբները դեռ կխոսեին տաք-տաք, բայց վերելքի պատճառած շնչասպառության դժվարությունը շուտով կտրեց ամեն խոսակցություն. հազիվ մեջեմեջ շնչատ բառ մը կփոխանակեին իրարու հետ, անկապ ու փրթած կտոր մը իրենց մտածումներուն։

Այս երրորդ օրն էր, որ միասին պտույտի կելլեին։ Առաջին անգամ ամբողջ ձորի երկայնքով շրջան մըն էին ըրած վանքի տակեն։ Նախորդ օրն ալ եղած էին Տիկոր գյուղը, ուր սփիրոզը անոթեցեր էր. տղան տուն մը ճարեր էր լավաշ ու պանիր ու պարտեզի պես տեղ մը ծառի մը տակ նստեր կերեր էին միասին. վերջը շրջեր էին գյուղը, ավերակ եկեղեցին, և ուշ ատեն վերադարձեր տուն՝ հետերնին գյուղացիներեն գնած բավական հավկիթ ու երկու հավ բերելով ընտանիքին համար։

Աս բոլորը սկսած էր տեսակ մը ընտանեկան կապ առաջացնել տղու ու Քանյաններու միջև։ Իրիկունները արդեն միշտ անոնց էր թեյի. վերջի օրն ալ հրավիրեր էին ճաշի՝ միասին բերած հավը միասին ուտելու պատրվակով։

Սկիզբը տղան տեսակ մը քաշվեր էր ու վարաներ, երբ աղջկան հետ առանձին մներ էին ձորը. անորոշ վախ մը անհարմար կամ անպատշաճ բան մը ընելու. ինքզինքը ի՞նչպես պահե և ի՞նչ խոսի։ Բայց Շուշիկի պարզ, կտրուկ և անհոգ վարմունքը շուտով փոխանցվեր էր և անոր. քիչ-քիչ սկսեր էր սիրտ առնել, մինչև որ հետզհետե բոլորովին ստացեր էր իր շարժումներուն ու լեզվին բնական ազատությունը։

Ալ կծիկը բացված էր. անցյալ, ներկա, տպավորություններ, գրականություն, գիտություն, հակումներ, բոլորը խառնվեր էին իրարու այդ երկու օրվան մեջ։ Մեկ խոսքով՝ հիմա դարձեր էին արդեն «լավ բարեկամներ», ինչպես աղջիկը կըսեր։

Շուշիկ ելքեն շնչասպառ վերջապես նստեցավ քարի մը վրա։

Տղան մոտեցավ ու կեցավ դիմացը։

— Հոգնեցա՛ք։ Ես ձեզի չըսի՞։

Օրիորդը խոր շունչ մը առավ ժպիտը շրթունքին. և ձեռքը դրավ կուրծքին շնչառությունը կանոնավորելու համար։

Լեցուն ու թուխ դեմքը հաճելի կարմիր մըն էր առեր ու պարզ հարդի գլխարկին տակեն ցոլուն սեփ-սև աչքերը ինկեր էին երիտասարդի նիհար դեմքին։

— Խծկանքի օդը ձեզի աղեկ եկավ, պարոն Սիրաքյա՛ն.— նկատեց աղջիկը հանկարծ։

— Ի՞նչպես։

— Դեմքերնիդ սկսեր է արյուն շրջան առնել և կարծես լեցվիլ։

— Մի՞թե.— կմկմաց տղան ու իր դեմքեն քիչ մը ավելի ուժով սկսավ «արյուն շրջան առնել»։

— Կհավնի՞ք ձորերս.— հարցուց տղան և դեռ պատասխան չառած ավելցուց.— եթե գիտնաք, օրիորդ Մելինյա՛ն, թե ինչպե՜ս կսիրեմ այս բնությունը։ Լեռները, ձորերը, այս չեչոտ ժայռերը, այս աղմկոտ խոխոջող գետակը, վերը դաշտերուն հարթությունը, արտերուն ծածանուն ծովը։ Եվ իմ մխիթարությունս ու հաճույքս բնությունն է արդեն. երբ կոտրած է սիրտս՝ կերթամ անտառ. ու ծառերու շշուկին տակ թափառուն՝ կմոռնամ, կհանդստանամ կարծես. շատ կսիրեմ բնությունը։

— Բայց, գիտե՞ք, ատիկա քիչ մը վտանգավոր նշան է վարդապետացուի մը համար։

— Բնությունը սիրե՞լը։

— Այո՛, բնությունը սիրելը.— կրկնեց աղջիկը ժպտուն։— Չգիտեմ ուր լսած եմ, որ բնության այդ բուռն սերերուն կնոջ փոթորկոտ սերերը կհաջորդեն սովորաբար։ Զգույշ եղե՛ք այդ նախերգեն։

— Է՛հ.— ըրավ տղան ուսը թոթվելով ու խեչափառի պես կարմրեցավ։

— Իրա՞վ, պարոն Սիրաքյան, ներեցեք հետաքրքրությանս, ամենևին սիրա՞ծ եք։

— Ո՛չ։

Ու գլուխը խոր վար կախած՝ սկսավ ձեռքի փայտովը երկու ժայռի ճեղքին մեջ գորգ կապած մամուռը ավրըշտել։

— Եվ սիրելու պետքը չե՞ք զգար։



Երիտասարդը քիչ մը մտածեց ու թեթև մը գլուխը բարձրացուց։

— Շիտակը չգիտեմ ինչ պատասխան տամ։ Նախ՝ վերջին քիչ-շատ հասուն տարիներս միշտ կանանց շրջանեն հեռու եմ ապրած, որով արդեն ինքնին առիթ չկա այդ զգացումներուն։ Երկրորդ ալ՝ երբ մարդ անգամ մը գլուխը դրեր է կուսակրոն դառնալ՝ այլևս բնականաբար մեկ կողմ պիտի նետե այդ հարցերը, եթե նույնիսկ մեջեմեջ անորոշ բաներ մը իր մեջը դառնան։

— Բայց եթե այդ անորոշ բաները հանկարծ որոշնան, եթե, օրինակի համար, աղջկան մը սիրահարիք, ի՞նչ կընեք։

— Այդ մեկը անկարելի է։

— Ինչո՞ւ։

— Չեմ թողներ, որ խնդիրը այդչափ հեռուները երթա։ Այդ տեսակ զգացման մը արթննալը նշմարելուս պես՝ ամեն կերպ կաշխատիմ առաջը առնեմ, կհեռանամ, ինքզինքս կզբաղեցնեմ. վերջապես կմոռնամ, կխեղդեմ։

Աղջիկը դեմքի հեգնական ցնցում մը ըրավ։

— Կկարծե՞ք։ Բայց ենթադրենք, որ այդ ամենուն հակառակ չհաջողեցաք ձեր զգացումները մարել։

— Ալ ի՞նչ գիտնամ. երևի ինքս իմ մեջս կտանջվիմ։ Ինքնին հակաբնական ու անմիտ բան է կուսակրոնությունը անշուշտ. բայց ի՞նչ կարելի է ընել. եթե հանձն առիր՝ խաչդ պիտի կրես։

Շուշանիկ լուռ վայրկյան մը չեշտ նայեցավ տղու գլխահակ դիրքին, ուր տեսակ մը համակերպություն, դժգոհություն ու վըճռականություն իրարու էին փարած. ու վերջապես ըսավ.

— Ուրիշ խոսքով կնոջ մը սերը, կենակցությունը, ընտանիքի կյանքը ու իր մանր ու խոշոր բախտավորությունները զուր կամքով կզոհեք ու ձեզի կդատապարտեք մշտական մենակեցության. միևնույն ժամանակ համոզված ձեր վարմունքի անիմաստ ու հակաբնական ըլլալուն։ Եվ այս բոլորը միայն հասարակության ծառայել կարողանալու համար, չէ՞. մեկ բառով՝ կատարյալ անձնազոհություն։

— Անվանեցե՛ք, ինչպես որ կուզեք։

— Ձեր գիտակցության ու ձեր գործունեության մեջ միշտ հակառակություն մը կա, որուն ես չեմ համակրիր. ձեր ընել ուզածը և ձեր համոզումները իրար չեն բռներ, չեն բխիր իրարմե. այդ

ճամփան վար, շա՛տ վար կրնա տանիլ, բայց վե՞ր. ո՜, երբե՛ք, չեմ հավատար։

Բայց նկատելով, որ տղան միշտ գլուխը կախ իրեն ոչինչ չէր պատասխաներ՝ հանկարծ անդրադարձավ.

— Սակայն, պարո՛ն Միրաքյան, չըլլա՛յ թե խոսքս իբրև վիրավորանք ընդունիք. գուցե կսխալիմ. միայն դժբախտություն մը ունիմ, որ իմ կարծիքս լռել չեմ կրնար։

— Եվ շատ աղեկ կընեք, օրիո՛րդ։ Վիրավորվելու բնա՛վ միտք չունիմ. վստա՛հ եղեք.— պատասխանեց երիտասարդը լուրջ ու դառն ժպիտով մը։

Ու խոր շունչ մը առնելեն ետքը շարունակեց.

— Իսկ ինչ կվերաբերի ձեր նկատողության, մեջը անշուշտ ճշմարտություն մը կա. բայց կա և կարծեմ քիչ մը անարդարություն ու երեսանց դատողություն. միայն անկեղծ խոսելով՝ ես ինքս ալ չեմ կրնար որոշել, թե ուր կվերջանա ճշմարտությունը և ուր կսկսի անարդարությունը։

— Աղե՛կ։ Հիմա որ փոխադարձաբար իրարու հայհոյեցինք ու կշտացանք՝ եկե՛ք հաշտվինք նորեն ու ճամփանիս շարունակենք. այո՞։

Նայեցան իրարու, ժպտեցան, ու շարժվեցան առաջ։

Մոտեցեր էին արդեն ձորի բերնին, ուր արահետը հանկարծ սկսավ ավելի սեպանալ. ժայռերը խտացա՛ն՝ դիզված իրարու վրա՝ տեսակ մը անտաշ ու անկանոն սանդուղ կազմելով։ Սանդուղ մը, որուն աստիճանները հեռահեռու կխոշորնային՝ վերելքը դժվարացնելով։

Աղջկան շրջազգեստը ավելի ևս կխանգարեր աստիճանե աստիճան ոտք փոխելը։

— Ձեռքերնիդ տվե՛ք ինծի.— ըսավ տղան։

Ցատկեց սանդուղի վերի ոտքը, բռնեց ամուր անոր մեկնած ձեռքեն և քաշեց իր կեցած ժայռին վրա. ցատկեց ինքը հաջորդին վրա ու դարձավ իսկույն ընկերուհիին օգնելու։

— Ա՜, ի՛նչ հանգիստ է այսպես.— բացականչեց աղջիկը՝ ոտքը ժայռի եզերքին հենած կե՛ս մը օդին մեջ, կե՛ս մը տղու թևեն կախված։

— Եվ ի՛նչպես ալ ուժով եք։

Երիտասարդը բուռն հաճույք մը զգաց հանկարծ այդ գովես-



տեն։ Սիրտը սկսավ բաբախել ու ա՛լ ավելի պինդ բռնեց աղջկան մերկ դաստակեն։

Նո՛ր զգացում մը, կարծես անզո՛ւսպ հպարտություն մը սկըսեր էր շրջան տանել իր ջիղերուն մեջեն։

Հպարտություն մը իր առնական ուժին, հպարտություն մը իր այդ ուժերեն աղջիկ մը կախված ըլլալուն։

## Զ

Գլխավոր ճամփուն մոտիկ, խոշոր սալորենիի մը ստվերին տակ, թավ խոտերուն մեջ, կռնակին վրա փռվեր էր վարդապետացուն։ Երկու թևերը գլխուն տակը, բարակ ու երկար ձողուն մը ակռաներուն մեջ ու աչքերը հառած դիմացը։

Դիմա՛ցը ձորի շեղ ելքին, ուր խիտ, չեչոտ ու փոքր ժայռերու ամբողջ հոտ մը արևի բարկ ճառագայթներուն տակ, ոռթակեց ոչխարներու նման, գլուխնին իրարու շուքին մեջ թաքցուցած՝ կարծես հիմա վար պիտի վազեին. վա՛ր դեպի գետակը իրենց տապն ու ծարավը մարելու։

Բայց բոլորովին ուրիշ պատկերներ էին երիտասարդի հառած աչքերուն դեմ. ա՛ն իր մեղկ ու ծույլ դիրքին մեջ անշարժ՝ ո՛չ թե կդիտեր, այլ կմտածեր։ Երկա՜ր... Մինչև որ դանդաղ շարժումով մը հանեց գրպանեն ժամացույցը ու նայեցավ։

Շուտով կեսօր։ Կամաց-կամաց երթալու էր վանք, պատառ մը բան ուտելու և անկե օրիորդ Մելինյանին։ Այսօրվան պտույտին տեղը արդեն շատոնց ընտրած էր տղան։ Ընտրած էր ձորի ամենեն ժայռոտ ու ամենեն սեպ շավիղներեն մեկը, որ վերը արտերը կհաներ. պետք էր, որ վերելքը դժվար ըլլար. ատիկա անհրաժե՛շտ էր։

Ու երիտասարդը ժպտեցավ ինքնաբավական. ու ներքին հուզված անհամբերությունը ալ չդիմանալով՝ կռնակին վրայեն մե՛կ շարժումով դարձավ դեմքին վրա և հենվեցավ աջ արմուկին։

Նույն վայրկյանին էր, որ հեռուեն ճամփուն վրա սմբակներու տրոփ մը լսվեցավ. տղան մտացիր այն կողմ նայեցավ մեքենաբար. բայց հանկարծ ցնցվեցավ, կնճռոտեցավ ճակատը ու դեմքին գծվեցավ մաղձոտ դժգոհություն մը, անախորժ անակնկալի մը ծամածռությունը։

Իսկույն ճանչցեր էր իր երկու ընկերը։

Կամաց մը ելավ ոտքի ու ծառերուն ետևէն դուրս եկավ ճամփուն վրա։

— Արտաշե՛ս.— պոռացին երկուքը միաբերան, ձիերը խթեցին ու ճիշտ անոր առջևը թամբերնեն թռան վար։

— Հը՞, ի՞նչպես ես. ի՞նչ ըրիր նայինք։

— Ալեքսանդրապոլ մերիններեն մարդ տեսա՞ր։ Բագրատը ինչո՞ւ միասին չառիր. չէ՞ որ Անի գալ կուզեր։

— Վախնամ մեզի շա՛տ սպասեցիր։

— Վանահայրը ի՞նչ բանի է. հո՞ս է։ Չխոսի՞ս։

Վրա թափեցին Մինասն ու Սերոբը խառն ու արագ՝ երկու կողմեն աղու ձեռքերը պինդ թափ տալով։

— Վանահա՞յրը. այո՛, հո՛ս է. այսինքն... չգիտեմ. այս առտու քիչ մը ուշ եմ ելեր քունես ու դեռ երեսը տեսած չեմ.— կմկմաց վերջապես։

— Ա՛խ, դուն ծո՛ւյլ.— բացականչեց Մինաս իր հաստ ձայնովը։

Սա երկարահասակ, թիկնեղ, կարմիր ու այրած դեմքով, կլոր ու ցանցառ մորուքով, փոքր ու սուր աչքերով երիտասարդ մըն էր։

— Իսկ մենք ժամը հինգեն ի վեր ասպանդակներուն վրան ենք։

Վրա բերավ Սերոբ, որ նախորդի հակապատկերն էր. փոքրահասակ, թավ մորուքով, ավելի նուրբ կազմով. ու տեսակ մը մեղմ, մելամաղձոտ հայացքով, որ ակնոցներու ապակիին ետևեն ավելի տխուր ու ավելի միապաղաղ կդառնար։

Արտաշեսը մեջերնին առած՝ ձիերու սանձերեն քաշելով՝ երեքը միասին դեպի վանք դիմեցին։

— Ի՞նչ տեսակ մարդ է վանահայրը.— հարցուց կարճահասակը։

— Քիչ մը կծծի, քիչ մը շատախոս, քիչ մը խորամանկ, քիչ մըն ալ հանդուգն. ավերակի մը վանահա՛յր։

Տղու ձայնին մեջ արհամարհանքի ու հեգնելու այն աստիճան պարզ շեշտ մը կար, որ երկու նորեկները անգամ մը ակամա իրարու նայեցան։

— Երևի, նեղացուցեր է քեզի.— նկատեց երկարը։

— Ընդհակառա՛կը. մինչև անգամ ինծի սորվեցուց շուտով եպիսկոպոս դառնալու գաղտնիքը։



— Վա՞յ, ո՞րն է տեսնենք այդ գաղտնիքը։

— Շիտակը հիմա տրամադիր չեմ։ Ավելի աղեկ է նորեն իրեն կհարցնեք. իրիկո՛ւնը։

— Ինչո՞ւ անպատճառ իրիկունը։

— Ցորեկը սաստիկ զբաղված է, երկար պատմություններու գլուխ չունի. և լուրջ է զբաղված. պետք է վազել արտե-արտ, պետք է գյուղացիները հսկել ու հայհոյել. պետք է մառանը լեցնել. մառա՛նը, կատակ չէ։ Վանքի մառա՛նը։

— Այդ մարդը քեզի բան մը ըրեր է. ի՞նչ տարօրինակ խոսելու եղանակ է.— կրկնեց երկարահասակը խոժոռած դեմքով մը։

— Տարօրինա՞կ.— հարցուց Սիրաքյան անփույթ։

— Հա՛, Սմբատը քեզի բարև ըրավ.— ընդհատեց հանկարծ ակնոցավորը։

— Սմբա՞տը ով է։

— Քանի՞ Սմբատ կա մեր ընկերներուն մեջ.— պատասխանեց ընկերը տեսակ մը սրտնեղած։

— Ա՛խ, ա՛ն. նորեն նույն դատարկախո՞սն է։

— Դատարկախոսը դուն ինքդ ես։

— Ասիկա արգելք մը չէ, որ ան ալ նույն արհեստը ունենա։

Եվ ասիկա ըսված էր այնպես լուրջ ու պարզ շեշտով մը, որ ընկերները չկրցան ծիծաղնին զսպել։

— Երևակայե՛, ան ալ վճռեր է շուտով սարկավագ ձեռնադրվելու.— ավելցուց Մինաս։

— Մի՞թե։ Այդ մեծ զոհաբերությունը շիտակը անկե բնավ սպասելի չէր։

Ու «մեծ զոհաբերությունը» արտասանված էր ինքնահատուկ շեշտով մը։

— Ի՞նչ ըսել կուզես։

— Չէ՞ որ շարունակ կկրկնեք, թե ինքը վանական կյանքի համակրություն չունի, թե իր կոչումը...

— Կոչումը աղեկ, բայց քննությունը կարևոր է։

— Հա՛, տանկ ըսե հիմա կհասկնամ, անշուշտ գյուղե-գյուղ անինչան ու անոթի թափառելեն ավելի աղեկ է դյուցազնական անձնազոհություն մը ընելը։

— Իրավունք չունիս ուրիշները այդպես հեգնելու.— հանդիմանեց երիտասարդը վրդոված.— Ան ինչո՞վ է մեղմե պակաս, որ քիչ մը պարզ ու միամիտ բնավորություն ունի. ուրիշ ոչինչ։

— Ուրեմն մինչև անգամ մեղմե բանով մը ավելի է.— կցեց Սիրաքյան հանդարտ։

Երկու ընկերները նորեն նայեցան իրարու ու լռեցին։

Կես ժամվան չափ վերջը վանահայրը դարձավ վանք։

Արտաշես իր երկու ընկերները ներկայացուց ու դարպասի սեմին վրա կեցած խոսակցելու վրա էին, որ անդին Քանյաններու ոտնյակին առջևը երևցավ տիկինը դայակին հետ։

Սիրաքյան բարևեց հեռուեն։

— Ո՞վ են.— հարցուց Սերոբ։

— Քանյան Պարոյի հորեղբայրն է հոս իր ընտանիքին հետ. շատ համակրելի մարդիկ են. անկե՛ղծ, հյուրասե՛ր. իրիկունները թեյի հոն եմ սովորաբար. այս իրիկուն միասին կերթանք՝ շատ գոհ կմնաս։

— Լա՛վ. իրիկունը ժամերգութենեն վերջը երթանք.— համաձայնեցավ Մինաս։

— Ի՞նչ ժամերգություն. հոս ամեն օր ժամերգություն չկա։

— Ինչո՞ւ.— պնդեց երիտասարդը։— Եկեղեցի կա, ահա՛ հայր-սուրբը հոս է, մենք ալ դպիրները։— Եվ դիմեց ուղղակի վանահորը.— Հա՛յր-սուրբ, փառավոր եկեղեցի մը ընենք. քանի օր է սիրտս կարոտցեր է։

— Ի՛նչ կարիք կա ուրբաթ իրիկունով.— մռմռաց Արտաշես դժգոհ։

— Ախորժակդ կիրակի առտվան պահե, որդի՛.— կցեց վարդապետը։

Ու արագ մեկ-երկու քայլ առաջ վազելով՝ վերցուց գետնեն քարի կտոր մը ու վարժ թափով մը նետեց դիմացի կանաչեղենի ածուներուն մեջ, ուր հավեր էին ներս մտեր։

— Քշշա՛, անիծածնե՛ր։

— Շիտակ է, Մինա՛ս. այսօր եկեղեցի ընելու ի՞նչ կարիք կա. միս-մինակ. մեջտեղը ո՛չ մարդ կա, ո՛չ ժողովուրդ.— ավելցուց իր կողմեն ակնոցավորը ու նստեցավ սեմին վրա։

— Եկեղեցական կարգերն ու պաշտամունքները ժողովուրդին ցույց ընելու համա՞ր են նշանակված։



— Ժողովուրդին ցույց ընելու համար չէ, տիրացո՛ւ ջան, բայց ինչարկե ժողովուրդին համար է. ալ ի՛նչ ժամերգություն, եթե մեջտեղը ժողովուրդ չկա.— վճռեց հայր-սուրբը հավերու արշավեն ետ դառնալով։

— Կարծեմ աղոթքն ու ժամերգությունը Աստված փառաբանելու համար է, հա՛յր-սուրբ.— ըսավ երիտասարդը գեշ քողարկված կշտամբանքով մը։

— Ա՛, որդի՛, Աստված քու փառաբանությա՞նդ է կարոտ։ Եվ վերջապես մինչև հիմա արդեն ձանձրացած կըլլա ամեն օր միևնույն բանը լսելեն.— կատակեց ծերունին ճերմկած բեղերուն ու մորուքին մեջեն։

Մինաս բոլորովին կնճռեց ճակատն ու դեմքը։

— Ուրեմն ի՞նչպես արտահայտենք մեր հավատքը, մեր կրոնական սուրբ զգացումները. չէ՞ որ ժամերգությունը մեր ներքին հուզումներու խոստովանությունն է տիրոջ խորանին առջև։

— Տիրացո՛ւ, հավատքը ուրիշ բան է, եկեղեցին ու ժամերգությունը ուրիշ բան։ Ներքին հավատքը, ինչպես որ կըսես, երկարբարակ արտահայտություններու պետք չունի. իսկ եկեղեցական արարողությունները հնարված են ժողովուրդի սրտին համար. «Ի սփոփանս և ի մխիթարութիւն հաւատացելոց»։

Ու վերարկուին թևը ետ նետելով՝ իր ամուր քալվածքովը մտավ վանքին բակը։

— Այսպես է որ բոլորն սիրտս պաղեցուցեր են.— կանչեց Մինաս՝ վարդապետի հեռանալուն պես՝ իր վրդովված հոգիին բովանդակ մաղձովը։— Ո՛չ. մենք, նորերս, պարտավոր ենք նորեն հոգի ու ոգևորություն մտցնելու այդ սուրբ կարգերուն ու աղոթքներուն մեջ և բծախնդիր ճշտությամբ ամեն ինչ կատարելու։

Սերոբ ձեռքով ու դեմքով տատամսոտ ծամածռություն մը ըրավ ու կցեց խորհրդավոր ցած ձայնով մը.

— Սկզբունքով քեզի համաձայն եմ. սակայն ժամասացություն մը ավելի կամ պակաս, ատկե ի՞նչ վնաս։ Եկեղեցին ու դավանանքը ինծի համար ամենեն առաջ վահան մըն է մեր ազգային գոյության։

— Սիրելի՛ս, քանի՞ սատակ արժես դուն ու քու վահանդ, երբ ժողովուրդը հետզհետե սառն ու անտարբեր կդառնա դեպի հոգևորականությունն ու կրոնը։

— Ցավալի է, հոգիս, ցավալի. բայց ի՞նչ կրնանք ընել։

— Ի՞նչ. ա՛յ ես քեզի ըսեմ։ Եթե կուզես, որ ժողովուրդի մեջ նորեն ազդեցություն ձեռք բերես՝ պետք է ամենեն առաջ իր հավատքը, իր կրոնական զգացումները արծարծես։ Եվ որպեսզի իր այդ զգացումները բորբոքելու հաջողիս՝ պետք է ինքդ ամենեն առաջ այդ ջերմ հավատքը քու մեջդ վառես. միայն ճշմարիտ ոգեվորութենե ու խորին համոզումեն բխած խոսքը ժողովուրդի սրտին կազդե։

— Պայմանավ, որ այդ համոզումն ու ոգևորությունը բնածին ըլլան.— նկատեց Սերոբ իր մտածումներուն մեջեն։

— Բնածին թե ո՛չ բնածին՝ պիտի ունենաս։ Հոգևորականներուս գոյության իմաստը, մեր ազդեցության աղբյուրը հավատքն է միայն։ Հոգևորականությունը բարձրացնե՞լ կուզես՝ պետք է հարցի արմատին դիմես։ Հավա՛տք քու պաշտոնիդ վրա վերո՛ւստ նշանակված ըլլալու, հավա՛տք մեր պապենական գողտրիկ ծեսերուն ու աղոթքներուն, և ասոնց սուրբ Հոգիին շնորհքովը կարգադրված ըլլալուն, հավա՛տք հանդերձյալի արդար հատուցման հավիտենական գեհենին ու մշտնջենական երջանկության, որուն դեմ ի՛նչ է մեր երկրավոր վաղանցիկ կյանքը։

Այս իմաստի ճառեր Սիրաքյան հաճախ էր լսած Մինասի բերնեն, բայց կարևորություն չէր տված՝ «Մարդը հավատք ունի, ինչ ընենք» մտածելով. դեռ տեսակ մը պատկառանք ալ էր զգացած կարծես։ Բայց այսօ՛ր ինքն ալ չէր գիտեր ինչպես՝ քանի աչքերը ընկերոջը դեմքին գամած՝ անոր խոսքերուն ականջ կդներ, այնքան ավելի ու ավելի անախորժ ճմլող բան մը ու վրդովմունք կզգար իր մեջը. ոչ մեկ կերպ ինքզինքը չէր կրնար ազատել այն զգացումեն, որ այդ ամբողջ ոգևորությունը շինծու, փքուն ու անիրական բան մը ուներ իր մեջը։

Եվ իր այդ տպավորությունը ընկերոջը երեսին նետելը շուտով պահանջ դարձավ իրեն համար, բայց ինքզինքը զսպել ուզեց. վիճել չէր ուզեր. «իրե՞ն ինչ ուրիշները»։

Արդեն ընկերը՝ Սերոբն ալ խոսքը դարձուց կատակի.

— Բայց քանի որ այս երկրավոր վաղանցիկ կյանքին մեջն ենք դեռ՝ ավելի լավ է որոշենք՝ թե ո՞ւր պիտի երթանք հացեն ետքը պտտելու. և խոսքը Արտաշեսինն է։



— Հացեն ե՞տքը.— հարցուց Սիրաքյան ու ցնցվեցավ. այլևս ջուրն էր ինկած Շուշիկի հետ պտույտը։

— Այդչափ դժվար է ընտրե՞լը։

— Տեսնենք. երեք տեղ մը կերթանք.— պատասխանեց վերջապես դժկամ։

## Ի

Դուրսի նորածին լույսը եկեղեցիին նեղ ու երկար փոքրիկ պատուհաններեն հազիվ ներս կսպրդեր. և թանձր խավար էր դիզվեր անկյունները, սյուներուն ետևը ու գմբեթի փոսին մեջ։

Խորանին վրայի զույգ մը մոմերու ուժասպառ լույսերը վարդապետի արտասանած յուրաքանչյուր բառեն կարծես կսարսռային, տեսակ մը հիվանդոտ դեղնություն թափելով իրենց անմիջական մոտիկ փոքր տարածության մը վրա, որ հետզհետե որքան հեռու, այնքան ավելի կգունաթափեր, կմարմրեր, մինչև որ մութի շերտերուն մեջ վերջնականապես խեղդվեր։

Վարդապետը սյունին տակը արձանացած՝ իր աղոթքները կծամծմեր իրարու ետևե. գիրքը աղտոտ ու գորշ եկեղեցական շապիկը վրան, ժանգոտ ու ղողանջող բուրվառը ձեռքը սեղանին դեմ կեցած՝ վարդապետին արագությունը հասնելու կջանար. մինչ տիրացուները՝ նույնպես մոմոտ ու գորշ շապիկներու մեջ՝ գմբեթին ճիշտ տակը դիրք էին բռնած գրակալին աջին ու բարակ մոմերով շարականը լուսավորած կերգեին իրենց կարգին՝ իրենց առավելության ու արվեստին գիտակից հաստատ ու լեցուն շեշտերով։

Երեքեն միայն Սիրաքյանն էր, որ կես քայլի մը չափ ետ քաշված, ձեռքերը ծալլած կուրծքին ու գլուխը քիչ մը աջ ծռած անշարժացեր էր։

— Տղա՛, չերգե՞ս.— դարձավ Սերոբ հանկարծ ընկերոջը դադարի մը վայրկյանին։

— Գիտես, որ ո՛չ ձայն ունիմ, ո՛չ ալ եղանակներեն բան կհասկնամ.— պատասխանեց տղան կարճ։

— Բայց վերջապես պիտի սորվի՞ս, թե չէ՞.— վրա տվավ երկարահասակը շտապ ու սկսավ «ալելույա»-ն։

«Սորվի՞լ...»։

Արտաշես աչքերը խորանի մոմերեն մեկուն լույսին հառած կմտածեր։

Ընկերը իրավունք ուներ. այդ բոլոր երգերը, սաղմոսները, մաղթանքները, աղոթքները, չէ՞ որ այդ իր արհեստն էր դառնալու շուտով. իր արհեստը, գիտնալ այդ ամենը և ամեն օր կրկնել։ Հանկարծ սկսավ հաշվել, թե տարեկան ընդամենը քանի՞ ժամ է իր այդ պարտականությունը։ Առտուները մոտ երկու, ժա՛մ մը իրիկունը, տոն օրերն ու պատարագը միասին առնելով՝ միջին հաշվով օրական չորս ժամ. ան ալ օրվան ու աշխատանքի ամենաթարմ ժամերեն։ Ու մտքով սկսավ երկար-բարակ 4-ը 365-ով բազմապատկել. եղավ 1460։

«Օրիորդ Մելինյանը գուցե իրավունք ունի. մեղք չէ՞ ձևական պարտականության մը համար սպանված այսչա՞փ ժամանակին»։

Տեսակ մը սրտնեղություն եկավ վրան ու մտածումները ընդհատեց։

Մինաս անոր աջին կեցած՝ աղոթքի խոսքերուն հետևելով՝ շուտ-շուտ կծռեր ու կխաչակնքեր երեսը. խոշոր, փառավոր ու ծանր խաչեր ամբողջ կուրծքին ու դեմքին վրա։

Արտաշես սկսավ դիտել. նախ շրթունքը խածավ միայն և ուզեց կարևորություն չտա. բայց շուտով սկսավ ջղային դառնալ ու զայրանալ։

Այդ միջոցին էր, որ ետևեն եկեղեցիին դռան թեթև ճռինչը լսվեցավ։

«Քանյաններն են». անցավ տղու գլխեն, ամոթի պես բան մը վազեց միջեն ու առանց ետ դառնալ համարձակելու՝ ականջները սրեց։

Ներս մտնող չկար. գուցե հովն էր, կամ դուռը ինքնին։ Միայն տղուն մեջ ալ զամված մնաց այն համոզումը, թե ուր որ է հիմա Քանյանները ներս պիտի մտնեն։ Ընկերները նախորդ իրիկունը հայտնած էին անոնց այս առտու ժամասացության ըլլալու մասին, և կիները շատ հավանական է, որ հետաքրքրվեին։

Դուրսեն լսվող ամեն ծպտուն տղու սիրտը նետել կուտար ու լսելիքը կլարեր։

Անգամ մը նայեցավ իր վրան. երկար շապիկը մոմոտ ու աղտոտ կախված էր ուսերեն, կուրծքի բացվածքեն իր հագուստները կերևային. յուրաքանչյուր թևին վրա փեթտոտած ոսկեթելով բան-



ված խաչ մը. նույն փեթտոտած ոսկեթելը նաև վարը շապիկին եզերքը, որուն տակեն տաբատին ոտքերը շատ ծիծաղելի կերպով դուրս կնետվեին։ Նայեցավ երկար իրեն, վերջը փորձի համար նայեցավ իր ընկերներուն վրա և հանկարծ շա՛տ, շա՛տ տարօրինակ թվեցավ իրեն այդ հագուստները, այդ դիրքը։

«Ո՞վ գիտե ո՛րչափ միցի մեղքնան պիտի Քանյանները». անցավ մտքեն. ու ամոթեն ու զայրույթեն կարմրեցավ։

Ո՛չ, չէր ուզեր, որ իրեն այդ դիրքին մեջ տեսնեին. պե՛տք չէր։

— Ես կերթամ,— շշնջեց կամաց մը ընկերներուն և առանց անոնց շվարած դեմքերուն ուշ դարձնելու՝ մտավ պահարան, հանեց շապիկը ու պատերուն տակեն արագ դուրս սպրդեցավ եկեղեցիեն։

Դուրսը պայծառ օր էր արդեն։ Արևը ձորի ձախ շրթունքին վրձինի մեկ շարժումով ոսկիի գույն էր քսեր. ու թա՜րմ, զո՜վ լեռնական օդ մը։

Բոլոր կրծքովը խոր շունչ մը առավ. վազեց իրենց սենյակեն վերցուց իր սրբիչը ու նետվեցավ վանքի դուռնեն դուրս, մինչ ձորի պատերուն մեջ վանքի զիլ փոքրիկ զանգակը սկսավ կոտրտված արձագանքներուն հետ խաղի ելլել՝ ժամասացության մեկ նոր բաժանումը ազդարարելով։

Քանյաններու բնակարանին դուռն ու պատուհանները բաց էին, թեև մեջտեղը ոչ-ոք չկար։

Տղան շտապ ձորեն վար վազել կուզեր, որ ետևեն իր անունը տվին.

— Պարո՛ն Սիրաքյան։

Քանյանն էր տան պատուհանեն։

— Ո՞ւր կշտապեք այդպես առանձին։

Տղան դիմեց դեպի պատուհանը։

Օրիորդն ալ եկավ պատուհան.

— Բարի լույս։

— Բարև, կերթամ լողանալու։

— Մինա՞կ. ո՞ւր են ձեր ընկերները.— հարցուց Քանյանը։

— Անոնք եկեղեցին են։

— Եվ դուք ո՞չ.— հարցուց աղջիկը զարմանքով։

— Ես ալ հոն էի. ներսի օդը քիչ մը շատ ճնշված էր. և սիրտս լողալ կուզե,— պատասխանեց երիտասարդը անսովոր համարձակ շեշտով մը ու տեսակ մը քմայնոտ։

— Իսկ մեր միասին պտույտները այլևս վերջացան իհարկե,— վրա բերավ Շուշիկ ժպիտը շրթունքին։

— Պարոնը չի կրնար ընկերները ձգել, պետք է անոնց հետ երթա, երևի գործ ալ կունենան միասին,— արտասանեց Քանյան։

— Ոչ՛, այդ չէ պատճառը. բայց պարոն Սիրաքյանը անշուշտ ալ ինծի հետ ըլլալե կքաշվի։

— Ինչո՞ւ, օրիո՛րդ։

Ու շփոթումեն ձեռքերը ուր դնելը չէր գիտեր։

— Նո՛ւ, պարզ է. ձեր ընկերներեն կակնածիք։ Արդեն երեկ իրիկուն նկատեցի, որ ձեր շարժումները բոլորովին ուրիշ էին ինծի հետ, տեսակ մը պաշտոնական։ Եվ ձեզի չեմ կրնար մեղադրել. կհասկնամ, որ ինծի մոտիկ ըլլալը ձեր հարգը պիտի ձգե ձեր պաշտոնակից ընկերներու աչքին։

Տղու աչքերը հանկարծ բոցավառեցան։

— Չրի ենթադրությունները, հարգելի՛ օրիորդ, դրեք մեկդի։ Եվ պատրաստ եղեք ճաշեն ետքը, որ երթանք պտույտի. և՛ այսօր, և՛ վաղը, և՛ ամեն օր, քանի որ ես հոս եմ. և՛ առանձին, առաջվան պես, ո՛ւր որ կուզեք, ի՛նչպես որ կուզեք, ե՛րբ որ կուզեք։

Այդ ոգևորության ու տղու աչքերուն այդ կայծկլտումին դեմ՝ Շուշանիկի այտերը հանկարծ հուր առին ու կուրծքը սկսավ թեթև մը դողալ։

— Շնորհակալ եմ,— ըսավ վերջապես աղջիկը գլխու թեթև շարժումով մը ձեռքը պատուհանեն դուրս պարզելով։

Տղան բռնեց ու թոթվեց։

— Ուրեմն կսպասեմ. ժամը երկուքին։

— Ժամը երկուքի՛ն, օրիո՛րդ. ցտեսություն։

Ու գլխարկովը անոնց վերջին բարև մըն ալ տալով՝ դեպի ձորին էջքը վազեց։

Շուշիկ աչքերովը հետևեցավ տղուն, մինչև անոր ժայռերուն ու ծառերուն ետևը աներևույթ ըլլալը. վերջը ծանր ու հանդարտ քաշվեցավ քիչ մը ետ, վերցուց իր պատուհանին մեջ ձգած կարը, նստեցավ ու սկսավ արագ աշխատիլ. տեսակ մը տենդոտ շարժումներով. հազիվ կարելի էր ասեղը նշմարել։



— Մե՞ղք այդ տղաքը,— բացականչեց տիկինը սենյակին խորքեն,— խելքս չի հասնիր, ինչպես են հոգևորականության այդպես սեր տվեր։

— Ի՞նչ կա չհասկնալու,— պատասխանեց ամուսինը,— Երիտասարդ, հափշտակվող տղաք են. ամեն բան տակնուվրա ընելու, անուն, աղմուկ հանելու պահանջը մեջը կեռա իրենց թարմ արյունին հետ. ու դեռ չի գործածված ուժեր ունին իրենց ջիղերուն մեջ. ատոր կըսեն գործունեության ծարավ։ Վանքի մեջ ականջնին լեցուցեր են, թե գլխուն վեղարն ունեցողն է ազգին փրկիչը. խեղճ տղաքըն ալ հավատացեր են։

Մինչ «խեղճ տղան» նույն թափովը կշտապեր ոտքի նեղ շավիղեն վար, որ նեղ ու երկար ժապավենի մը պես ինկեր էր ժայռերուն մեջ ծուռումուռ խիճ ու ավազ կգլտորեին անոր արագ քայլերուն տակեն, և հո՛ս ու հո՛ն այդ աղմուկեն խրտնած մեկերկու խլեզ ժայռերու մեջ ծերպ մը կաճապարեին իրենց երկար պոչերը ետևնուն քարշ տալով։

Ժապավենը կերկարեր ու մյուս եզերքը անցնելու համար կմտներ նույնիսկ գետակին մեջ, ուր ջուրեն դուրս ցցված քարերու շարք մը բղկտած ժապավենին փեռթերը կներկայացնեին։

Ջուրին վրա տղան թռչուց ժապավենը. ու քարե-քար ցատկելով՝ իջավ հոն, ուր սովորաբար լողալու կուգար։ Ահագին ապառաժներուն գրկին մեջ սեղմված գետակի ամենեն խորունկ ու ամենեն ընդարձակ տարածությունն էր, ուր մեկ կողմեն ջուրը բյուրեղ ցոլքերով ներս կխուժեր հանձնապատառ աղմուկով մը, մինչ մյուս կողմեն իր նախորդ ալիքներուն նման ի՛նքն ալ հանդարտած ու հիասթափ ճամփան կշարունակեր դժգոհության մրմունջը շրթունքներուն վրա։

Երիտասարդի հանվիլն ու ջուրը նետվիլը ակնթարթի մը գործ եղավ, վերին աստիճանի զվարթ ու կայտառ տրամադրությամբ մը։ Ջուրը սառն էր ու դանակի պես կկտրեր. և տղան կսառար ցավեն ու հաճույքեն՝ անոր հստակ ու հեղուկ մկաններուն մեջ ձուկի մը պես գալարելով։

Երբ վանք դարձավ՝ ընկերները եկեղեցիեն նոր ելած նստեր էին իրենց սենյակը նախաճաշի լուրջ ու մտախոհ դեմքերով։ Սենյակին դուռը կոնակին վրա բաց էր։

Սիրաքյան մեկ ոստումով ցատկեց ներս՝ թեթև ու աշխույժ։

— Բարի լո՛յս ձեզի։
— Աստծու բարի՛ն։
— Ո՞ւր էիր.— հարցուց երկարահասակը կարճ ու չոր։
— Լողալո՛ւ. այնպե՞ս հիանալի պաղ ջուր է։
Թոթվեց երեսսրբիչը ու փռեց սենյակի դռան քովը մամռոտ քարի մը վրա։
— Ասո՞ր համար եկեղեցիեն ելար.— հարցուց նույն հանդարտ ու չոր ձայնը, որուն տակեն գալիք փոթորիկը իր գլուխը ցույց կուտար։
— Դրեթե՛. քիչ մը սիրտս նեղ էր ներսը։
— Ա՞խ, այդպես չըսե՞ս, մարդ Աստծու.— մեջ նետվեցավ Սերոբ՝ ուրախ խնդրի այդ հաշտարար ձեր առնելեն։— Երևի շընչառության դժվարություն. խոնավ են հոս սենյակները։
— Իմ շնչառությունս ոչ մեկ դժվարություն չունի.— պատասխանեց Սիրաքյան ինքն ալ հետզհետե գրգռվելով այս հարցաքըննութենեն։
— Այն ատե՞ն.— շեշտեց Մինաս խիստ։
— Այն ատեն անպատճառ իմանա՞լ կուզես, թե ինչու եկեղեցիեն ելա. իմացի՛ր. արուհեստ ինծի անտանելի էին քու անվերջ խոշոր խաչերդ ու մեր միալար երգերուն համբառնական կրկնությունը. գո՞հ ես հիմա։
— Եվ դուն քանի մը շաբաթեն սարկավագ պիտի ձեռնադըրվիս, հա՞։
— Սարկավա՞գ...
Կարծես այդ բառը կյանքին մեջ առաջին անգամը կլսեր։
Բավական վերջն էր, որ կոտրած շեշտով մը ավելցուց.
— Համենայն դեպս ոչ տարին 1460 ժամ այդ մռայլ պատերուն տակ աղոթք մրմնջելու համար։
— Երանի՛ մեզի։ Կլսե՞ս.— դարձավ Մինաս Սերոբին։
Իսկ Սերոբ անհրաժեշտ համարեց այս սուր խոսակցության վերջ դնել ու բացականչեց բարկացած շեշտով.
— Ես հոս եկեր եմ թարմանալու ու պտտելու, և ոչ թե ձեր տխմար վեճերը լսելու։ Հերիք է վերջապես։ Ի՞նչ ենք ընելու ճաշեն ետքը. կուզեմ, որ բարձրանանք Ագարակ։
— Այո՛, արժե որ երթաք Ագարակ.— հաստատեց Սիրաքյան անտարբեր շեշտով մը, ներքին անհանգստությունը հնար եղածին



չափ քողարկել ջանալով.— Թեև ես այսօր ձեզի հետ գալ չեմ կըրնար։ Նախ որ վերը Ագարակի կողմերը ես արդեն եղած եմ քանի մը անգամ, և երկրորդ՝ օրիորդին խոստացեր եմ այսօր միասին Տեկոր երթալու։
— Որո՞ւն.— հարցուց Մինաս, կարծես ականջին չհավատալով։
— Օրիորդի՛ն, օրիորդ Մելինյանի՛ն։
Երկար ու կարճ ընկերները ակնթարթ մը շեշտ իրարու երես նայեցան։
Եվ ո՛չ ոք ոչի՛նչ չպատասխանեց։

## Ը

Արևը արևմուտքի առատմնավոր լեռներեն մեկուն ուսին հենած՝ խոշոր դեմքովը կծիծաղեր ընդարձակ լեռնադաշտի լայն մեջքին վրա, որուն մեկ կողմը ինկած էր Խծկոնքի ձորի երկար ու խոր ճեղքը. ճե՛ղք մը կարծես նշդրակով բացված ծերուկ բարձրավանդակի թիկունքին՝ վիթխարի վիրաբույժի մը հսկա ձեռքին տակ, որուն արդյունքն էր բացվածքին ծուռումուռ շրթունքը։
Շրթունքի այն մասին վրա, որուն տակ ձորին պատը սեպ վար կսահեր դեպի անդունդը, վերը ճեղքի ճի՛շտ եզերքին, գետի՛նը չորցած խոտերուն վրա ինկեր էին երկու վարդապետացուները։
Առտուն անոնք Արտաշեսի վարմունքեն վրդովված ու զայրացկոտ՝ նույնիսկ պտույտի տրամադրությունը կորսնցուցեր էին։ Իրիկվան դեմ միայն՝ «քիչ մը բացվելու համար»՝ բարձրացեր էին ձորեն դուրս լեռնադաշտը։ Այդ ելքը փոխեր էր արդեն անոնց տրամադրությունը և Արտաշեսն ու «իր հիմարությունները» վերջապես մեկ կողմ թողած՝ սկսեր էին կրկին իրենց սովորական խոսակցություններն ու ոգևորությունը, մինչև որ հոգնած նետվեր էին հող պահ մը հանգստանալու։
Մինաս ամբողջ երկայնքովը փռված կռնակին վրա, աչքերը երկնքի մաքուր կապույտին հառած՝ կմտածեր։
Կմտածեր և Սերոբ նստած, ոտքին մեկը դեպի կուրծքը ծալլած, դեմքը դրած ծունկին ու հայացքը վարը ձորի մեջեն վեր սլացող գմբեթներու կույտին գամած։

Հանկարծ կես մը ընկերոջը դառնալով՝ բացականչեց.

— Ամե՛ն, ամե՛ն լեռան կողքին, ամե՛ն ձորի մեջ հետք մը կա, կա մնացորդ մը ավերակ կամ շեն, որ կողմն ալ որ նայիս Թագավորի մը հիշատակը, իշխանի մը նվերը իր ժողովրդին։ Մարդ ամեն վայրկյան ակամա այդ Բագրատունիներու ստվերը իր շուրջը կզգա. այդ խելացի, խորամանկ ու հայրենասեր թագավոր-նախարարներու։ Եվ գիտե՞ս, տարօրինակ զգացում մըն է. կարծես հյուր եկած ըլլամ այդ իշխաններուն հողը. ամեն ավերակ, քար, բերդ կամ եկեղեցի պատմություններ կբանա իր ծոցեն։ Ա՛խ, ինչե՞ր, ինչե՞ր պահված չեն այդ թափթփած սյուներուն ու քարերուն տակ և անոնց արձանագրություններուն մեջ։ Եթե այդ բոլորը փորվեր, հետախուզվեր, որչափ թանկագին հնություններ դուրս պիտի ելլեին, ի՛նչ պատմական գանձ։

Ու ոգևորված աչքերը հպարտությամբ փայլեցան։ Ակնթարթ մը մտածեց ու կրկին վրա տվավ.

— Արդեն ի՞նչ բանի վրա ուշք են դարձուցեր մեր հոգևորականները մինչև հիմա։ Բոլո՛րը ծայրեն սկսելու է. ժողվե՛լ մեր հին գրականության փշրանքները, հանե՛լ մեր իշխաններու ու կաթուղիկոսներու պատմությունը այդ հողոտած արձանագրութենեն, հետըզհետև հավաքել այդ հնախոսական բեկորները, ձեռագիրները. էջմիածինը կարելի է առաջնակարգ կեդրո՛ն մը դարձնել այդ ժողովածուներուն ու մեր պարծա՛նքը։

— Կըլլա, կըլլա.— պատասխանեց Մինաս վստահ ու հավատքի խորին շեշտով մը՝ կռնակի վրայեն քիչ մը կողին դառնալով։— Արշալույսը ծագած է արդեն մեր կաթողիկե աթոռի միաբանության վրա։ Կարգապա՛հ, սրբակենցաղ հոգևորական միությո՛ւն մը նոր՝ բոլորը միաբան նվիրված մեր սրբություններուն, դարևոր ավանդություններուն ու պատմական բեկորներուն նախանձախնդիր պաշտպանության։

— Անշուշտ։ Միաբանություն մը շա՛տ ավելի ազգային, քան Վիեննան ու Վենետիկը. ան ալ մեր բուն ժողովուրդին մեջ, մեր բուն հողին վրա։

— Եվ մանավանդ մեր բուն առաքելական ու կաթողիկե սուրբ եկեղեցիին ծոցը։

Ակնթարթ մը լռություն տիրեց։



Մինաս հանկարծ ելավ նստեցավ. ու մատը թափ տալով ընկերոջ վրա՝ բացականչեց.

— Պե՛տք է, պետք է հասկցնել այդ կաթոլիկներո՛ւն, բողոքականներո՛ւն, որ մեր եկեղեցին քրիստոնեական առաջին դարերու կազմակերպության ամենեն անաղարտ նմուշն է. հիմնված երկու առաքյալներու ձեռքով. ամենազուտ, հերետիկոսություններե զերծ մնացած ամենահին եկեղեցին։ Մինչև հիմա ծուռ, խեղաթյուրեր են փաստերը, պատմությունը. աշխատեր են մուտք գործել մեր փարախը ու միամիտները գայթակղեցնել. իրենք խոսեր են շարունակ աստվածաբանական գիտություններու, ուսումնասիրություններու անունով, իսկ մերինները երեխայական բաներ են միայն պատասխաներ։ Բայց հիմա չգիտես ի՛նչպես սիրտս կեռա անհամբերութենեն. վայրկյան մը առաջ ե՞րբ պիտի ինքզինքնիս Գերմանիա նետենք. աստվածաբանությունը հիմնապես յուրացուցած դառնանք ետ, ու իրենց զենքերը իրե՛նց դեմ։

— Ինծի ճշմարիտ կատակ կթվի, որ քանի մը ամիսեն արդեն հեռո՞ւ, հեռու պիտի ըլլանք մեր հայրենիքեն, մեր այս հողեն ու ջուրեն։ Օտարությա՞ն մեջ։ Ճիշտ Սահակ-Մեսրոպի ժամանակները. եփրայերենի, ասորերենի, հունարենի խորերը թաղված...

— Եվ մա՛նավանդ Աստվածաշունչի աղբյուրներու համեմատության. էականը չմոռնանք։ Երբեմն պարզ «և» մը կամ «ուստի» մը ամբողջ դավանաբանական փաստ մը կրնա դառնալ և կրնա համառ վիճաբանություններու բովանդակ դեզ մը ջախջախել։ Կեցի՛ր դուն. այս երեք-չորս տարին ալ անշուշտ կանցնի. ու մենք նորեն հո՛ս ենք՝ այս հողին վրա՝ զինված ու պատրաստ մեր հավատքի ու ազգի զարգացմանն ու բարգավաճմանը համար կռվելու։ Ելի՛ր, ելի՛ր։

Ու ինքը ոտքի ցատկած՝ սկսավ ոտքովը ընկերը հրել։

Ելավ Սերոբ ալ և ուղղվեցան դեպի ձոր։

Արևը արդեն «գիշեր բարին» ըսեր էր շատոնց ու մութը խտանալու վրա էր, որ հասան իրենց սենյակը։

— Արտաշեսը դեռ չէ եկած.— նկատեց Սերոբ։

— Եվ դուրսը արդեն մութ է.— շեշտեց ընկերը։

Ու վայրկյան մը վերջը ավելցուց.

— Ո՛չ, այս իրիկուն հետը լուրջ խոսելու է և այս անհամու-

Ֆլյաններուն վերջ դնելու. ամեն բան իր չափը ունի վերջապես ու իր սահմանը։

— Եղբա՛յր, այդչափ ալ նուեն մի՛ ըլլար. գիտես, որ բնավորությունը քիչ մը համառ է, քիչ մըն ալ իր խելքովը ազատամըտությունն ծախել կուզե. այսինքն թե՝ ինչո՞ւ օրիորդի մը հետ շըրջելու պիտի չերթա, ի՞նչ վնաս, միթե վարդապետը մարդ չէ՞։

— Հիմարություն է անխորհուրդ տեղը իր վրա ամեն տեսակ բաներ խոսեցնել տալը.— պատասխանեց ընկերը խստորեն.— Հիմա ի՞նչ ըսել չեն մտածեր, եթե հանկարծ լույսը էջմիածին հանի, թե հո՛ս ձորերուն մեջ առանձին օրերով աղջկան մը հետ կթափառի. ո՞վ պիտի համոզվի, որ այդ բոլորը մաքուր է ու թթու ազատամտության հետևանք։ Ազատամտությո՞ւն...

— Բայց խելացի ու ազնիվ տղա է, վերջիվերջո խելքի կուգա. թո՛ղ անգամ մը սարկավագ դառնա, քիչ մը տարիքն ալ լինա...

Դուրսը ոտքի ձայներ լսվեցան. Մինաս ձեռքով նշան մը ըրավ ընկերոջը. կարճահասակը խոսքը կտրեց։

Ներս մտավ Սիրաքյան հանգարտ քայլերով ու անտարբեր ըլլալ ուզող ձևով մը բարևեց։

— Ի՞նչ բանի եք այս նեղ սենյակին անկյունը։

— Տնտեսուհիին կսպասենք, որ սամավարը տանանք։

Պատասխանողը Սերոբն էր։

— Բայց չէ՞ որ Քանյանները երեկ գիշեր հատուկ խնդրեցին, որ թեյի իրենց երթանք նորեն։

— Ի՞նչ կարևորություն կա ամեն իրիկուն. երեկ գիշեր հոն էինք՝ հերիք է.— հակառակեցավ Մինաս։— Քանյանը կհրավիրե, իր հաշիվը ունի, իր փտած փիլիսոփայությունները դուրս տալու ու մտքերուն մեջեն հեղնելու համար։ Այդ մարդիկը այդպես են արդեն. իրենք պատկվեր, կնիկնին առեր նստեր են ու իրենց փորեն անդին չեն մտածեր, իսկ ով ալ որ քիչ մը ուրիշ կերպ մտածելու ու գործ տեսնելու միտք ունի՝ ան ալ կծաղրեն։ Խեղճուկնե՛ր, ծաղրել գիտեն միայն։

— Ամեն մարդ իր համոզումը ունի.— նկատեց Սիրաքյան չոր։— Եվ ով որ իր համոզումը չի կեղծեր՝ ազնիվ մարդ է ան։ Իսկ մասնավորապես Քանյանի մասին աղեկ կըլլա, բոլորովին լռես. երանի ամենքը անոր կեսին չափ սրտաբաց ու կարեկից ըլլային. և



քեզի ո՞վ ըսավ, որ ան գործ չի տեսներ. իսկ իր կին ունենալու մասին այդպես արհամարհանքով խոսիլդ ուղղակի տգեղ է։

— Դուն սիրահարեր ես երևի այդ ընտանիքին վրա։

— Սրտանց ուրախ եմ այդ ընտանիքին հետ ծանոթացած ըլլալուս։ Դուք ալ որ քիչ մը մոտենաք, դուք ալ կհամակրիք։ Անոնց պարզ խոսելեն պետք չէ որ խրտնիս. մի՞թե քեզի համար ցանկալի է կեղծավոր ու խորամանկ մարդոց հետ գործ ունենալը։ Քալեցե՛ք երթանք։

— Ո՛չ.— եղավ վճռական պատասխանը։

Արտաշես կռթնեցավ դռան սեմի շրջանակին ու աչքերը մութին մեջեն ընկերոջը դեմքին շեշտեց։

— Ինծի՛ նայե, Արտաշե՛ս, դուն դեռ շատ պարզամիտ ու միամիտ ես և ըրածդ ինքդ ալ չես հասկնար. ես քեզի խորհուրդ կուտայի քիչ մը ավելի զգույշ ըլլայիր. առտուն չուզեցի խոսիլ՝ գրգռված էիր. հիմա կհուսամ ավելի պաղ մտածես։

— Եվ ի՞նչ է տեսնենք պաղ մտածելիքս.— հարցուց տղան ծաղրածու շեշտով մը, երկու ձեռքերը երկու կողմեն գրպանները դնելով։

— Երեխա չես վերջապես. պետք է հասկնաս, որ կրնան վրադ խոսիլ։

— Ի՞նչ կրնան վրաս խոսիլ։

— Սիրելիս, միթե ա՞յդ աստիճան միամիտ ես. վարդապետացու երիտասարդ տղա մը ու սիրուն աղջիկ մը շարունակ առանձին ձորի ժայռերուն մեջ։

— Է՞-է՞.— հարցուց տղան հազիվ իր ուռած զայրույթը զըսպելով։

— Ամեն բան կրնան եզրակացնել վերջապես։

— Եվ այդ կրցողը, այդ եզրակացնողը ո՞վ է.— կրկնեց տղան սեղմված ակռաներուն մեջեն դողացող ձայնով մը։

— Վերջապե՛ս, այս վանքին մարդիկը։

— Վանքի՛. հա՞-հա՞-հա՞ հա՞, հայր-սուրբիկս ու տնտեսուհին, իհարկե՛, իհարկե՛, վա՛նքը։

— Հոս խնդալու բան չկա։ Տնտեսուհին բավական ակնարկություններ ըրավ արդեն այսօր. երեսի ծամածռությունները տեսնելու էիր. առտուն ալ հայր-սուրբը բաներ մը հասկցուց, որ քեզի

քանի մը անգամ աղջկան հետ տեսեր է, մանավանդ մեր գալեն առաջ։

Տղան կարծես սկսավ մտածել. և վերջը վերին աստիճանի լրջությամբ ըսավ.

— Ուրեմն Քրիստոսատուր Հայր-սուրբը և Եղսո տանտեսուհին չեն բարեհաճիր, որ ես ալ իբրև մարդ, իմ բարեկամներս ունենամ, տեսնվիմ, խոսիմ։ Եվ երևի, Եղսո տանտեսուհիին այդ փաստարանությունը դուն ես վրադ առեր. ոչի՞նչ։ Սրտանց կշնորհավորեմ նոր պաշտոնդ։

— Արտաշե՛ս, հոգի՛ս, այդպես թեթև կարելի չէ վերաբերվիլ.— մեջ նետվեցավ վերջապես Սերոբ, որ մինչև հիմա լուռ մտիկ կըներ միայն։— Չէ՞ որ այդ բոլորը էջմիածին կհասնի. և հոն արդեն առիթ կփնտրեն վրանիս հարձակվելու համար. այդ արտաքին ձևականությունները պետք է հաշվի առնել։

— Ձևականությո՛ւն ու ձևականությո՛ւն։ Ձևականության համար առտու-իրիկուն ժամ երթամ, ձևի համար երգեմ, աղոթեմ, խաբեմ, ձևի համար դդում-գլուխ եպիսկոպոսի մը առջև խոնարհիմ, իմ կարծիքներս ծածկեմ, իմ համոզումներս ծռեմ ու կեղծեմ, ձևի համար հարաբերությունս կտրեմ մարդկության կեսին հետ. ձևի համար... Չէ՛, ինծի նայե՛, ես շնորհակալ եմ քու այդ ձևականութենեդ։

Եվ ընդոստ շարժումով մը դարձավ իր առանցքին վրա ու ցատկեց սեմեն դուրս։

— Ո՞ւր կերթաս.— պոռաց ետևեն Մինաս։

— Հո՛ն, ուր ձևականություններ ընելու պետք չունիմ։

Ու վանքի դարպասեն դուրս՝ ուղղվեցավ շիտակ Քանյաններուն բնակարանը։

Թ

Ամեհի ժայռը իր լերկ կոնակը արևին տված՝ նստեր էր դեպի դաշտին մեջ լայն ու ծալլապատիկ։ Փոթորիկներեն խորշոմած ճակատը իր սեփական ստվերին մեջ կախած՝ թաղվեր էր խոր մտմտուքի մեջ ժայռերուն այդ վիթխարի ճգնավորը։

Եվ գետակին կենսուրախ կոհակները զվարթ ու կայտառ երգ աղմուկով իրենք իրենց ու իրարու վրա գլտորելով այդ խոժոռ փի-



լիսոփային առջևը կհասնեին, ակնթարթ մը կանգ կառնեին զարմանքնուն. սակայն իսկո՛ւյն այդ խոր լրջության դիմաց ծիծաղնին զսպելու այլևս անկարող՝ անոր երկու կողմեն վար կցատկեին որքան կարելի է շուտ. և իրենց չարաճճի ու հնչուն քրքիջը կլսվեր դեռ երկար, նույնիսկ վա՛րը՝ հեռուե՛ն։

— Նստի՛նք հոս։

Ու շրջազգեստը քիչ մը ժողվելով՝ ինկավ աղջիկը քարի մը վրա, փիլիսոփայության ստվերին տակ, ջուրին ճիշտ եզերքը։

Արտաշես լուռ՝ նստեցավ անկե քիչ մը վար, ուրիշ քարի մը վրա, հանեց գլխարկը ու նետեց քովը։

Երեկոյանալու մոտ էր. հոգնությենեն շիկնած արևը տեսակ մը նարինջի ճառագայթներ միայն կթափեր շեղակի ձորի բերնեն վար։

Հոգնած էր զույգն ալ երկար քալելեն ու խոսելեն. հոգնա՛ծ ու հրահրա՛ծ։

— Օ՛խ, ինչպես զո՛վ է հոս, և ինչպես սիրո՛ւն, նայեցե՛ք անգամ մը վեր, պարոն Սիրաքյան. չէ՞։

Պատասխանը ուշացավ։

— Չե՞ք պատասխաներ։

— Օրիո՛րդ, ի՞նչ պատասխանեմ. այս ձորին մեջ ինծի համար ամեն բան գեղեցիկ է։

Ու գավազանը ջուրին մեջ կոխած սկսավ խառնել։

— Խե՛ղճ բարեկամս, դուք դժգոհ եք ձեր վանքի կյանքեն։ Ձեր շրջապատը նեղ ու գոց կուգա ձեզի, ինչպես կտեսնեմ։

— Գո՛ց, գո՛ց, այո՛, բառին ճիշտ գլխուն զարկիք. գո՛ց։ Այդ զգացումը ես առաջ ալ տարտամ կերպով մեջս ունեցած եմ, բայց այս քանի օր է որոշ կգիտակցիմ արդեն։

— Այս քանի օ՞րը. ինչո՞ւ ուղղակի այս քանի օրը։

Ու ճակտին թափած կարճ մազերուն տակեն խորամանկ հայացքը դամեց խոսակցի դեմքին։

— Այս ձորին մեջ, ինչպես ըսի, ամեն բան այնպես սիրուն է ու այնպես մարդը մտածելու կտրամադրե.— եղավ խուսափող ու մպտուն պատասխանը։

— Այո՛, ձեր մտածկոտ ըլլալը ես ալ նկատած եմ. մանավանդ ձեր ընկերներու գալեն ի վեր։ Ի դեպ, ինչո՞ւ երեկ իրիկուն անոնք մեզի չեկան։

— Արդեն ըսի երեկ, հոգնած էին քիչ մը։

— Անիկա ձեր չարավարության պատասխանն էր. ինծի ճըշմարիտ պատասխանը տվեք դուք։

Տղան լուռ գլուխը կախեց։

— Կուզե՞ք ես ձեզի ըսեմ։

— Հապա՛։

— Որովհետև ձեր ընկերները պայրացած էին, որ ժամերով ինծի հետ էիք առանձին։

Տղան նորեն չպատասխանեց։

— Չէ՞,— ըսեց ազդեցիկ ինքնավստահ ձայնով մը։

— Ենթադրե՛նք թե։

— Եվ այդ բոլորեն վերջը այսօր դուք նորեն ինծի հետ եք։

— Ինչպես որ կտեսնեք։

— Անիկա է, որ ինծի կզարմացնե։

— Ինչո՞ւ։

— Չէ՞ որ այսպիսի ձեր վերաբերմունքին նույն անհաճո տեսարանները պիտի ունենաք ձեր ընկերներուն հետ։

— Չեմ կարծեր. բայց և գիտցեք։ Ձեզի անցած օր ի՞նչ ըսի, օրիո՛րդ. իմ գլխուս տերը ե՛ս եմ։

— Եվ այս բոլոր գլուխ ցավն ու անհաճոությունները միայն ինծի համար, իմ պատճառովս։ Չգիտեմ, ճշմարիտ, ինչպես շնորհակալություն հայտնեմ ձեզի կամ ինչպես վարվիմ, որ ձեզի անախորժություն չպատճառեմ։ Գուցե ավելի լավ է, որ վերջ տանք մեր պտույտներուն։

— Վերջ տանք մեր պտույտներո՞ւն,— կրկնեց տղան երազկոտ՝ անկարելի բաներու շեշտով մը և ավելցուց.— Եթե գիտնայիք, օրիորդ, թե դուք և թե ընդհանրապես ձեր ընտանիքը իմ վրաս ինչ տպավորություն կընե, այն ատեն այդ պարապ ու ավելորդ խոսքերը չէիք ըսեր։

— Ի՞նչ տպավորություն։

— Ի՞նչ կարիք կա ծածկելու,— բացականչեց տղան հանկարծ ջերմ ու կտրուկ շեշտով մը։— Իմ մինչև հիմա ճանչցած մարդիկներեն ոչ ոք վրաս այն տաք ու հափշտակող ազդեցությունը ըրած չէ, ինչպես ձեր քեռայրն ու դուք։ Պարոն Քանյանի ամբողջ խոսվածքին մեջ արդեն այնպես վստահություն ու անկեղծություն մը կա, որուն անկարելի է չհամակրիլ։

— Քեռայրս ալ ձեզի շատ է համակրած, ձեր ամեն մեկնելեն



մեկնելուն նույնը կկրկնե, թե դուք շատ խելացի ու մաքուր բնավորության տեր տղա եք։

— Իրա՞վ. անչափ ուրախ եմ իր այդ կարծիքին համար։ Ի՞նչ չէ։ Կտեսնե՞ք, օրիո՛րդ, ինքս վարդապետացու մարդ նստեր եմ ձեր դեմը խոստովանանքի։

— Բայց ինծի համար ամենեն էականը չխոստովանեցաք դեռ։

— Այսի՞նքն։

— Թե ե՞ս ինչով ձեր այս վստահությանն ու համակրանքին արժանացա։

— Դո՞ւք, դո՛ւք...— կմկմաց տղան բախտավոր ժպիտով մը։— Հոդ շատ բաներ կան իրարու խառնված։

— Օրինակի համար։

— Օրինա՛կ, ձեր տեսակ մը բնական հպարտությունը ինծի շատ գրաված է, միևնույն ժամանակ և պարզությունը. վերջապես ձեր մտածումներն ու հայացքները կյանքի մասին, ձեր անկախության ձգտումը, և այն, որ ձեր մորն ու փոքր եղբայրներուն համար աշխատիլ կուզեք. և այլն և այլն. այսչափը հերիք չէ՞։

Ընդհատեց հանկարծ ու խնդաց։

— Ուրախ եմ անշուշտ, որ մեր միասին անցուցած ժամերը ձեր վրա անհաճո տպավորություն չեն թողած։

— Մեր միասին անցուցած ժամերը, օրիո՛րդ Մելինյան, ես իմ ամբողջ կյանքիս մեջ ալ չեմ մոռնալու. ո՛չ այս ձորը, ո՛չ մեր թափառումները, ո՛չ խոսածնիս, ո՛չ իսկ ձեր ձայնն ու շարժումները։

Աղջիկը գլուխը քիչ մը աջ ծռած՝ լուռ ու անթարթ կնայեր երիտասարդին։

Մինչ տղան կշարունակեր նույն տաք ու բաց շեշտովը.

— Անտարակո՛ւյս ատիկա ինքներդ ալ շատ աղեկ գիտեք, բայց կետ մը կա, որ չգիտեք և գուցե չեք ալ կրնար հասկնալ, թե ինչ աստիճան ինծի համար հիմա անհրաժեշտություն դարձած է ձեր մտերմությունը, ձեզի հետ խոսիլը, ձեր առջև իմ մտածումներս ու տպավորություններս հայտնելը։

— Կկարծե՞ք ուրեմն, որ չեմ հասկնար։

— Այո՛, որովհետև դուք իմ զգացումներս ալ ձեր զգացումներուն վրա պիտի չափեք. իսկ իմ բարեկամությունս ի՞նչ մասնավոր արժեք մը կրնա ունենալ ձեզի համար։ Պատահական հանդիպում մը, գուցե զվարճալի ժամանց մը այս ձորերուն մեջ. բան

մը, որ վաղը մոռցած եք արդեն։ Իզուր մեղմել մի՛ փորձեք. ես գիտեմ։

Աղջիկը կուրծքը շիտակ, համառ նայվածքը հառած երիտասարդին վայրկյան մը լուռ մնաց. վերջն ալ սկսավ խոսիլ բարկացած շեշտով մը.

— Ուրեմն կկարծեք, որ առանց ձեր մտերմությունը մասնավորապես գնահատելու, առանց ձեր կյանքով ու մտածումներով հետաքրքրված ըլլալու, առանց դեպի ձեր ընկերությունը մասնավոր հակում մը ունենալու, ես այսպես ժամերով ու օրերով կթափառիմ ձեզի հետ առանձին այս ձորերուն մեջ ու այսպես սրտանց կլսեմ ձեզի և կպատմեմ ամեն բան։ Չէ՛, ճշմարիտ ինծի շատ աղեկ ճանչցեր եք ու քիչ մը առաջ կըսեիք, որ իմ հպարտությունս է ձեզի մանավանդ դուր եկած։

Տղան կարծես երազի մեջ էր. շրջապատը մոռցած, մոռցած ինքզինքը, ամբողջ հափշտակությամբը կնայեր Շուշիկի բոցոտ, բարկացած ու մագնիսացնող աչքերուն։

Աղջիկը ընդհատեց ու կարծես առարկության կսպասեր։

— Շարունակեցե՛ք, օրիո՛րդ, շարունակեցե՛ք ձեր այդ հանդիմանությունը. կաղաչե՛մ։

Եվ այնպես անքող ուրախություն մը դրոշմվեցավ դեմքին, այնպես հմայված շեշտ մը կդողար իր ձայնին մեջ, որ աղջիկը ստիպվեցավ ժպտելու ու ձեռքը տղուն մեկնեց.

— Եկե՛ք, մնանք նորեն հին բարեկամներ. այո՞։

Երիտասարդը հափշտակեց այդ ձեռքը։ Վայրկյան մը ձեռքերը իրար սեղմած մնացին ջերմ ու բաժնվեցան։ Ու երկուքը քով-քովի ճամփա ինկան նորեն գետակին քովեն դեպի ձորն ի վեր։

Նախ լուռ էին. ոչ մեկը խոսելու տրամադիր չէր, երկուքի մեջն ալ հուզում մը կար ու իրարու նայելե կխուսափեին։

Վերջը սկսան խոսիլ հատկապես իրենց այդ անհարմար դիրքը կերպ մը սքողելու ջանքով ու հնար եղածին չափ անտարբեր նյութերու վրա։

Շուշիկ իր հիվանդանոցի կյանքեն բան մը պատմելու վրա էր, որ հանկարծ կանգ առավ ու հագուստին փեշերը ժողվեց։

Ձորի պատեն. ժայռերուն ծերպերեն, հինգ-վեց տեղե ջուր վար կծորեր հանդարտ, մամռոտ կանաչության մը մեջեն. և ձորի պատեն մինչև գետը եղած տարածությունը, որուն վրայեն զույգը



կքալեր, քանի մը կանգուն երկարությամբ բոլորովին թաց էր ու ջուր։

Սիրաքյան նախ փայտը այդ ջուրը խրեց, վերջը փորձեց մեկ ոտքովը. խոր չէր։

— Հողը պինդ է ու քարոտ. քիչ մը պետք է կոշիկները թրջել, ուրիշ ոչինչ.— վստահություն ուզեց տալ ընկերոջ։

— Անշուշտ եթե ես ալ ձեր հաստ կաշիե կոշիկները ունենայի.— առարկեց աղջիկը ու մնաց անշարժ։

— Աղե՛կ. վերադառնանք։

— Ոչ. շարունակե՛նք. ձորի այս մասը մանավանդ դեռ չնորհքով չեմ եղած։

— Լա՛վ. հանեցե՛ք կոշիկները։

— Ո՞ւհ, երկար-բարակ պատմություն։

— Այն ատեն, օրիորդ, եթե կուզեք կարճ պատմությունը...

Տղան ժպտեցավ ու խոսքը կտրեց։

— Այն ատեն ի՞նչ։

— Այն ատեն... այն ատեն կմնա, որ ես ձեզի այդ կտորը վրայեն անցընեմ։

— Ի՞նչպես կրնաք դուք ինծի անցընել,— հարցուց աղջիկը զարմացած դեմք մը շինելով։

— Ինչո՞ւ չեմ կրնար. կկարծեք ձեզի բարձրացնելու չափ ուժ չունի՞մ։

— Ինծի գրկեք, տանի՞ք. դո՞ւք, վարդապետ մարդ, է՜, դուք դժոխք երթալե չե՞ք վախնար.— բացականչեց աղջիկը վերջին աստիճանի դեմքի կոմիկ արտահայտությամբ մը։

— Հապա ի՞նչ ընեմ, քանի որ ոտքերնիդ թրջել չեք ուզեր. կոշիկները հանել չեք ուզեր. և ետ դառնալ չեք ուզեր.— կմկմաց տղան կես մը կոտրված, կես մը վարանոտ։

Ու միևնույն ժամանակ անոր աչքերուն մեջ այնպես պարզ կվառեր խնդի՛րք մը, աղաչա՛նք մը իրեն չհակառակելու։

Աղջիկը ակնթարթ մը շունչը բռնեց, հանկարծ քայլ մը ըրավ դեպի տղան ու վեր բարձրացնելով թևերը՝ ըսավ.

— Հապա՝ փորձեցե՛ք տեսնեմ, քանի որ այդչափ ձեր ուժովը կհպարտանաք։

Վարդապետացուն երկրորդել չտվավ. ծռեցավ քիչ մը, գրկեց ու մեկ թափով բարձրացուց։

— Ա՜ու.— պոռաց աղջիկը վախցած, երբ հանկարծ ոտքը գետնին կորվեցավ։

Ու երկու թևերը բնազդորեն նետեց տղուն վիզը։

Արտաշես իր դեմքին տակ աղջկան դողացող կուրծքը զգաց և անոր բազուկներուն մեջ իր գլխուն օղակվիլը։

Սիրտը թպրտաց, կորանցուց ինքզինքը։ Կքալեց։

Ո՞ւր, ո՞ր կողմ, ի՞նչպես։ Ոչինչ չէր տեսներ։ Ոտքին տակ թաց քարերը կգլտորեին, ջուրը կցայտեր, թրջած խոտերը կճողփեին. ան ոչինչ չէր զգար։

Ու ջուրին մեջեն դուրս էին ելած արդեն, բայց ան կշարունակեր դեռ. և գուցե դեռ շա՜տ երկար, եթե աղջկան հնչուն ծիծաղը չսթափեցներ։

Կանգ առավ ու աղջկան ոտքը դրավ գետին։

— Տեսե՛ք, թաց տեղը ուր է մնացեր.— ժպտեցավ աղջիկը իր այլայլած դեմքովը, քանի մը քայլ անդին մատնանիշ ընելով։

— Է՜, ի՞նչ ընենք, ի՞նչ վնաս.— պատասխանեց տղան անսովոր համարձակ շեշտով մը։

— Շնորհակալ եմ. երևի հոգնեցաք. ես բավական ծանր եմ.— ըսավ աղջիկը խոսակցության լուրջ ձև տալով։

— Հոգնի՞լ. ես ձեզի այդպես կրնամ տանիլ ամբողջ ժամերով, մինչև... մինչև ձորին ծայրը, մինչև ուր որ ուզեք։

Ու դեմքը նորեն հրահրեցավ։

— Եթե կրնայիք՝ ինչո՞ւ չտարիք.— հարցուց Շուշիկ հանկարծ։

Տղան չգիտցավ ինչ պատասխանե. և չհասկցավ ալ իսկապես, թե աղջիկը ինչ ըսել կուզեր։

— Նո՜ւ, բարեկամս,— ըսավ աղջիկը ծանր խոսվածքով ու արտասովոր արտահայտությամբ մը.— երբ նորեն ձեր վանքը դառնաք, երբ առտուն կանոնի ժամերգության ատեն մութ կամարներուն տակ ու ձեր սև զգեստներուն մեջ վարդապետներուն շարքը կենաք և երբ հոն սրտերնիդ նեղանալու սկսի, այն ատեն մտածեցե՛ք այս հարցիս վրա. իսկ հիմա տո՛ւն երթանք. արդեն ուշ է։

Տղան բոլորովին լռեցավ։

— Բայց ի՞նչ ըսել կուզեք, օրիո՛րդ։

— Ինչ որ ըսի։

Եվ սկսավ խնդալ։



## Ժ

Աղջիկը հազիվ տուն ձգած՝ Արտաշես ծանր քայլերով ու տեսակ մը ակամա ուղղվեցավ ընկերներուն քովը։

Վանքի բակը քարի մը վրա նստեր էին երկուքն ալ քով-քովի, լուռ ու լուրջ. ըստ երևույթին իրեն կսպասեին։

Մոտենալուն պես՝ ելան ոտքի։

— Քալե՛, միասին քիչ մը դեպի վար երթանք, եթե շատ հոգնած չես.— ըսավ Մինաս վերջին նախադասության երգիծանքի շեշտ մը տալով։

— Երթա՛նք.— եղավ կարճ պատասխանը։

Դուրս ելան բակեն, լուռ ու հանգիստ առաջ շարժվեցան։

«Ճիշտ Շուշիկի ըսածին պես». մտածեց Սիրաքյան ու կամաց մը ժպտեցավ քթին տակեն։

Երբ դարպասեն բավական հեռացեր էին, վերջապես նորեն Մինաս խզեց լռությունը.

— Գիտե՞ս, Արտաշե՛ս, մենք որոշեր ենք վաղը առտու մութին ճամփա ելլենք դեպի Անի։

Ու բոլոր բառերը հատիկ-հատիկ շեշտված էին։

Սիրաքյան շրթունքը խածավ, քիչ մը մտածեց և իր անտարբեր շեշտը պահել ջանալով՝ պատասխանեց.

— Աղե՛կ, դուք մեկնեցե՛ք. երևի ութը-ինը օրեն ե՛ս ալ ձեր ետևեն կհասնիմ։

— Ի՞նչ.— բացականչեց Սերոբ դող ելած։

— Ո՛չ. դո՛ւն ալ հիմա մեզի հետ պիտի գաս.— շեշտեց Մինաս պաշտոնական խոսվածքով մը։

Սիրաքյան ժպտեցավ ու նայեցավ անոր։

— Այո՛, ես ատիկա կպահանջեմ քեզմե։ Եվ ա՛ն իրավունքով, որ քու վարմունքդ ու հիմարություններդ ո՛չ միայն քեզի, այլ մեզի ալ հավասարապես անպատվություն կբերեն. դուն քու անունիդ հետ մեր անունն ալ կկոտրես։ Գիտե՞ս այս իրիկուն հայր-սուրբը ի՞նչ ըսավ. «Նոր տիրացուները մեր ժամանակվան աչքը գոց ոչխարները չեն, կըսե, դեռ վարդապետ կամ եպիսկոպոս դառնալու ալ չեն սպասեր. միայն ինծի կթվի, որ գործը քիչ մը շատ բաց կբռնեն», կըսե։ Հիմա կհասկնա՞ս, թե ինչ իրավունքով քեզմե

Կպահանջեմ. դուն իրավունք չունի՛ս մեր վարկը, մեր գիրքը կոտրելու։

Սիրաքյան հանկարծ կանգ առավ, դարձավ խոսողին ու զսպված ձայնով մը ըսավ.

— Ինծի նայէ՛. ինծմե ո՛չ ոք ոչինչ պահանջելու իրավունք չունի. իսկ ով կկարծե, թե իմ մերձավորությունը իրեն անպատվություն կբերե՝ կրնա անմիջապես հեռանալ. արդեն մեկնիլ կուզեք. բարի ճանապա՛րհ։

— Ուրեմն ա՞յդպես. աղե՛կ, միայն գիտցի՛ր, որ այդ հեռացողները պարտական են բոլոր եղելությունը հանգամանորեն պատմելու ուր որ հարկ է։

— Ատիկա հետաքրքիր չէ ինծի, պատմեցե՛ք, խոսեցե՛ք ինչ և ուր որ կուզեք։

— Բայց հետևա՞նքը։

— Ի՞նչ հետևանք։

— Պիտի հարկադրվին քեզի ձեռնադրվողներուն ցանկեն դուրս ձգելու։

Սիրաքյան ամբողջ մարմնովը ցնցվեցավ. դեմքին վրայեն բան մը անցավ արագ. և երկա՛ր, լո՛ւռ, թանձրացող մութին մեջեն ընկերոջը հայացքին մեջը նայելեն վերջը՝ պատասխանեց հատուկ ղարկով մը.

— Եվ շա՛տ ալ խելացի բան կընեն։

— Ա՛խ.— հառաչեց Սերոբ ապշած ու նայեցավ երկարահասակին։

— Ուրեմն խնդիրը այս աստիճան հեռուները գացած է արդեն.— մրմնջեց վերջինս ակռաներուն մեջեն, գլուխը ցավակցաբար շարժելով։

— Այո՛, այո՛, այս վայրկյանիս ես պարզ, շատ պարզ կտեսնեմ, որ իրավունք ունիք։ Ո՛չ, իմ բանս չէ, իմ բնավորությանս բանը չէ այդ շղթայված, ճմռռած կյանքը. այդ իր ներքին համոզումներուն, իր բնածին զգացումներուն դավաճանությունը. շատ խելացի բան կընեք, նետեցե՛ք ինծի ձեր ցանկեն դուրս։

— Չէ՛, բարեկամ,— ընդմիջեց Մինաս խստորեն.— իմ կարծածես շատ ավելի խորն է թափանցեր մեջդ թույնը։ Անկեղծ խոսելով՝ ես քու բնավորությանդ մասին շատ ավելի բարձր գաղափար ունեի։ Բնավ չէի կրնա երևակայել, որ աղջկան մը կտորը քե-



զի այդպես անմիջապես խելքե հանել կրնա, այդպես բոլոր սրբությունները ոտքի տակ տալ, տված խոստումդ արհամարհել, մինչև հիմա փայփայած ծրագիրներդ ուրանալ ու մեր բարձր նպատակները պատռել ու անդին նետել այդպես։ Այդ աստիճանի ողորմելի, թույլ ու զգայարանքներուդ գերի չէի երևակայեր ես քեզի։ Ապուշի մը պես սիրահարեցար առաջին հանդիպած աղջկան. մանկաբարձուհի՛ մը. արհեստն ալ իրեն պես հիանալի. շնորհքեն հայտնի է ինչ ըլլալը. խոսվածքը, քալվածքը, մանչու մազերը. ո՛չ համեստություն, ո՛չ պարկեշտություն։

Սիրաքյան վերջին խոսքերը չլսեց անգամ։

«Սիրահարա՞ծ», կմտածեր. և ակամա գլուխը քիչ մը վար թեքեցավ. «սիրահարա՞ծ, իրա՞վ»։

Տղու այդ կոտրած դիրքը ընկերներուն սիրտ տվավ. ու Մինաս ձայնը փոխեց.

— Կտեսնե՞ս, սիրելիս, որ նորեն քու ընկերներդ քեզի ձեռք կուտան սատանայի փորձության վայրկյանին։ Այդ տեսակ փորձության ենթարկվիլը իհարկե հանցանք չէ, ոչ ալ մեղք, բայց էականը հաղթելն է, տակեն հաղթական ելլելը։ Դուն ընկերներո՛ւդ ականջ դիր միայն, չե՛ս զղջար։ Ուրեմն վաղը առտու կանուխ կմեկնինք. տո՛ւր ձեռքդ։

Ու ձեռքը մտերմորեն տղու դաստակին դպցուց։

Արտաշես թոթվվեցավ, թևը ետ քաշեց արագ ու գլուխը հպարտ վեր բարձրացնելով՝ ըսավ արհամարհոտ.

— Իմ ընկերս ա՛ն է, ով ինծի կհասկնա։ Վաղը առտու կրնաս երթալ՝ ուր որ կուզես. ինծի հետ գործ չունիս։

Եվ առանց ընկերներու քարացած դիրքին ուշք դարձնելու արագ հեռացավ ու աներևույթ եղավ մոտակա ծառերուն ետևը։

Այս վերջին օրերը տղու մտքեն արդեն քանի մը անգամ անցեր էր թեթև, թե ինքը իր ընտրած կոչումին համար չէ կարծես, թե ինքը իր ամանին մեջը չէ ինկած, թե իր հակումները կրոնավորի պարտականություններուն հետ զույգ չեն երթար։ Բայց ատիկա տարտամ զգացում մըն էր եղած միայն. իր ձեռնադրության վրա կնայեր իբրև կատարված որոշ իրողության վրա. արդեն խոսք տված վերջացած բան էր, որու մասին այս կամ այն պատճառով գուցե կարելի էր քիչ մը ցավիլ, բայց միայն այդչափ. ետ դառնալու գաղափարը անգամ գլուխը եկած չէր։ Բայց գաղափարի փո-

խարեն եւ գտնալու ցանկությունը, առանց իր գիտակցության, այն աստիճան զորեղացած ու հող էր գրաված իր մեջը, որ ընկերոջ կողմեն թեթեւ ակնարկ մը եւս գտնալու հնարավորության մասին, ու իր վարդապետանալու ամբողջ շենքը փլած էր մեկ անգամեն։ Շենք մը, որուն հիմքերը առաջվընե խախտեր էին արդեն վերջին օրերու խոսակցությունները, դեպքերը ու իր անվերջ առանձին մտածումները։

Ժայռի լերկ գանգ մը հոգի ներքին շերտերեն հետաքրքրությամբ դուրս էր երկնցուցեր իր վիզը մութին մեջ, ձորի դատարկության վրա. կարծես իր խավարի վարժված տեսողությամբը դիտելու համար վարն ու շուրջը ու տեսնելու, թե գոնե հո՛ն՝ մայր-երկրի ծոցին վրա՝ գոյությունը որեւէ խորհուրդ մը ունի՞, թե՞ հոն ալ նո՛ւյն դարավոր օրենքներու միակերպ, անիմաստ ու դանդաղաշարժ կրկնությունն է, ինչ որ խո՛րը՝ մայր-երկրի ծոցին մեջ։

Եվ ճի՛շտ այդ դուրս երկնցած լայն ծոծրակի արմատին մոտիկ՝ վեր կալանային երկու քույր նրբամեջ բարդի։

Հո՛ն, ձորի եզրին, այդ զույգ բարդիներուն տակ Սիրաքյան նստեցավ գետին՝ ժայռի լերկ ծոծրակին վրա։ Տխուր էր ու դըժգոհ։ Ընկերներուն հետ ունեցած այդ առաջին բաց ընդհարումը անախորժ, ճնշող տպավորություն մը թողեր էր վրան, որուն կմիանար խառնակ ու իրար հակասող զգացումներու պատճառած անհանգստությունը։

Երկար մնաց ան նստած՝ այդպես խոժոռ ու անշարժ, մինչեւ որ սրտին մոտերը ուղղակի ցավի նման ճմլում մը ստիպեց գլուխը բարձրացնելու. խոր շունչ մը առավ ու հայացքը ինկավ դիմա՛ցը, վե՛ր։ Հո՛ն, ձորին բերանը գոգավոր ժայռի մը եզերքին լույսի բարակ երիզ մը կցոլար. երիզը քիչ-քիչ լայնցավ, պայծառացավ ու անոր ետեւեն հանդարտ դուրս սահեցավ լրիվ լուսինը ու ակնթարթ մը կանգ առավ կարծես ժայռի այդ գոգավոր շրթունքին վրա՝ սկիհին վրա բռնված նշխարքի մը պես։

Եվ տղան հանկարծ մտաբերեց, որ ինքը այլեւս հոգեւորական չէր. վեղարավոր աբեղա՛ն, խուցի չոր կյա՛նքը, միայնա՛կ ու միակե՛րպ, եկեղեցական պաշտամունքները իրենց խունկերովն ու սաղմոսներովը, այդ բոլո՛րը ալ երազ մըն էր իրեն համար, անցած երա՛զ մը, ուրկե հիմա կարթնար։

Եվ այդ մտածումը նախ ախորժ թեթեւության մը թափեց իր



զգացումներուն վրա. հանկարծ սիրտը ուժգին զարկավ ու վայրի ուրախություն մը խուժեց իր կուրծքը. չէ՞ որ ալ ազա՛տ էր ինքը. ազա՛տ՝ իր հանձն առած պաշտոնի անհաճո պարտականություններեն ու անիմաստություններեն. ազա՛տ՝ վանքի գոց ու ճնշող կյանքեն. ազա՛տ՝ իր զգացումն ու հայացքները վարագուրելու անհրաժեշտութենեն. ազա՛տ՝ ինչպես դուրսի բնական մարդիկն էին։ Դո՛ւրս. շո՛ւտ դուրսի աշխարհը, դուրսի կռիվներուն ու աղմուկին մեջ, դուրսի կյանքովն ու աշխատանքովը, դուրսիններուն հետ... ու դուրսի աղջկան։

Եվ հուզման ներքին թափեն ցատկեց ոտքի. նայեցավ շուրջը։

Մութը փարատած էր։ Լուսնի գունաթափ լույսին տակ ձորին բերնեն ապառաժները մրցումի էին ելեր, թե ո՞վ իրենցմե իր շուքը ամենեն ավելի հեռուն, ամենեն ավելի վար նետել կրնա. վա՛ր, մինչեւ հո՛ն, ուր գետակը արտորալով փեշերը ժողված կվազեր. փեշերը իր արծաթթել շղարշին, որ միայն լուսնի այցելությանը պահեստի սնդուկեն կհաներ։

Աչքերը այդ փայլփլուկին, տղան ալ սկսավ գետակին հետ վար վազել վերի ճամփուն վրայեն։

«Ուրեմն ինքը կսիրե՛ր այդ աղջիկը». իրեն այդպես էին ըսեր։ Ինքը մինչեւ հիմա հարած այն գաղափարին, թե կուսակրոն մըն է, առանց որոշ ոչինչ խորհելու՝ իր բոլոր զգացումներուն վրա կնայեր, իբրեւ պարզ բարեկամության, մտերմության վրա, թեեւ կզգար, որ շատ տարօրինակ ու խորթ տեղ թելեր կային բարեկամության այդ հյուսվածքին մեջ. բայց չէ՞ որ արդեն ինքնին բացառիկ բան մըն էր այդ մտերմությունը. մտերմությո՛ւնը դեռատի աղջկան մը հետ։ Եվ հիմա մեկ անգամեն իր երեսին կըսեին, թե ինքը կսիրեր, թե իր մտերմությունը ո՛չ այլ ինչ էր, եթե ոչ պարզ սեր, որուն մասին այնչափ լսած էր ու կարդացած. սեր դեպի հակասեռ մը։ Եվ այդ նորությունը ինչպես քիչ զարմանք կպատճառեր հիմա իրեն. չէ՞ որ իրողությունը նույնն էր, ինչ որ առաջ. անունն էին փոխեր միայն. ձգտո՛ւմ մը դեպի աղջիկը, հափշտակությո՛ւն մը, ոգեւորություն մը անոր մոտիկութենեն, պահա՛նջ մը ըսելու, խոսելու, իր մտածումներն ու տպավորությունները անոր հայտնելու, եւ այդ բոլորի գումարը, որ մինչեւ հիմա «տարօրինակ բարեկամություն» էր, ուրիշները անվաներ էին «սեր». դիցո՛ւք, ինքը համաձայն էր եւ այդ նոր անվանակոչության։

«Անվանակոչությո՛ւն». իր մտածած բառը իրեն ալ տարօրինակ եկավ. խնդաց։ Ու մեկեն բուռն պե՛տք մը զգաց խոսակցելու, երգելու, աղմկելու։ Ի՛նչ այդպես մի՛ս-մինակ կթափառեր լուսնին տակ. մի՛շտ մինակ. հերիք չէ՞ր։ Եվ հիշեց, որ Քանյանները հիմա թեյի վրա էին և անշուշտ կզարմանային իր ուշանալուն։

Ուժգին թափով մը դարձավ կրունկին վրա ու երգ մը սուլելով ետ շտապեց։

Ինքը աներևույթ եղավ շուտով ձորի պատին ձգած թանձր ստվերին մեջ, բայց իր սուր ու զվարթ սույլը կհնչեր դեռ երկար. և բարձր քարանձավներու խավար խոռոչներեն արձագանքները քնկոտ ձայնով մը իրենց նինջը, խանգարողի սուր շեշտերը կկրկնեին. մե՛կը չարացած, մյո՛ւսը հեգնելով ու բոլորն ալ դժգոհ։

## ԺԱ

Երբ Սիրաքյան աչքը բացավ՝ պայծառ օր էր. սենյակը մարդ չկար։ Սեմի վրա դեպի դուրս նստած էր Սերոբ և գլուխը դռան շըրջանակին հենած կնայեր հեռուն՝ մտքերու մեջ թաղված։

Երբ ներսը շարժում լսեց՝ դարձավ ետ։

— Արթնցա՞ր, ծո՛ւյլ Մարտիրոս,— ըսավ մեղմ ու կատակող շեշտով մը։

— Ի՞նչ կընես հոս.— հարցուց տղու քնկոտ ձայնը։

— Կսպասեմ քեզի, որ ելլես, երթանք միասին լողալու։

— Մինասը ո՞ւր է։

— Չգիտեմ. դուրս ելավ։

Արտաշես ցատկեց անկողնեն, արագ հագվեցավ, զարկավ սրբիչը ուսը, որ ձորը իջնեն։

— Հապա այս առտու մեկնելի՞ք պիտի. ի՞նչ եղավ.— հարցուց երբ վանքի բակեն կելլեին։

— Անխե՛լք. ըսածիդ ինքդ կհավտա՞ս. առանց քեզի ո՞ւր կրնանք մեկնիլ։ Այդ տեսակ խոսքեր տաքցած ատեն կըսվին, բայց մի՞թե հնար է իրագործել։

— Ինչո՞ւ ո՛չ։

— Քեզի ձգենք՝ հեռանա՞նք. կվայլե՞ ատիկա պաշտոնակից, սրտակից ու նպատակակից ընկերներու։



— Բայց մակդիրներեդ ոչ մեկ հատը այնքան իմ վերաբերմամբ ճիշտ չէ։

— Ինչպե՞ս թե։

— Չէ՞ որ ա՛լ ցուցակե դուրս նետված մարդ եմ ես։

— Դո՛ւմ. կարծես Մինասի չափազանցությունները սիրող բնավորությունը չես գիտեր. ա՛ն ըսավ, դուն ալ սրտիդ առիր, երևի, հա՞։

— Ամենևի՛ն, ըլլալիքը ատիկա է. այս ձևով թե այն ձևով։

— Վե՛րջ տուր, Արտաշե՛ս, այդ անհամ կատակին.— ըսավ Սերոբ տեսակ մը դժկամած։

— Հոս կատակ չկա. իմ վարդապետությունս այնքան ծալլված ու դարակը դրված խնդիր է։

Սերոբ կանգ առավ դեպի ձորը վազող նեղ արահետին վրա ու կծկված դիմագծերով շեշտ ընկերոջը երեսը նայեցավ։ Ու ակընթարթ մը լռութենե վերջ՝ հպարտ ու հստակ շեշտով մը կցեց.

— Եթե քու անձնական երջանկությունդ մոռնալու չափ բարձր չէիր կրնար մնալ, եթե մեջդ այդ մարդկային գերագույն զոհաբերությունը ընելու չափ ուժ չէիր զգար, ինչո՞ւ խոսք տվիր կուսակրոնության։

— Զոհաբերությո՞ւն։ Կարծես դուրսը քի՛չ կան այրիներ ու ամուրիներ։ Սիրելի՛ս, չխաբենք ինքզինքնիս. հիմա սկսած է ալ ամեն բան ինծի ուրիշ գույնով երևալ. այդ անձնազոհություն ըսածնիս պարզապես խուսափում մըն է դուրսի կյանքի դժվարություններեն ու նյութական մաքառումներեն, ուրիշ ոչի՛նչ։

— Անխիղճ կխոսիս, Արտաշե՛ս։

— Ճշմարտությունը կխոսիմ։ Վրան ավելցո՛ւր նաև աժան փառասիրությունը. ո՛չ քու ուժերուդ առավելութենեն, ո՛չ քու սեփական արժանիքեդ օր մը կդառնաս եպիսկոպոս, գուցե և ավելի. ստորին պաշտոնյաները խունկ կծխեն փիլոնիդ շուրջը, կվայլես մեծավորի անուն, կդառնաս մեծ մարդ։

— Բայց լռե՛. ամո՛թ է, ամո՛թ։

— Մի՛ վրդովվիր, սիրելի՛ս. իհարկե այս բոլորը մերկ կերպով ո՛չ դուն մտածած ես, ո՛չ ես. բայց կրնա՞ս ձեռքդ խղճիդ վրա ըսել, որ այս ամենը, անշուշտ ավելի անորոշ կերպով ու ավելի բանաստեղծական անուններու տակ, քեզի համար հրապուրիչ չէ եղեր ու

քու վարդապետանալուդ վրա չէ ազդեր։ Վերջին օրերս այս հարցերուն վրա ես շատ եմ խորհեր, խորհե՛ և դուն։

Սերոբ խոժոռ ու անթարթ ընկերոջը կնայեր։

Երկուքն ալ կեցեր էին գեմ-գեմի երկու ժայռերուն մեջ ինկած նեղ անցքին վրա՝ Սերոբ թեթև մը ժայռի մամռոտ կողին հենած, Արտաշես՝ արահետին ճիշտ մեջտեղը՝ տաք ու կրքոտ խոսվածքով մը անդադար ձեռքի սրբիչը օդին մեջ շարժելով։

— Հիմա իմ ունեցածս է կռիվով, կյանքի՛ մեջ, իմ սեփակա՛ն ումերովս ինծի համար ճամփա բանալ։ Կուսակրոնի այդ պատրաստ, լայն ու հանգիստ ճամփեն քալելը քաջություն չէ։

— Ուրեմն քեզի համար գոյություն չունի՛ն այլևս մեր հոգևորականության գերը, ժողովուրդին կարիքները։

— Կհիշե՛մ, մեր վերջնական խոսք տալու առեններն էր, թե ինչպես ուղեղս կշարչրկեի իրոք կենսական բաներ մը գտնելու համար, որոնք իմ հոգևորական դառնալս աչքիս անհրաժեշտ դարձնեին. պետք էր անպատճառ ինքզինքս համոզեի և ճարեցի իհարկե թուքով փակցուցած բանի մը բաներ, որոնք ահա՛ թուքի չորնալուն պես սկսան վար թափիլ։ Իրականությո՞ւնը կուզես. հոգևորականներու ձեռքը հիմա շա՛տ քիչ բան կա կենսական, այսինքն՝ իսկապես ժողովուրդի համար անհրաժեշտ։

Սերոբի դեմքը կարեկցոտ արտահայտություն մը հագավ. նույնիսկ չպատասխանեց։

Իսկ ընկերը շարունակեց.

— Մե՛ր ազգության ու մեր ծրագիրներուն մեծագույն մասը, եկո՛ւր քեզի հետ անկեղծ խոստովանինք, որ միայն մե՛ր դյուրության համար է, մե՛ր օգտին, վեղարավորներուս. ավելորդ տեղը ժողովուրդի հաշվին չըրենք։ Կալվածական բարեփոխումներ, տնտեսական կանոնավորություն, վարչական կեդրոնացում, փառավոր շենքեր, բարձրագույն ուսում, գրադարան և ուժեղ միաբանության մը հիմնարկումը. ասոնք չե՞ն։

— Է՛, այդ բոլորը ժողովուրդին համար չէ՞։

— Ո՛չ։

Երկուքն ալ պահ մը լուռ էին։

Սիրաքյան հանեց գլխարկը, մատներովը մեկ-երկու անգամ սանրեց մազերը, ծածկեց նորեն գլուխը ու կրկնեց.



— Ոչ, ժողովուրդը մեզմե խեր չունի. մենք կտրված ու կղզիացած մարմին մըն ենք հասարակութենեն դուրս։ Այդ կողմեն քահանան մեզմե ահագին առավելություն ունի՝ մինչև վերջը գոնե իր ժողովուրդին մեջն է. անոր նեղ ու լայն օրերուն, խինդ ու վշտին մասնակից։ Իսկ մենք, տե՛ս, քահանայությունը չենք ընտրած։

— Ամեն մարդ իր տեղը. շա՛տ ստացողեն շա՛տ կպահանջվի։ Վերջապես ատիկա դատարկ պատճառաբանություն է. եթե ըսածներուդ համոզված ես՝ եղիր տերտեր։

Սիրաքյան ծիծաղեցավ դառն ու հեգնոտ ծիծաղով մը։

— Ո՛չ. պատմության այդ գլուխը ինծի համար փակված է. ես կգտնեմ ուրիշ ճամփա մը ժողովուրդի վարի խավերուն մեջ մտնելու։ Ու առանց որևէ հոգեկան բռնադատումի, առանց որևէ ստի ու կեղծիքի։

Սերոբ ձեռքի կասկածի շարժումով մը առաջ նետվեցավ դալբացկոտ։

— Ի՞նչ բառի մը պոչեն բռներ կերթաս։ Հոս ո՛չ խաբել կա, ո՛չ ստել. ի՞նչ կեղծիք։ Կեղծե՞լ. մեր ըրածին կըսեն պարզապես ժողովուրդի ըմբռնումներուն հարմարում. կարելի չէ ամբոխին ամեն կարգի ճշմարտություններ ըսել. և վերջապես ան քու ճշմարտություններուդ պետք ալ չունի։

Սիրաքյան ակնթարթ մը այլշած կանգ առավ, աչքերը չեշտ ընկերոջը դեմքին հառած։ Բայց մատներու ջղաձգական անընդհատ կծկումեն, որով սրբիչը կճմռթեր, պարզ էր, որ ներսը իրարանցում կար։

Վերջապես ձայն հանեց. միայն անսպասելի կերպով հանգիստ ու մեղմ ձայնով մը.

— Այդպես ուրեմն. ան պետք չունի իմ ճշմարտություններուս. ամբոխը պետք է պահել իր նախապաշարումներուն ցանցին մեջ պինդ սեղմած. չէ՞ որ Աստծու կամքով այդպես եղեր է ու այդպես ալ պիտի երթա. ի՞նչ ամբոխի բանն է գիտությունն ու ճշմարտությունը, որը միայն մե՛նք հասկնալ կրնանք։ Ահա՜, սիրելի՛ս. ժողովուրդի անունով մեր իրարու գլուխ ուսեցնելը արտաքին ծածկոցն է միայն. դարերու սրահանջած վերարկուն, որ ամեն խոսք իր վրա պիտի նետե հարգանք ու անձնական հաջողություն վաստկելու համար. բայց ներքուստ մեզի համար ան միշտ նույն ամբոխն է, որ ո՛չ բան հասկնալ կրնա, ո՛չ ալ հասկնալու պետք ունի։

— Ինծի սխալ հասկցար.— սրբագրեց Սերոբ իր ըսածը։— Ես միայն ըսել ուզեցի, որ մասսան կամաց-կամաց պետք է իր հասկացողություններեն դուրս քաշել. իսկ մինչև այդ՝ ստիպված ենք հարմարվելու ու քողարկելու որոշ բաներ։

— Այդ տեսակ պարապ խոսքեր գլուխս չի մտներ.— բացականչեց Արտաշես տաքցած։— Ես հիմա բոլորովին ուրիշ կերպ կմտածեմ. ճշմարտությունը որքան պարզ ու բաց ըսվի, այնքան ավելի աղեկ. այս սերունդը չի հասկցավ՝ կհասկնա հաջորդը. իսկ այդ լռելու ու ստելու ծայրը ո՞ւր պիտի երթա։ Ո՛չ, ես այլևս ճակատս բաց կուզեմ, կուզեմ անկաշկանդ իմ համոզումներս ամենքին ըսեմ։ Այդ հավիտենական հարմարվելու ու քողարկվելու սկզբունքը փախկոտներու, զառամածներու և ետ մնացողներու քաղաքականությունն է։ Բա՛ց է. ով կուզե թող երթա այդ ճամփեն. իսկ ես այլևս ո՛չ վեղարին երկար ծածկույթը կուզեմ մտածումներուս վրա, ո՛չ ալ փիլոնին կաշկանդող փեշերը քայլերուս շուրջը։

Եվ ուժով մը քաշեց սրբիչը ձախ ուսեն ու զարկավ աջ ուսը։

Կարկամ արտահայտություն մը դրոշմված էր Սերոբի դեմքին ու քարացած կեցեր էր քարին տակ։

— Դե՛, Սերո՛բ, ես իմ խոստովանությունս ու ապաշխարանքս վերջացուցի. քալե՛, երթանք մկրտվինք։

Ու թեթևցած աշխուժով մը արագ առաջ շարժվեցավ։

Բավական ցատկեր էր քարե-քար, երբ նոր նշմարեց, որ ետևեն եկող չկար։ Նայեցավ ետ. ընկերը ծանր-ծանր կբարձրանար վեր, դեպի վանք. նույն արահետովը, որով իջեր էին։

«Իհարկե, հեթանոսին հետ միևնույն ավազանը չի կրնար մտնել». մտածեց ինքնին՝ ժպտիլ ուզելով։ Բայց ժպիտը սառեցավ շրթունքին վրա ու ցավ մը զգաց. սարերով ընկեր էին եղած և հին ճամփաները կբաժնվեին։

Սերոբ երբ սենյակ մտավ՝ ճակատ ճակատի գտնվեցավ Մինասի հետ, որ անհամբեր կերթևեկեր։

— Բան դուրս եկա՞վ,— եղավ առաջին հարցը։

— Ի՞նչպես չէ. և տեսնեիր ի՛նչ բաներ դուրս եկան։

— Խոսքը ետ առնելու մասին նորեն ակնարկություն ըրա՞վ։

— Ակնարկությո՞ւն. լմնցած-վերջացած խնդիր է։ Աստվա՛ծ իմ։ Ի՛նչ խայտառակություն. ի՛նչ տպավորություն պիտի ընե այս բոլորը վանքի ու ամենուն վրա. առաջին քայլին այսպես թեթև վե-



րաբերմունք ու խոսքի դրժում. մարդիկ հիմա ինչ ըսես վրանիս մտածելու իրավունք ունին։

— Ո՛չ. անկարելի է. պարզապես չենք թողներ։ Միայն ի՛նչ գնով ալ որ ըլլա այդ տխմարը հոսկե հեռացնելու է. անմիջապե՛ս։

— Անօգուտ է. մեկ մը լսելու էիր, թե ինչեր կխոսեր. ալ զո՛ւր բան է։

— Կարծես անոր հիմար-հիմար խոսիլը առաջին անգամը ըլլա. թո՛ղ անգամ մը նորեն վանք տանինք՝ ես խելքի կբերեմ։

— Մի՛ հուսար։ Եվ վերջապես հոսկե հեռացնելն ալ դյուրին խնդիր չէ. քանի որ աղջիկը հոս է, ան հոսկե չի հեռանար։ Ի՛նչ խայտառակություն, Աստվա՛ծ իմ, ի՛նչ խայտառակություն։

— Մի՛ հուսահատիր. միայն պետք է քաղաքականությամբ վարվիլ։

Ու այդ բառերուն մեջ վճիռը տված մարդու մը ինքնագիտակից շեշտը կար։

Սերոբ ակամա ընկերոջը երեսը նայեցավ հարցական։

## ԺԲ

Մինաս ձեռքովը ուսի փոշին թափ տալով՝ վանքի դուռնեն դուրս ելավ, դեպի Քանյաններուն կողմը։

Նախ ծանր կքալեր՝ գլխուն մեջ բոլոր հնարավորությունները տակնուվրա ընելով, թե ինչ միջոցով աղջկան հետ վայրկյան մը առանձին մնալու հաջողի. վերջը քայլերը արագացուց, մտածելով, որ հոգին-սուրբ անշուշտ կերպ մը կներշնչե հարմար վայրկյանին հարմար ընելիքը։

Տանը քանի մը քայլ էր մնացեր, որ քիչ մը անդին, ծառի մը շուքին տակ նշմարեց օրիորդ Մելինյանը։ Կտրած կոճղի մը վրա նստած, հենած ծառի բունին, գլուխը կախ կկարդար, թիկունքը դեպի ուղան։

Մինաս ուրախութենեն խոր շունչ մը առավ. «Աստված հետս է», մրմնջեց. ու շտապեց դեպի աղջիկը։

Մոտեցող ոտքի ձայնը Շուշիկի ընթերցումը ընդհատեց. և ան թեթև մը դարձավ ետին։

— Բարև՛ ձեզի, օրիո՛րդ Մելինյան։

— Օ՛, բարև՛, պարո՛ն. ի՞նչ կընեք, բնավ մեջտեղ չկաք. պարոն Սիրաքյանը ըսավ, որ շարունակ կշրջիք. հիմա ալ երևի նորեն շրջելու կերթաք։

Վրա տված աղջիկը աշխույժ, տղու անունը կուլ տալով, որը չէր հիշեր։

— Ո՛չ, օրիո՛րդ, պտույտի չեմ ելած. եկած եմ մասնավորապես ձեզի հետ խոսելու. և բարեբախտաբար ձեզի ալ հոս առանձին կգտնեմ։

Աղջկան առաջին զգացումը վախի պես բան մը եղավ. անակնկալի մը անորոշ վախը։ Բայց իսկույն գուշակեց, որ խնդիրը իր ու Արտաշեսի հարաբերության շուրջն է դառնալու ու հետաքրքրություն մը հաջորդեց նախորդ տարտամ վախին։

— Ինծի՛, մասնավոր ըսելի՛ք մը, և ան ալ առանձի՞ն.— հարցուց իրարու ետևե խորին զարմանքի արտահայտությամբ մը։

— Այո՛, օրիո՛րդ։

— Հապա՛, խնդրե՛մ։

Վարդապետացուն չգիտեր ինչպես սկսի։ Մարմնին ծանրությունը մեկ ոտքեն մյուսին անցուց, վերջեն աջ ոտքին տված գերակշռությունը և հանկարծ ըսավ.

— Գիտե՛ք, օրիո՛րդ, վաղը Ածկոնքեն մեկնիլ կուզենք։

— Մի՞թե. արդեն կշտացա՛ք. ըսենք իրավունք ալ ունիք. մարդ եթե քանի մը օր այս ձորին մեջ կենա՝ ա՛լ տեսնելու բան չի մնար. հավանական է, որ մենք ալ շաբաթե մը մեկնինք։

Մինաս նորեն կանգ առավ. աղջիկը խոսակցությունը գիծեն հաներ էր։ Ակնթարթ մը խառնեց մորուքը ու ավելցուց.

— Ձե՛րը ոչինչ, բայց մենք ստիպված ենք վերադառնալու։

— Անշուշտ գործե՛ր ունիք վանքը։ Այդչափ մի՛ շտապեք, պարո՛ն, քիչ մը ազատ օդ շնչեցե՛ք։

Շուշիկ խոսակցությունը կարծես դիտմամբ կշեղեր, կարծես հաճույք զգալով դիմացինը նեղ դրության մեջ դնելեն։

— Աստծու աշխարհքին վրա օդը ամեն տեղ ազատ է.— պատասխանեց տղան լրջությամբ։

— Իրա՞վ.— ժպտեցավ աղջիկը տեսակ մը նուրբ երգիծանքով։— Այն ատեն բարի ճանապարհ կցանկամ ձեզի և հաջողություն ձեր գործերուն։



— Շնորհակալ եմ։ Միայն կետ մը կա և այդ կետի համար է, որ եկած եմ ձեզի հետ խոսելու։

— Եվ այդ կե՞տն է։

— Որ մեզի օգնեք հոսկե հեռանալու։

— Ձեզի օգնե՞մ. ե՞ս. չեմ հասկնար։

— Այս վայրկյանիս։ Մեր դարձը իսկույն անհրաժեշտ է՝ ըսի. բայց խնդիրն ան է, որ Արտաշեսը համոզել չենք կրնար. անպատճառ դեռ մնալ կուզե։ Մտածեցի դիմեմ ձեզի. ա՛ն, ըստ երևույթին, ձեզի կհարգե ու ձեր խոսքին կարևորություն կուտա։ Եթե դուք անգամ մը անոր ըսեիք, որ անիմաստ համառություն չընե, հավանական է, որ համոզվի։

Պարզ էր այդ բառերուն իմաստը։ Բայց Շուշիկ ոչինչ չհասկընալ ձևացուց.

— Կներե՛ք սակայն, պարո՛ն. ինծի ինչ կվերաբերի ուրիշի գործերուն մեջ խառնվիլ։ Պարոն Սիրաքյանը երեխա չէ. եթե երթալ չուզեր՝ երևի իր պատճառներն ունի։ Եվ վերջապես եթե իր մտերիմ ընկերներուն կհակառակի, ի՞նչ ըսելով օտար աղջկան մը խոսքին կարևորություն պիտի տա։

— Դուք անոր վրա ազդեցություն ունիք.— հնչեց տղու չոր ու կտրուկ պատասխանը։

Շուշիկ բռնազբոսիկ ծիծաղով մը սկսավ խնդալ բարձրաձայն։

— Ինչո՞ւ կխնդաք, օրիո՛րդ. ինքնե՛րդ ալ շատ լավ գիտեք, անշուշտ։

Ասիկա արդեն շատ նման էր հանդիմանության ու աղջիկը լրջացավ։

— Ես ոչինչ չգիտեմ և ոչինչ ալ գիտնալ չեմ ուզեր ձեզմե. ուրիշի գործերուն մեջ խառնվիլ չեմ սիրեր. վերջ տանք այս անհամ խոսակցության։

Ու նեղսրտած վերցուց գիրքը ծունկերուն վրայեն ու նետեց քովի քարին վրա։

Վարդապետացուն մտածեց վայրկյան մը և իր պարտականությունը կատարողի մը անողոք շեշտովը ըսավ հատիկ-հատիկ.

— Այո՛. գործի մեջ չեք խառնվիր, երբ կատարված սխալ քայլը կերպ մը ուղղել պետք է. իսկ երբ այդ սխալ քայլը պիտի կատարվի, այն ատեն գործի մեջ կխառնվի՛ք, օրիո՛րդ։

Շուշիկ դայրույթեն ցատկեց ոտքի։

— Ի՞նչ ըսել կուզեք, պարո՛ն. և ո՞վ եք դուք. ի՞նչպես կհամարձակիք երեսիս գալ ավետարան կարդալու։

— Ես Արտաշեսի պաշտոնակիցն եմ ու ընկերը.— եղավ սառն ու հանդարտ պատասխանը։

Աղջիկը կարծես տեսակ մը սթափեցավ. ու հպարտ արհամարհանքով մը ավելցուց.

— Չի հետաքրքրեր ինծի, թե դուք ինչ եք։

— Սակայն պետք է, որ հետաքրքրե։ Միթե իրա՞վ չեք հասկընար, օրիո՛րդ, որ ընկերս ձեր պատճառով միայն հոսկե հեռանալ չուզեր։

— Կհասկնա՛մ թե ո՛չ, ձեր գիտնալու բանը չէ։

— Իմ գիտնալու բանը չէ՞, երբ ընկերս ձեր պատճառով ամեն սրբություն ոտքի տակ տալ կուզե, իր տված խոսքը, իր ապագան, իր ծրագիրները, իր կոչումը, իր ընկերները։

— Ա՛խ.— թռավ հանկարծ ակամա աղջկան դողդոջ շրթունքներեն։

Քայլ մը ետ գնաց ու կանգ առավ քարացած՝ ձեռքը ծառի բունին. և խոշոր աչքերը լայն բացած գամեր էր խոսակցի դեմքին։

Շուշիկ ամենևին չէր երևակայած, որ խնդիրը արդեն այդ աստիճանի հեռուները հասած ըլլար։ Իսկ վարդապետացուն սիրտ առավ ու մեղմացած ձայնով մը շարունակեց.

— Կտեսնե՞ք, օրիո՛րդ, վախցա՛ք. և ատիկա պատիվ կբերե ձեզի։ Ես արդեն կզգայի կարծես, որ այս բոլորի մեջ դուք գիտակցաբար չէ, որ մեղսակից եք. ես արդեն կգուշակեի, որ դուք ոչինչ տեղյակ չեք։ Արտաշեսը քիչ մը դյուրագրգիռ ու շուտ գրավվող տղա է. այսօր այս բանով, վաղը մեկ ուրիշով. հանդիպեցավ ձեզի, կրթված, պարկեշտ, համեստ աղջիկ մը ու սկսավ երևակայել. պետք է հեռացնել միայն ու անմիջապես խելքը գլուխը կուգա։ Ցավը հոն է, որ մենք հիմա անոր աչքին իր թշնամիներն ենք դարձեր, ինչ որ ըսենք՝ կհակառակի, կընդդիմախոսե. սակայն ձեզի ու ձեր խոսքին պիտի լսե անպատճառ։ Ահա, հիանալի առիթ մը, օրիո՛րդ, ցույց տվեք, թե ի՛նչպես կվարվի պարկեշտասուն հայ օրիորդը։

Իսկ պարկեշտասուն հայ օրիորդը հայացքը ծառերուն մեջեն հեռուն փայլփլող կետի մը հառած՝ թաղվեր էր ինքն իր մեջ. ոչինչ չէր տեսներ, չէր ալ լսեր ոչինչ. միայն կրծքին տակ կեռար հաճույքն ու հպարտությունը։



Հպա՛րտ էր. բարձր կզգար ինքզինքը, շա՛տ բարձր այդ դիմացը կեցած «խեղճուկ» մարդեն. այդ խոշոր, հսկա մարդը իր ցանցառ մորուքին ու բեղերուն մեջեն եկած էր անկե իր ընկերը մուրալու։ Հաճելի գիտակցություն մը սկսավ ողողել Շուշիկի հոգին. գիտակցությունը մը, թե իր հմայքին ու ազդեցությանը տակ տղան արդեն մեկդի նետել կուզեր այդ վարդապետությունը, որ այնքան անախորժ էր աղջկան։ Այն զգացումն ուներ, որ ինքը մեծ կոչում մըն էր կատարած, որ փրկիչ մըն էր ինքը ու հոգի մը ազատած, ազատա՛ծ «այդ կեղծիքի ու միջնադարյան շրջանեն», ազատա՛ծ «այդ խելացի, ազնիվ ու ձեռներեց տղան»։

Հաճույքն ու հպարտությունը վառ կցոլար իր աչքերեն ու կարմրտկած այտին ծլեր էր անգիտակից ժպիտ մը։

Հանկարծ իր այդ ներքին հուզման տակ ա՛լ հանգիստ կենալու անկարող՝ սկսավ արագ երթևեկել վարդապետացուին դիմաց, որ իր խոսքը վերջացուցած անհամբեր պատասխանի կսպասեր և աղջկան դեմքի փոփոխություններն ու հուզումը որոշ չէր գիտեր ի՞նչի վերագրել։

Քիչ մը ատեն երկուքն ալ լուռ էին։

— Ուրեմն, օրիո՛րդ, կրնա՞մ ձեր օգնության վրա հույս դնել։

Աղջիկը կարծես նոր արթնցավ, ձեռքերը ետևեն խաչաձևեց մեջքին ու կուրծքը դուրս՝ կանգ առավ տղուն դեմ։

— Հիմա դուք ի՞նչ կկամենաք ինծմե, պարո՛ն։

— Կխնդրե՛մ, աշխատիք Արտաշեսը համոզելու, որ հնար եղածին չափ շուտ հոսկե մեկնիլ կարողանա։

— Ա՞յդչափ։

— Այո՛, օրիո՛րդ։

Շուշիկ ակնթարթ մը շեշտ նայեցավ տղուն ու հատակ ձայնով մը պատասխանեց հաստատ.

— Վաղը առտու ձեր ընկերը ձեզի հետ միասին հոսկե կմեկնի։

— Ուրեմն կխոստանաք համոզելու, որ իր ըրածը անխելքություն է ու համոզելու...

— Վաղը առտու ձեր ընկերը ձեզի հետ հոսկե կմեկնի.— կրկնեց աղջիկը հրամայական ու արհամարհական շեշտով մը։

Տեսակ մը հարգանք ու ակնածում սպրդեցավ հանկարծ Մինասի հոգին դիմացինի այդ խրոխտ ու ինքնագիտակից խոսվածքին ու դիրքին դեմ։

— Սրտագին շնորհակալությունս, օրիո՛րդ Մելինյան, ես ձեր այդ ազնիվ վարմունքը երբե՛ք...

— Թողե՛ք, խնդրե՛մ։ Ուրիշ ըսելիք մը ունի՞ք։

— Ո՛չ, օրիո՛րդ։

— Այն ատեն... ներեցե՛ք։

Ու վերցուց գիրքը քովի քարին վրայեն։

— Անշուշտ, Արտաշեսին ոչինչ չեք ըսեր մեր այս խոսակցության մասին. թե չէ գործը բոլորովին կծռի։

— Ապահով եղեք։

Ու սկսավ արագ գիրքը բանալ։

Վարդապետացուն ձեռք տալ կուզեր, բայց տեսնելով, որ աղջիկը իր կողմն անգամ չէր նայեր, գլխարկով թեթև մը բարևեց ու հեռացավ։

«Ալ շատ չեմ զարմանար,— կմտածեր,— թե ինչպես Արտաշեսը խելույն խելքեն ելավ. այս աղջիկը ամեն բան կրնա ընել. դև կա այդ աղջկան մեջ։ Բայց..., ի՛մ տղաս, արդարամտության և ճշմարտության առջեն ա՛ն ալ այդպես կխոնարհի»։

## ԺԶ

Քանյաններուն սենյակը նույն լամպի լույսին տակ, նույն մաքուր սեղանին շուրջը նստած էին պարոն Նիկողոսը և իր նույն երեք հյուրերը։

Առատ կբարձրանային նոր լեցված թեյերուն գոլորշիները ու կհոսեր աշխույժ խոսակցություն մը։ Կխոսեին ազգային ու քաղաքական հարցերու շուրջ. կարծես խոսք մեկ էին ըրած, ոչ մեկ ակնարկություն վանքի, կրոնի ու հոգևորականության մասին, որ նախորդ հանդիպումներու ժամանակ բնական կերպով խոսակցության առանցքը կկազմեր։

Խոսակցության մասնակից չէր միայն Արտաշեսը։ Սեղանին մեկ անկյունը քաշված, գլուխը կախ, ումպ-ումպ իր թեյը կխմեր, նույնիսկ առանց անոնց խոսքին հետևելու։ Տեսակ մը ցրված էր, նեղսիրտ և անդադար ոտքը կշարժեր։

Արդեն ամբողջ օրը անսովոր տրամադրության մը մեջ էր եղած։



Ցորեկը գացեր էր Շուշիկը պտույտի տանելու, բայց փոխանակ սովորականին պես գլխարկին ասեղը անցընելով աղջիկը իր դեմը շտապելու, դուռը ելեր էր տիկինը երեխան գրկած ու տարօրինակ ժպիտ մը շրթունքին հայտներ էր, թե քույրը այսօր քիչ մը անհանգիստ է ու պառկեր է կազդուրվելու։

Տղան գլխահակ դարձեր էր ետ ու ձորին մեկ խուլ անկյունը նետվեր էր գետին։ Ալ ինչե՞ր ըսես չէր անցեր մտքեն. ենթադրություն ենթադրության վրա։ Արդյոք Շուշիկը վշտացա՞ծ էր իրմեն. ինչո՞վ կրնար վիրավորած ըլլալ. գուցե երեկվան իր վարմունքը ձորին մեջ. բայց չէ՞ որ այնպես զվարթ ու կատակով բաժնվեր էին նախորդ գիշերը իրարմե։

Իրիկվան դեմ հազիվ մութը գետինն առած՝ կիզիչ անհամբերությամբ Քանյաններուն երթալու կպատրաստվեր, երբ Մինաս հայտնեց, թե այս իրիկուն իրենք ալ միասին գալ կուզեն, թե ինքն ու Սերոբ վճռեր են արդեն հաջորդ առտու անպատճառ խծկոնքեն մեկնիլ, որով քիչ մը անքաղաքավարի կըլլար առանց մնաք-բարովի հեռանալը։ Արտաշես դժգոհությունեն ակռաները սեղմած, առանց ոչինչ առարկելու, միացավ ընկերներուն։

Եվ ահա կես ժամեն ավելի էր նստած էին հոն ու կխոսակցեին, և Արտաշես իզո՛ւր ամեն դուռը շարժվելուն այն կողմ կնայեր. Շուշիկ ներս չէր գար։

Երբ անգամ մը նորեն, իր սպասածին հակառակ, փոխանակ աղջկան կրկին տիկինը սենյակ մտավ, տղան ալ համբերել չի կրցավ ու հարցուց.

— Օրիորդի անհանգստությունը դեռ չանցա՞վ, տիկի՛ն։

— Իրա՛վ, Շուշիկը ո՞ւր է, մեջտեղ չկա.— հարցուց Քանյան իր կողմեն։

— Ներսը նստեր կկարդա.— պատասխանեց կինը։

— Է՞հ, ի՛նչ կարդալու ատեն է հիմա. ըսե՛ թող գա՛ թեյը խմե։

— Կարծես անոր բնավորությունը չգիտես։ Ըսի՝ չեկավ, ախորժակ չունիմ, կըսե։ Պնդելը ավելորդ է. ան որ չէ ըսավ, չէ պիտի ըլլա։

Ու Քանյան դժգոհ դեմքով մը դարձավ նորեն իր հյուրերուն։

Քիչ մը վերջը խոսակցության տաք միջոցին էր, որ տիկինը նորեն երևցավ միջանցքի դուռնեն ու կանչեց.

— Պարո՛ն Աքբաքյան, վայրկյան մը դուրս կուգա՞ք։

Տղուն սիրտը նեղուեցաւ. արագ վար դրաւ ձեռքէն դգալը, որով թէյին երեսի երկու-երեք փրփուրի հատիկներուն հետ կխաղար, ու ցատկեց դուրս։

— Ինչո՞ւ այդպես խոժոռ նստած էք և ոչինչ չեք խոսիր.— հարցուց տիկինը սենյակին դուռը կրկին գոցելէ վերջը։

— Այսօր խոսողներ շա՛տ կան, խոսակցության նյութն ալ շատ մաշված է.— պատասխանեց տղան քմայնոտ։

— Եթե այդպես է՝ անցե՛ք դուրս. Շուշիկն ալ դուրսն է.— ըսավ տիկինը շատ մասնավոր ժպիտով մը։

— Դո՞ւրս.— բացականչեց տղան մատովը տան դուռը ցույց տալով։

— Այո՛.— գլխով ըրավ տիկինը։

Արտաշես երկու ոստյունով սեմեն դուրս նետվեցավ, բայց թափով կանգ առավ խեկույն։

Գիշերվան թարմ զովության մեջ, լեցուն լուսնի ողողուն լույսին տակ կեցած էր աղջիկը, ժաքեթը ուսերուն, թևերը ծալլած կրծքին, գլխաբաց ու աչքերը տղուն, արձանի դիրքով մը, ուրկե թունդ-սև ստվեր մը ինկեր էր գետին՝ լուսնի թափած ճերմակության վրա։

Սանդ քայլերով մոտեցան իրարու ու ձեռք տվին։

— Այսօր հիվանդ էի՞ք.— առաջինը տղան խզեց լռությունը ցած ու տխուր ձայնով մը։

— Իսկ դո՞ւք ինչ ըրիք։

— Ի՞նչ պիտի ընեմ միս-մինակ. ձանձրացա։

— Մինա՞կ, ինչո՞ւ. ձեր ընկերները հոս չէի՞ն։

— Ես ընկեր չունիմ այլևս, ո՛չ ընկեր, ո՛չ բարեկամ, ես մինակ եմ, բոլորովին մինակ։ Երեկ գոնե կկարծեի, թե ընկերուհի մը ունիմ, բայց այսօր համոզվեցա, որ չարաչար սխալած եմ. այդ իմ միակ ընկերուհիս ալ սուտ-հիվանդ կդառնա ու ինծմե խույս կուտա։

Ու ասիկա բսված էր այնպիսի ուռած, քմայնոտ ու տրտունջի շեշտով մը, որ Շուշիկ չի կրցավ ինքզինքը զսպել, խնդաց ու նորեն բռնեց տղուն ձեռքը։ Եվ առանց բաց թողնելու՝ ըսավ տեսակ մը մայրական խոսվածքով.

— Ինծի նայեցե՛ք, պարո՛ն Սիրաքյան. որ այսօր սուտ-հիվանդ ձևացա՝ շիտակ է. և ասկե վերջն ալ շարունակ նույն սուտ-



հիվանդը պիտի ձևանամ։ Արդեն առոր մասին խոսելու համար ձեզի դուրս կանչեցի։ Մեկ խոսքով՝ մեր հարաբերության պետք է վերջ դնել. կա՛րճ ու կտրո՛ւկ։

— Ի՞նչ...

Ու անզգամալույծ շարժումով մը ձեռքը աղջկան ձեռքեն ետ քաշեց։

— Ինչո՞ւ այդպես զարմացաք, բարեկա՛մս. չէ՞ որ մեր հարաբերությունը կարվի պիտի երկու օր ուշ կամ կանուխ։ Վաղը կամ մյուս օրը դուք պիտի երթաք աչ, ես՝ ձախ. որքան շուտ կըտրենք, այնքան լավ։ Վերջապես մտածեցեք անգամ մը, ի՞նչ տեսակ կապ կրնա գոյություն ունենալ մեր մեջը. վարդապետի մը ու մանկաբարձուհիի՝ մը մեջ։

Ու վերջին երկու բառերը շեշտվեցան մասնավորապես պարզ։

— Ա՜խ, եթե ատ է բոլորը.— բացականչեց Արտաշես զվարթ զարկով մը։— Իմ վարդապետությունս, օրիո՛րդ, խծկինք ատք գրած օրս մեռավ ու երեկ թաղեցի. մնացեր է հոգեհանգիստը միայն։

Շուշիկ հազիվ կզսպեր խնդուքը։

— Ի՞նչ ըսել կուզեք։

— Ձեր ցանկությունը կատարվեցավ, օրիո՛րդ։ Այլևս ես ինքս ալ կրոնավոր ըլլալու մեջ հրապույր չեմ գտներ։ Իմ կազմիս ու հակումներուս բանը չէ. վճռած եմ թողնել։

— Ա՜խ, ատոնք սիրուն խոսքեր են, որոնք չեն իրագործվիր։

— Ինչո՞ւ կկարծեք։

— Դուք խոսք եք տված. ձեր գաղափարները ունիք և ժողովուրդին ծառայելու ծրագիրներ։

— Շատ բան է փոխված, օրիո՛րդ։ Տված խոսքս արդեն կոտրած եմ. իմ գաղափարներս ունիմ միշտ, նետած եմ մեջեն իմս չեղող գաղափարները. իսկ ժողովուրդիս ծառայելու կփնտրեմ նոր ճամփա։

— Այդպե՞ս. և ի՞նչ ըսել է հիմա ձեր նպատակը. ի՞նչ գործի կուզեք ձեռնարկեք. դուրսը ոչինչ պատրաստ չեք գտներ. դուրսը պետք է հոգ տանիք ու մտածեք։

— Ես մտածած եմ արդեն ամեն բան. պիտի գրեմ մեծ եղբորս, որ ինծի քիչ մը օգնե, հոսկե կերթամ Էջմիածին. վերջնականապես կմաքրեմ հաշիվներս ու կշտապեմ շիտակ Թիֆլիս։

— Ինչո՞ւ անպատճառ Թիֆլիս.— ընդհատեց աղջիկը խորամանկ նայվածքով մը։

— Նախ կկարծեմ հոն ինծի համար ավելի դյուրին կըլլա համալսարանի համար պատրաստվիլը և երկրորդ...— Ու լռեց։

— Եվ երկրո՞րդ.— հարցուց աղջիկը։

— Եվ երկրորդ մոտիկ կըլլամ իմ սուտ-հիվանդ եղող միակ բարեկամուհիիս։

Շուշիկ ժպտեցավ։

— Խնդացե՛ք դուք.— բացականչեց տղան մեծ ոգևորությամբ։— Իհարկե հիմա իրավունք ունիք վրաս արհամարհանքով նայելու. տղա՛ մը, որ այսօրվան պաշտպանածը վաղը կհերքե. երեկվան ըսած խոսքը այսօր ոտքի տակ կուտա. ես հիմա թեթևամիտ ու անպետք մեկն եմ ձեր աչքին, չէ՞։ Աղե՛կ. իսկ ես կըսեմ ձեզի, որ ես երբեք այս աստիճանի վստահություն զգացած չէի իմ մեջս՝ իմ սեփական ուժերուս վրա. ես հաստատ գիտեմ այս վայրկյանիս ու կրնամ ձեզի խոսք տալ, որ ինծմե բան մը դուրս պիտի գա։ Եթե կուզեք նորեն խնդացեք դուք, բայց ես տարակույս չունիմ. շատ չանցած ձեր սրտի հարգանքն ու մտերմությունը խլեմ պիտի ամբողջովին։ Եվ երբ ասկե տարի մը վերջը նորեն այսպես իրիկուն մը գամ ձեզի մնաք-բարով ըսելու, որ հաջորդ առտու մեկնիմ Մոսկվա բժշկական ֆակուլտետ, դո՛ւք այլևս առանց վարանքի ձեր ամբողջ սրտովը ձեր ձեռքը մեկնեք պիտի ինծի։

— Ճի՛շտ, ինչպես այս վայրկյանիս.— կցեց աղջիկը ջերմ ու սրտագին շեշտով մը՝ երկու ձեռքը տղուն մեկնելով։

Տղու թափը բեկավ իսկույն. ակնթարթ մը վարանոտ նայեցավ շիտ աղջկա աչքերուն և հանկարծ անզուսպ ուրախությամբ մը խլեց անոր պարզած ձեռքերը ու սկսավ խենթի պես սեղմել։

Վայրկյան մը միայն։

Վերջը երկուքն ալ իրենց հայացքը ձգեցին գետին. ու գլուխները թեթև մը վար խոնարհեցան. բայց ձեռքերը դեռ ամուր բռնած էին իրար։

Առաջին սթափողը աղջիկը եղավ. կամաց մը ազատեց ձեռքը, ու մեղմ ձայնով մը հարցուց.

— Ուրեմն վաղը առտու կմեկնիք էջմիածին։

— Վա՞ղը. երբե՛ք։ Քանի դուք հոս եք, հոս եմ և ես։



— Բայց որքան շուտ վանք վերադառնաք, այնքան ավելի շուտ կըլլաք Թիֆլիս, ձեր միակ բարեկամուհիին մոտ.— կրկնեց տղուն խոսքերը գրավիչ հեգնությամբ մը։

Ժպտեցավ Արտաշես ալ. մինչ աղջիկը ձայնի չարաճճի խաղով մը ավելցուց.

— Հո՛ն, դո՛ւք ձեր համալսարանի պատրաստության, ես ալ իմ աշխատություններուս մեջ. վերջապես իրարու օգնել ալ կրնանք, հիմա մեր մասնաճյուղերը իրարմե այնպես հեռու չեն, ինչպես առաջ։

— Այդ պայմանով ես կմեկնիմ այս վայրկյանիս.— բացականչեց տղան ձեռքի ուժգին ու աշխույժ շարժումով մը։

— Մինչև վաղը առտու կարելի է ուշացնել.— կատակեց աղջիկը։— Բայց վաղը առտու անպատճառ, ձեր ընկերներուն հետ միասին։ Եվ մենք այլևս հոս իրարու չենք հանդիպիր։

— Ուրեմն ցտեսությո՛ւն. Թիֆլի՛ս։

Նորեն սեղմեցին իրարու ձեռք. աղջիկը գլխով ըրավ. և լուսնի աղոտ լույսին մեջեն իր սեփ-սև սավերին հետ մտավ տուն։

Սիրաքյան դեռ վայրկյան մը քարացած մնաց իր կեցած տեղը, աչքերը հառած դռան, ուրկե Շուշիկ ներս էր անցեր։

Հանկարծ սթափեցավ կարծես ու խայտացող անհամբերությամբ մը մտավ սենյակ ու դարձավ ընկերներուն.

— Բայց կարծեմ ժամանակ է պառկելու, քանի որ պետք է կանուխ ճամփա ելնանք, արևը չելած։

— Ուրեմն հաստա՛տ կմեկնի՞ք վաղը.— հարցուց Քանյան մյուս երկուքին դիմելով։

— Այո՛.— պատասխանեց Արտաշես անոնցմե առաջ։

Երկու վարդապետացուները իրարու նայեցան։

Երկարահասակի դեմքին գոհունակության ժպիտ մը կխաղար։ Եվ աչքովը թեթև կծկում մը ըրավ ընկերոջը. «Տեսա՞ր». ըսել կուզեր կարծես։

Ելան ոտքի ու հրաժեշտ առնելու սկսան։

Քանյան ընկերացավ մինչև տան դուռը. հրավիրեց պարոնները անպատճառ իր տունը այցելել, երբ Ալեքսանդրապոլ գալու ըլլան։

Տղաքը վերջին անգամ մը ձեռք տվին, օրիորդին իրենց բարևը տալ խնդրեցին և ուղղվեցան դեպի իրենց սենյակը։

Երբ առանձին էին մնացեր, Մինաս տեսակ մը քնքշությամբ դարձավ ընկերոջը.

— Արտաշե՛ս, ես գիտեմ, որ ընկերներուդ սիրտը պիտի չկոտրես ու միասին պիտի գաս. ես գիտեմ, որ պիտի մտածես՝ դուն ազնիվ ու խելացի տղա ես։ Ա՛լ օդին տանք մեր մեջ եղած բոլոր հիմար խոսակցությունները։ Ուրեմն վաղը առտու կիջնենք Տեկոր, կվերցնենք ձիերը ու անմիջապես ճամփա կիյնանք։

— Այո՛.— ըրավ տղան կարճ։

— Ձեզի բան մը ըսեմ, ես այլես հոգնեցա այս թափառելեն. մանավանդ Անին ու շրջակայքը ավելի երկար ժամանակ կպահանջեն. հառաջիկա գարնան կուգանք. իսկ հիմա շիտակ երթանք էջմիածին։ Չե՞, ի՞նչ կըսես, Արտաշե՛ս.— հարցուց Սերոբ՝ Մինասի հետ կանխապես պատրաստած դերը վարպետությամբ կրկնելով։

— Այո՛, շիտա՛կ էջմիածին։

Սերոբ հաջողութենեն շլացած՝ գաղտուկ մը Մինասի ձեռքը սեղմեց քովեն։

Երեքը միասին մտան վանք։

Արտաշես առջևեն մտածկոտ քայլերով, զույգն ալ անոր ետևեն։

Եվ երբ իրենց սենյակի սեմեն ներս պիտի մտնեին՝ Մինաս ծռեցավ կամաց մը ընկերոջը ականջին.

«Ազատեցինք»։